



Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

**ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ՀԱՐԿԱԴԻՐ
ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ
ՃԱՆԱԶՈՒՄԸ.
ԱՐԲԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

(ՁԵՌՆԱՐԿ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ՀԱՐԿԱԴԻՐ
ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ
ՃԱՆԱԶՈՒՄԸ.

ԱՐԲԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

(ՁԵՌՆԱՐԿ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 341.6:347.99(07)

ԳՄԴ 67.910.821+67.410.12g7

Ա 855

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն,
«Արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը և չեղյալ ճանաչումը»
Արբիտրաժին դատական աջակցությունը», 1-ին խմբագրությամբ - Երևան,
2024 - 165 էջ:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի մշակած սույն ձեռնարկում տեսական աղբյուրների, միջազգային լավագույն փորձի, ներպետական դատարանների դատական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության հիման վրա ներկայացվում են արբիտրաժային վճռի հարկադիր կատարման և չեղյալ ճանաչման հարցերում դատարանի դերը, ինչպես նաև արբիտրաժային վարույթի շրջանակում դատական աջակցության օրենսդրական հիմքերն ու դրանց կիրառման առանձնահատկությունները, փորձ է արվում ամփոփելու այդ հիմքերի կիրառման վերաբերյալ ներպետական և օտարերկրյա դատարանների տված մի շարք մեկնաբանություններ՝ համեմատական վերլուծություն կատարելով:

Նախատեսված է դատավորների համար և նպատակ ունի ներկայացնելու նկարագրվող իրավիճակների և արժարժվող հարցերի վերաբերյալ ձևավորված միջազգային չափանիշներն ու փորձը, ինչպես նաև հեղինակավոր մասնագետների կարծիքները: Ձեռնարկը կարող է որպես մեկնաբանական նյութ կիրառելի լինել ինչպես դատարանների՝ տեղական արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման և չեղյալ ճանաչման, այնպես էլ արբիտրաժի համար՝ դատական աջակցության առնչությամբ լիազորությունները կատարելիս:

ISBN 978-9939-1-1964-9



9 789939 119649

© **Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:**

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն (AMCA), 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
ԲԱԺԻՆ 1. ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ	15
ԳԼՈՒԽ 1. ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՎՃՌԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՎՃԻՌԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ	15
§1. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարումը մերժելու և վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի ընդհանուր բնութագիրը	15
§2. Կողմի անգործունակությունը և արբիտրաժային համաձայնության անվավերությունը	24
§3. Ծանուցման բացակայությունը և գործ ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելը	36
§4. Վճռի կայացումն այնպիսի վեճով կամ հարցերով, որոնք նախատեսված չեն արբիտրաժային համաձայնությամբ, չեն համապատասխանում դրա պայմաններին կամ դուրս են դրա սահմաններից	48
§5. Արբիտրաժային տրիբունալի կազմին և ընթացակարգին ներկայացվող պահանջների խախտումը	55
§6. Արբիտրաժային վճռի պարտադիր դարձած չլինելը, չեղյալ ճանաչվելը և կատարումը կասեցված լինելը	66

§7. Վեճի առարկան արբիտրաժով լուծման ենթակա չլինելը	71
§8. Հանրային կարգի վերապահումը	77
ԳԼՈՒԽ 2. ԱՐԲԻՏՐԱԺԻ ՎՃԻՌԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ	83
ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ	83
ԳԼՈՒԽ 3. ԱՐԲԻՏՐԱԺԻ ՎՃՌԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ ՏԱԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ	92
ԳԼՈՒԽ 4. ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ	101
ԲԱԺԻՆ 2. ԱՐԲԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	115
ԳԼՈՒԽ 1. ԱՐԲԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ	115
§1. Արբիտրաժի կողմի միջնորդության հիման վրա հայցի ապահովման միջոց	115
կիրառելու մասին որոշման կայացումը	115
§2. Դատարանի՝ արբիտրի նշանակումը	122
§3. Դատարանի՝ արբիտրին հայտնաձ բացարկի վերաբերյալ որոշման կայացումը	132
§4. Դատարանի՝ արբիտրի լիազորությունների դադարեցմա մասին որոշման կայացումը	143
§5. Դատարանի՝ արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցի վերաբերյալ որոշման կայացումը	148
§6. Դատական աջակցությունը ապացույցներ ձեռք բերելիս	155
ԳԼՈՒԽ 2. ԱՐԲԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ	160

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք ունի: Հայաստանի Հանրապետությունում (այսուհետև նաև՝ ՀՀ) սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ինչպես դատական, այնպես էլ դրանից տարբերվող մի շարք եղանակներով:

ՀՀ իրավական համակարգում գործում են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այլընտրանքային հետևյալ ձևերը՝ հաշտարարական, հասարակական, վարչական, արբիտրաժային ևն:

Անդրադառնալով իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևին՝ նշենք, որ այն այսօր ամբողջ աշխարհում դարձել է իրավունքների պաշտպանության առավել նախընտրելի և տարածված ձև: Պատճառները բազմաթիվ են. արբիտրաժը հնարավորություն է տալիս կողմերի միջև առաջացած վեճը լուծելու անհամեմատ ավելի սեղմ ժամկետում, սահմանելու վեճը լուծող արբիտրներին ներկայացվող պահանջներ, ընտրելու նրանց, վարույթի և վեճի նկատմամբ կիրառելի իրավունքը ևն: Հատկանշական է այն հանգամանքը, որ արբիտրաժի միջոցով կայացված որոշումները այլ երկրներում ճանաչման և կատարման ավելի մեծ հնարավորություն ունեն, քան դատական ակտերը¹:

¹ Մասնավորապես «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիան այս պահին վավերացրել են 172 պետություններ, այդ

ՀՀ-ում արբիտրաժին առնչվող հարցերը կարգավորող հիմնական ներպետական իրավական ակտերն են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը² (այսուհետև նաև՝ Օրենք) և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը³ (այսուհետև նաև՝ ՀՀ ՔԴՕ): Օրենքն ընդունվել է «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի 1985 թվականի մոդելային օրենքի (այսուհետև նաև՝ Մոդելային օրենք) հիման վրա, և նորմերի հիմնական մասն ուղղակիորեն վերցված է Մոդելային օրենքից: ՀՀ-ն անդամակցել է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիային (այսուհետև նաև՝ Կոնվենցիա), որով կարգավորվում են օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչմանն ու կատարմանը վերաբերող հարցերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁴ (այսուհետև նաև՝ ՀՀ ՔՕ) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը: Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «արբիտրաժային տրիբունալ» նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ: Օրենքը, «արբիտրաժային տրիբունալ» հասկացությունից բացի, 2-րդ հոդվածի 1-ին կետով առանձնացնում է նաև «արբիտրաժ»

թվում՝ Հայաստանի Հանրապետությունը: Օտարերկրյա դատական ակտերի ճանաչմանն ու կատարմանն առնչվող հարցեր կարգավորող նման բազմանդամ միջազգային պայմանագիր դեռևս գոյություն չունի:

² Ընդունվել է՝ 25.12.2006, ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 10.02.2007:

³ Ընդունվել է՝ 09.02.2018, ուժի մեջ է մտել՝ 09.04.2018:

⁴ Ընդունվել է՝ 05.05.1998, ուժի մեջ է մտել՝ 01.01.1999:

հասկացությունը՝ բնորոշելով որպես ցանկացած արբիտրաժ, որն իրականացվում է մշտապես գործող արբիտրաժային հաստատության միջոցով կամ առանց նման հաստատության⁵:

Արբիտրաժը վեճերի այլընտրանքային լուծման եղանակ է, որտեղ վեճի կողմերը համաձայնում են իրենց միջև առկա վեճը հանձնելու մեկ կամ մի քանի անկախ և անկողմնակալ անձի՝ արբիտր(ներ)ի: Արբիտրաժային տրիբունալի պարտականությունն է առանց անհարկի ձգձգումների լուծել կողմերի միջև առկա վեճը՝ կողմերին հավասար հնարավորություն տալով և վերջնական ու պարտադիր ուժ ունեցող վճիռ կայացնելով:

Կարևոր է տարբերակել «արբիտրաժային տրիբունալ» և «արբիտրաժային հաստատություն» հասկացությունները: Մասնավորապես՝ եթե արբիտրաժային տրիբունալը այն արբիտր(ներ)ի կազմն է, որը լուծում է կողմերի միջև առաջացած վեճը, ապա արբիտրաժային հաստատությունը որոշակի կազմակերպափրավական ձև ունեցող իրավաբանական անձ է, որը կազմակերպում է արբիտրաժի իրականացումը: Ընդ որում՝ արբիտրաժը կարող է կազմակերպվել նաև առանց արբիտրաժային հաստատության: Հենց այս չափանիշն էլ հիմքում ունենալով՝ Օրենքն արբիտրաժները դասակարգում է երկու խմբի՝ ա. մշտապես գործող արբիտրաժային

⁵ «Արբիտրաժային տրիբունալ» և «արբիտրաժ» հասկացությունները նման կերպ են բացատրվում նաև Մոդելային օրենքում, տե՛ս նշված օրենքի 2-րդ հոդվածի «ա» և «բ» կետերը:

հաստատության միջոցով իրականացված արբիտրաժ, ք. առանց նման հաստատության իրականացված՝ ad hoc արբիտրաժ⁶:

Հաջորդիվ հիմքում ունենալով այն չափանիշը, թե արբիտրաժի վայրը եղել, և արբիտրաժային վճիռը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, թե դրանից դուրս, Օրենքն արբիտրաժները բաժանում է երկու խմբի՝ ներպետական և օտարերկրյա⁷: Այս տարբերակումն ունի գործնական նշանակություն: Մասնավորապես, ի տարբերություն օտարերկրյա արբիտրաժային վճիռների, ներպետական արբիտրաժի միջոցով կայացված արբիտրաժային վճիռները ճանաչվում են պարտադիր օրենքի ուժով, և դրանց ճանաչման համար դատարանի առանձին որոշում պետք չէ⁸: Այնուհետև,

⁶ Տեսական գրականության մեջ, ինչպես նաև պրակտիկայում առավել հաճախ օգտագործվում է «ad hoc» տերմինը՝ բնորոշելու, որ արբիտրաժը ստեղծվել է կոնկրետ վեճի լուծման համար և չի իրականացվում հաստատության միջոցով:

Ինչպես պրակտիկայում, այնպես էլ Օրենքում և ՀՀ ՔԴՕ-ում տեղ-տեղ օգտագործվում է նաև «արբիտրաժային դատարան» հասկացությունը, որը, սակայն, օրենսդրական մակարդակում չի պարզաբանվում:

⁷ Մոդելային օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասն առանձնացնում է «միջազգային առևտրային արբիտրաժ» հասկացությունը՝ սահմանելով, թե որ դեպքում է արբիտրաժը համարվում միջազգային: Այնուամենայնիվ, Օրենքում նման տարանջատում չկա:

⁸ Այս առումով հիշատակության արժանի է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴԴ/27884/02/23 գործով 2023 թ. սեպտեմբերի 4-ի որոշումը, որով դատարանը համարել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող արբիտրաժների վճիռները ճանաչելու կարգ նախատեսված չէ:

եթե առկա են Օրենքով նախատեսված պայմանները, ապա ներպետական արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման համար դիմում ներկայացվում է ոչ թե դատարանին, այլ այն մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը, որն իրականացրել է արբիտրաժը: Հաջորդիվ՝ ՀՀ ՔԴՕ-ով ներպետական և օտարերկրյա արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման համար ներկայացված դիմումներով նախատեսված են տարբեր վարույթներ⁹:

Արբիտրաժի միջոցով վեճի լուծման արդյունավետության մասին խոսելիս կարևոր է նախևառաջ անդրադառնալ արբիտրաժին դատական միջամտության թույլատրելիության և մասնակցության սահմանների հարցերին: Ինչպես նշում է Գարի Բոռնը, արբիտրաժի կարևորագույն պայմանն այն է, որ կողմերը և արբիտրները հնարավորություն ունենան վեճը լուծելու իրենց որոշած կարգով և վերջնական որոշում ունենան, որն էլ այնուհետև կարող է վիճարկվել դատարանում: Ընթացակարգային որոշումները բողոքարկելու հնարավորությունն արբիտրաժի համար ծայրահեղ բացասական հետևանքներ կունենար: Դրանից խուսափելու նպատակով ինչպես Կոնվենցիայով, այնպես էլ միջազգային և ներպետական

դատարանը կարող է քննարկել և ճանաչել միայն օտարերկրյա արբիտրաժի վճիռները:

⁹ Ներպետական արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումներով գործերի վարույթին առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՔԴՕ-ի 46-րդ գլխով, իսկ օտարերկրյա արբիտրաժի վճիռների ճանաչման և հարկադիր կատարման դիմումներով գործերի վարույթին առնչվող հարաբերությունները՝ ՔԴՕ-ի 47-րդ գլխով:

այլ իրավական ակտերով ուղղակիորեն կամ անուղղակիորեն նախատեսված է արբիտրաժին դատական միջամտության արգելքի սկզբունքը¹⁰:

Դատական միջամտության արգելքի սկզբունքը ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է Օրենքի 5-րդ հոդվածով, որը, Մոդելային օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան, նախատեսում է Օրենքով կարգավորվող հարցերին դատական միջամտության սահմանները՝ թույլատրելով դատական միջամտություն միայն Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դեպքերում: Անդրադառնալով արբիտրաժին դատական միջամտության և արբիտրաժային տրիբունալի անկախության հարցերին՝ Փարիզի վերաքննիչ դատարանը համարել է, որ արբիտրների անկախությունն իրենց լիազորություններն իրականացնելիս պետք է պաշտպանվի այնպես, ինչպես դատավորներինը, իսկ արբիտրաժային տրիբունալի գործունեությունը պետք է զերծ մնա ինչպես այն ձևավորած կազմակերպության, այնպես էլ դատարանի միջամտությունից¹¹:

Օրենքի և ՔԴՕ-ի կարգավորումների համակարգային վերլուծությամբ կարելի է արձանագրել, որ դատական միջամտությունն Օրենքով կարգավորվող հարցերին կատարվում է երկու եղանակով՝ արբիտրաժին դատական աջակցություն և արբիտրաժի նկատմամբ վերահսկողություն:

Արբիտրաժին դատական աջակցություն է ցուցացաբերվում հետևյալ հարցերի վերաբերյալ դատարանի որոշման պարագայում.

¹⁰ Gary Born, *The Principle of Judicial Non-Interference in International Arbitral Proceedings*, 2009, p. 1033.

¹¹ Նույն տեղում, էջ 1031-1032:

- արբիտրաժի կողմի միջնորդության հիման վրա հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ (Օրենքի 9-րդ հոդված),

- արբիտր նշանակելու վերաբերյալ (11-րդ հոդվածի 3-րդ մաս),

- եթե արբիտրների նշանակման ընթացակարգի շուրջ համաձայնությունը չի նախատեսում նշանակումն ապահովող այլ միջոցներ, ապա՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ (11-րդ հոդվածի 4-րդ մաս),

- արբիտրին հայտնված բացարկի վերաբերյալ (13-րդ հոդվածի 3-րդ մաս),

- արբիտրի լիազորությունների դադարեցման վերաբերյալ (14-րդ հոդված),

- արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցի վերաբերյալ (16-րդ հոդվածի 3-րդ մաս),

- ապացույցներ ձեռք բերելիս դատական աջակցության վերաբերյալ (27-րդ հոդված):

Արբիտրաժի նկատմամբ վերահսկողություն է սահմանվում՝ հետևյալ դիմումների քննությամբ որոշումներ կայացնելու դեպքում.

- արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ,

- արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ,

- օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ:

Սույն ձեռնարկը բաժանված է երկու բաժինների, որոնցից առաջինը նվիրված է արբիտրաժի նկատմամբ դատական

վերահսկողությանը, իսկ երկրորդը՝ արբիտրաժին դատական աջակցությանը:

Առաջին մասը բաժանված է չորս գլուխների, որոնցից առաջինը նվիրված է արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարումը մերժելու հիմքերին, երկրորդը և երրորդը, համապատասխանաբար, արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու և արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումներով գործերի վարույթներին, չորրորդը՝ հայցի ապահովման մասին որոշումների ճանաչմանն ու կատարմանն առնչվող հարցերին: Առաջին բաժնի առաջին գլուխը բաժանված է առանձին ենթագլուխների, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարումը մերժելու առանձին հիմքի:

Երկրորդ մասը բաժանված է երկու գլուխների, որոնցից առաջինը նվիրված է արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմումներով գործերի վարույթին, իսկ երկրորդը՝ արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու ձևերին:

Սույն ձեռնարկում անդրադարձ չի կատարվում օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ հարցերին:

**ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՌԻ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ
ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶՄԱՆ
ՀԱՐՑԵՐՈՒՄ**

**ԳԼՈՒԽ 1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՎՃՌԻ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՎՃԻՌԸ
ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ**

**§1. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր
կատարումը մերժելու և վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի
ընդհանուր բնութագիրը**

Արբիտրաժային տրիբունալի վճռի չեղյալ ճանաչման հիմքերը նախատեսված են Օրենքի 34-րդ, իսկ վճռի հարկադիր կատարումը մերժելու հիմքերը՝ 36-րդ հոդվածով¹²: Չնայած տարբեր հոդվածներով նախատեսված լինելուն՝ այս հիմքերը բովանդակային առումով և կիրառման առանձնահատկություններով նույնն են: Տարբերությունը միայն այն է, որ, արբիտրաժային վճռի հարկադիր կատարման

¹² Օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված հիմքերը համընկնում են Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված արբիտրաժային որոշման ճանաչման և կատարման մերժման հիմքերին:

առնչվող առանձնահատկություններով պայմանավորված, Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետով սահմանված հարկադիր կատարման մերժման հիմքը, ի տարբերություն նույն հոդվածով նախատեսված մնացած հիմքերի, սահմանված չէ նաև որպես արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման հիմք:

Արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման և հարկադիր կատարման դիմում քննելիս դատարանն իրավասու չէ վճիռը ըստ էության վերանայելու, այլ պարտավոր է պարզել միայն այդ հիմքերի առկայության կամ բացակայության հարցը, նույնիսկ եթե արբիտրները փաստի կամ օրենքի սխալ են թույլ տվել¹³: Այսպես, գործերից մեկով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանն արձանագրել է. «Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա կատարողական թերթ տալու դիմումներով գործերի վարույթը պայմանավորվում է զուտ օրենքի պահանջներով, և դատարանը ոչ թե իրականացնում է վերաքննիչ ատյանի գործառույթ, այլ կատարում է վերոհիշյալ օրենքի դրույթներով վերապահված իր գործառույթները, իսկ վեճի ըստ էության քննությունն արբիտրաժային համաձայնության հիմքով վերապահված է կոնկրետ տրիբունալին, որի կողմից վճռում տրված իրավաբական վերլուծություններին, դիրքորոշումներին ու

¹³ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 108:

փաստերին տրված գնահատականը դատարանի կողմից չի կարող առնվել կասկածի տակ¹⁴»:

Օրենքի 34-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը կարելի է բաժանել երկու խմբի՝ որպես ելակետ ունենալով այն չափանիշը, թե արդյոք դատարանը կարող է դրանց անդրադառնալ սեփական նախաձեռնությամբ, թե ոչ: Մասնավորապես՝ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ինչպես նաև 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքերին դատարանը¹⁵ կարող է անդրադառնալ միայն այն դեպքում, երբ կողմը վկայակոչում է դրանք՝ համապատասխան ապացույցներ ներկայացնելով: Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաև 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերին դատարանը կարող է անդրադառնալ նաև սեփական նախաձեռնությամբ, նույնիսկ եթե կողմը դրանք չի վկայակոչել: Այս մեկնաբանությունը բխում է մատնանշված իրավանորմերում առկա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ինչպես նաև ընդունված է միջազգային պրակտիկայում: Մասնավորապես՝ Կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ-ի (ICCA) ուղեցույցում **(այսուհետև նաև՝ Ուղեցույց)**

¹⁴ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/43573/02/23 գործով 2024 թ. հունվարի 11-ի որոշումը: Նույն դատարանը համանման դիրքորոշումներ է արտահայտել նաև ԵԴ2/40814/02/23 գործով 2023 թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ, թիվ ԵԴ2/40726/02/23 գործով 2023 թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ:

¹⁵ Արբիտրաժին աջակցելու և վերահսկելու իրավասություն ունեցող դատարանին կանդրադառնանք սույն ձեռնարկի հետագա զլուխներում:

նշված է, որ պատասխանողը կրում է ապացուցման բեռը և կարող է ընդդիմանալ վճռի ճանաչմանն ու կատարմանը միայն Կոնվենցիայի հոդված 5(1)-ով սահմանված հիմքերով, իսկ դատարանը կարող է իր իսկ միջնորդությամբ մերժել ճանաչումն ու կատարումը հոդված 5(2)-ով սահմանված հիմքերով¹⁶:

Հաշվի առնելով Կոնվենցիայի նպատակը, մասնավորապես՝ միատեսակ դարձնելու այն չափանիշները, որոնց համաձայն՝ արբիտրաժային վճիռները կատարվում են անդամ երկրներում, Կոնվենցիայի հեղինակներն իրենց առաջ խնդիր են դրել, որ արբիտրաժային վճիռների ճանաչմանն ու կատարմանն ընդդիմանալու հիմքերը նեղ իմաստով մեկնաբանվեն, իսկ կատարման մերժումը հաստատվի միայն լուրջ դեպքերում¹⁷:

Անդրադառնալով արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման մերժման հիմքերի մեկնաբանությանը՝ նշենք, որ Կոնվենցիան չի կարգավորում այն հարցը, թե ինչպես պետք է վարվել, եթե արբիտրաժի կողմը տեղյակ է արբիտրաժային գործընթացի թերության մասին, սակայն արբիտրաժի ընթացքում չի առարկում դրան: Ի տարբերություն Կոնվենցիայի՝ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, Մոդելային օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան, նախատեսում է հետևյալը. եթե կողմին հայտնի է, որ Օրենքի որևէ դրույթ, որի կիրառումը իրենց նկատմամբ կողմերը կարող են սահմանափակել, կամ արբիտրաժային համաձայնության որևէ պահանջ չի

¹⁶ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 109:

¹⁷ Նույն տեղում, էջ 111:

պահպանվել, և, այդուհանդերձ, կողմը շարունակում է արբիտրաժային վարույթը՝ չհայտնելով իր առարկություններն այդպիսի չպահպանման վերաբերյալ առանց անհարկի ձգձգման կամ այդպիսի առարկություն ներկայացնելու համար կոնկրետ ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետի ընթացքում, ապա համարվում է, որ տվյալ կողմը հրաժարվել է առարկություն ներկայացնելու իր իրավունքից: Համանման դրույթներ առկա են նաև մի շարք ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոնների կանոններում, օրինակ՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի (Arbitration and Mediation Center of Armenia (AMCA)) 2023 թվականի խմբագրությամբ Արբիտրաժային կանոնների 44-րդ հոդվածում, Միջազգային առևտրային պալատի (International Chamber of Commerce) 2021 թվականի խմբագրությամբ արբիտրաժային կանոնների 40-րդ հոդվածում, Ստոկհոլմի առևտրաարդյունաբերական պալատի արբիտրաժային կենտրոնի (The Stockholm Chamber of Commerce Arbitration) 2017 թվականի խմբագրությամբ արբիտրաժային կանոնների 36-րդ հոդվածում, Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի (The London Court of International Arbitration) 2020 թվականի խմբագրությամբ արբիտրաժային կանոնների 32-րդ հոդվածի 32.1 կետում, Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնի (The Singapore International Arbitration Centre) 2016 թվականի խմբագրությամբ արբիտրաժային կանոնների 41-րդ հոդվածի 41.1 կետում:

Մոդելային օրենքի 4-րդ հոդվածով (համապատասխանաբար նաև Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով) նախատեսված նորմն իր կիրառությունն է գտել մի շարք

գործերով: Մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության Հյուսիսարևմտյան շրջանի դաշնային առևտրային դատարանը համարել է, որ արբիտրաժային ենթակայության բացակայության վերաբերյալ առարկությունը, որը չի ներկայացվել արբիտրաժի ընթացքում, չի կարող առաջին անգամ արժարժվել կատարման վարույթում: Իսպանիայի Գերագույն դատարանը նշել է՝ ընկալելի չէ այն, որ պատասխանողը «մերժում է արբիտրաժային համաձայնությունն այն հիմքերով, որոնք կարող էին բարձրացվել արբիտրաժի ընթացքում»¹⁸:

Գերմանական դատարանը համարել է, որ եթե կողմը արբիտրաժի ընթացքում հրաժարվել է առարկելու իր իրավունքից, ապա չի կարող առարկություններ ներկայացնել արբիտրաժի հետագա փուլերում, ինչպես նաև վկայակոչել դրանք՝ որպես արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու կամ հարկադիր կատարումը մերժելու հիմք: Ամփոփագրում նշված է, որ այս կանոնը գործում է, եթե արբիտրաժի նկատմամբ կիրառման ենթակա իրավունքում առկա է Մոդելային օրենքի 4-րդ հոդվածի նման կարգավորում¹⁹:

Մոդելային օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված կանոնը կիրառում են նաև որոշ դատարաններ այն դեպքում, երբ կողմը արբիտրաժային վճռի հարկադիր կատարման վերաբերյալ վարույթում իր վկայակոչած հիմքը չի արժարժել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման վարույթի ընթացքում: Այսպես, Բեռլինի վերաքննիչ դատարանը համարել է, որ պատասխանողը (Գերմանիա) չի կարող ապավինել

¹⁸ Նույն տեղում, էջ 113:

¹⁹ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 19, 5-րդ կետ:

Կոնվենցիայով սահմանված մերժման հիմքերին, քանի որ չէր բարձրաձայնել դրանց մասին Ուկրաինայում տեղի ունեցած չեղյալ ճանաչման վարույթի շրջանակում՝ Ուկրաինայի օրենքով սահմանված երեք ամսվա ընթացքում: Դատարանը պատճառաբանել է, որ չնայած Կոնվենցիան էստոպել չի նախատեսում, այնուամենայնիվ կանխարգելման (Präklusion) դրույթը, որը գերմանական իրավունքում սահմանված է ներպետական արբիտրաժային վճիռների համար, կիրառելի է նաև օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման նկատմամբ²⁰:

Անդրադառնանք մեկ այլ հարցի: Դատարանները սովորաբար մերժում են արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը, երբ ընդունում են, որ, համաձայն Նյու Յորքի Կոնվենցիայի, առկա է մերժման հիմք: Այնուամենայնիվ, որոշ դատարաններ համարում են, որ լիազորված են թույլատրելու կատարումը նույնիսկ այն դեպքում, երբ ապացուցվել է կատարման համար կոնվենցիոն մերժման հիմքի առկայությունը: Դատարաններն առհասարակ այսպես են վարվում, երբ մերժման հիմքը վերաբերում է արբիտրաժային վարույթի կանոնների փոքր խախտմանը, այսինքն՝ կիրառվում է de minimis կանոնը: Այս դատարանները հիմնվում են Կոնվենցիայի հոդված 5(1)-ի անգլերեն տարբերակի ձևակերպման վրա, որը սկսվում է «Արբիտրաժային վճռի ճանաչումն ու կատարումը կարող են մերժվել» բառերով: Այս ձևակերպումը առկա է նաև Կոնվենցիայի տեքստի պաշտոնական հինգ տարբերակներից երեքում՝

²⁰ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 113-114:

չինարեն, ռուսերեն և իսպաներեն: Ֆրանսերեն տեքստը նմանատիպ արտահայտություն չի պարունակում և միայն սահմանում է, որ ճանաչումը և կատարումը «seront refusées», այսինքն՝ պետք է մերժվեն: Կոնվենցիայի հայերեն տարբերակում, ինչպես նաև Օրենքում ևս օգտագործվում է «կարող են մերժվել» ձևակերպումը²¹: Այսպես, դատարանը գործերից մեկով համարել է, որ չնայած պատասխանողը չի հրաժարվել առարկելու իր իրավունքից՝ կապված արբիտրաժային տրիբունալի իրավասության բացակայության հետ, այնուամենայնիվ արբիտրաժի վճիռը ենթակա է հարկադիր կատարման, քանի որ արբիտրաժի ընթացքում պատասխանողի իրավունքներն էականորեն չէին խախտվել: Հոնկոնգի բարձր դատարանը գործերից մեկով համարել է, որ դատարանը կարող է արբիտրաժային վճռի հարկադիր կատարման մերժման հիմքի առկայության պայմաններում թույլատրել վճռի հարկադիր կատարումը, եթե թույլ տրված խախտումը չի ազդել գործի ելքի վրա (օրինակ՝ եթե արբիտրաժային տրիբունալին չներկայացված նյութերը, միևնույնն է, չէին փոխի տրիբունալի՝ վեճի լուծման հարցում դիրքորոշումը)²²:

Այսպիսով, միջազգային իրավակիրառ պրակտիկայում արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու և հարկադիր կատարումը մերժելու հիմքերը մեկնաբանվում են բավականին նեղ իմաստով: Մասնավորապես՝ կողմը զրկված է լինում այդ

²¹ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 114-115:

²² UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 174, 9-րդ կետ:

հիմքերը վկայակոչելու իրավունքից, եթե արբիտրաժի ընթացքում չի առարկել դրանց: Ավելին՝ արբիտրաժային վճռի հարկադիր կատարման վարույթի ընթացքում կողմը զրկված է լինում մերժման հիմքերը վկայակոչելու իրավունքից, եթե արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման վարույթի ընթացքում չի արձարժել այդ հիմքերը: Եվ վերջապես, դատարանները կարող են թույլատրել արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը նույնիսկ այն դեպքում, երբ առկա է արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը մերժելու հիմք, եթե թույլ տրված խախտումը էական ազդեցություն չի ունեցել գործի ելքի վրա:

§2. Կողմի անգործունակությունը և արբիտրաժային համաձայնության անվավերությունը

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետերի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարումը մերժելու հիմքերից են արբիտրաժային համաձայնության կողմերից մեկի, ըստ իր նկատմամբ կիրառելի իրավունքի, անգործունակ լինելը, ինչպես նաև կողմերի ընտրած իրավունքի, ընտրած չլինելու դեպքում՝ վճռի կայացման երկրի օրենսդրությամբ արբիտրաժային համաձայնության անվավերությունը:

Անդրադառնալով արբիտրաժային համաձայնության կողմի անգործունակության հիմքին՝ հարկ ենք համարում տալ «անգործունակություն» (Կոնվենցիայում կիրառվում է «incapacity» եզրույթը, որն առավել լայն իմաստ ունի) տերմինի բացատրությունը: Այն Կոնվենցիայի համատեքստում մեկնաբանվում է որպես մտավոր, ֆիզիկական անգործունակություն կամ իրավաբանական անձի կամ անչափահասի անունից հանդես գալու իրավասության բացակայություն, այլ կերպ ասած՝ «պայմանագիր կնքելու իրավունքի բացակայություն»:

Ուղեցույցում որպես օրինակ բերված է այն դեպքը, երբ կիրառելի իրավունքն արգելում է կողմին (օրինակ՝ պետական ձեռնարկությանը) կնքել արբիտրաժային համաձայնություն որոշակի տեսակի վեճերի համար (որոշ երկրներում պետական ձեռնարկությանը կարող է օրենքով արգելվել արբիտրաժային համաձայնություն կնքել պաշտպանության ոլորտին վերաբերող

պայմանագրերի առնչությամբ): Ուղեցույցը իրավաբանական անձի անունից հանդես գալու լիազորությունների բացակայությունը դիտարկում է կողմի անգործունակության հիմքի շրջանակում²³:

Անդրադառնալով այն հարցին, թե որն է արբիտրաժային համաձայնության կողմի նկատմամբ կիրառման ենթակա իրավունքը, Ուղեցույցը նշում է, որ դա պետք է որոշվի այն դատարանի միջազգային մասնավոր իրավունքի կանոնների կիրառությամբ, որտեղ հայցվում են ճանաչումը և կատարումը, քանի որ Կոնվենցիան այդ հարցի պատասխանը հստակ չի տալիս: Հետևաբար ՀՀ դատարանները անձի նկատմամբ կիրառման ենթակա իրավունքը պետք է որոշեն՝ ղեկավարվելով ՀՀ ՔՕ-ի 1262-րդ հոդվածի 1-ին մասով. այն նախատեսում է, որ քաղաքացու անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի քաղաքացիությունն ունի տվյալ անձը, իսկ եթե անձն ունի երկու կամ ավելի պետության քաղաքացիություն, ապա նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի հետ այդ անձն ունի առավել սերտ կապ:

Կարևոր է որոշել նաև այն պահը, որի դրությամբ պետք է գնահատվի կողմի անգործունակության հարցը, մասնավորապես՝ ինչպես վարվել այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնության կնքման պահին կողմը եղել է անգործունակ, սակայն արբիտրաժի ընթացքում արդեն եղել է լրիվ գործունակ: Այս հարցում դիրքորոշում է արտահայտել Ուզանդայի դատարանը, ըստ որի՝ կողմի անգործունակությանը

²³ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 116-117:

պետք է գնահատվի այն պահի դրությամբ, երբ նա կնքել է արբիտրաժային համաձայնությունը²⁴:

Այժմ անդրադառնանք արբիտրաժային համաձայնության անվավերությանը՝ որպես արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարումը մերժելու հիմք: Ուղեցույցում նշված է, որ այս հիմքի ներքո պատասխանողները հաճախ պնդում են, որ արբիտրաժային համաձայնությունը վավեր չէ ձևի նկատմամբ առաջադրվող պահանջների տեսանկյունից, քանի որ այն «գրավոր եղանակով» չի կնքվել, ինչպես պահանջում է Կոնվենցիան: Իսկ որպես կատարումը մերժելու համար հարակից հիմք վկայակոչվում է այն, որ Կոնվենցիայի իմաստով արբիտրաժային համաձայնությունն առկա չէ²⁵:

Հարկ է նշել, որ արբիտրաժային համաձայնության բովանդակությանը ներկայացվող պահանջներ չկան սահմանված ՀՀ օրենսդրությամբ: Սակայն գործերից մեկով՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ արբիտրաժային համաձայնության գրավոր տեքստը կարող է չնախատեսել պայմաններ դրա վայրի, լեզվի, արբիտրների քանակի և այլ պայմանների վերաբերյալ, միաժամանակ արձանագրել է, որ արբիտրաժային համաձայնությունից պետք է հստակորեն բխեցվի, որ կողմերի

²⁴ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 142, 32-րդ կետ:

²⁵ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 119:

կամահայտնությունն ուղղված է եղել հենց արբիտրաժային համաձայնության հաստատմանը, այսինքն՝ պայմանագրի կողմերը, դատարանը պետք է հստակ համոզմունք ունենան այդպիսի համաձայնության առկայության հարցում²⁶:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ ապացույցներ պետք է ներկայացնի արբիտրաժային համաձայնության անվավերությունը վկայակոչող կողմը: ՀՀ ՔՕ 303-րդ հոդվածի համաձայն՝ անվավեր գործարքները լինում են երկու տեսակի՝ առոչինչ և վիճահարույց: Ի տարբերություն առոչինչ գործարքների, որոնք անվավեր են՝ դատարանի՝ այն այդպիսին ճանաչելու հանգամանքից անկախ, վիճահարույց գործարքներն անվավեր են միայն դատարանի՝ այն անվավեր ճանաչելու ուժով, այլ կերպ ասած՝ վիճահարույց գործարքները վավեր են, քանի դեռ դատարանը դրանք անվավեր չի ճանաչել: ՀՀ ՔՕ 305-րդ հոդվածի ուժով՝ բոլոր այն գործարքները, որոնք օրենքով սահմանված չեն որպես առոչինչ, վիճահարույց են:

²⁶ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/29460/02/23 քաղաքացիական գործով 2023 թ. նոյեմբերի 13-ի որոշումը: Այս գործի փաստերից հետևում է, որ կողմերի միջև կնքվել էր առուվաճառքի պայմանագիր, որի 6.4 կետի համաձայն՝ պայմանագրի կատարման ընթացքում ծագող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ Կողմերը բանակցությունների միջոցով չեն գալիս համաձայնության վիճելի հարցերի լուծման մեջ, ապա տարաձայնությունները քննվում են Հայցվորի ընտրած երկրի արբիտրաժում: Դատարանը նշված գործով համարել է, որ նշված դրույթի ինչպես տառացի, այնպես էլ մյուս կանոնների կիրառմամբ հնարավոր չէ միանշանակ արձանագրել և ձևավորել այն համոզմունքը, որ Պայմանագրով սահմանված է արբիտրաժային համաձայնություն:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ արբիտրաժային համաձայնության անվավերությունը վկայակոչող կողմի ներկայացրած հիմքերից հետևում է, որ անվավերության հիմքում դրվում է դրա վիճահարույց լինելը, ապա, ի հավաստումն դրա, անվավերության կողմը պետք է ներկայացնի արբիտրաժային համաձայնությունը անվավեր ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ²⁷:

²⁷ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/25351/02/23 գործով 2023 թ. հոկտեմբերի 26-ի որոշմամբ արձանագրել է. «Տվյալ դեպքում, Դիմողը վկայակոչում է այն հանգամանքը, որ դեռևս չպարզված անձի կամ անձանց կողմից Լևոն Փիլիպոսյանի անձնական տվյալների օգտագործմամբ կատարվել է ենթադրյալ հանցավոր արարք, այն է՝ Լևոն Փիլիպոսյանի անձնագրային տվյալներն անօրինական ձևով օգտագործվելով, և կեղծված ստորագրությամբ՝ նրա անունից կնքվել է թիվ G36061900141 ոսկյա իրերի գրավի և վարկային պայմանագիրը և դրա 8.2-րդ կետում առկա արբիտրաժային համաձայնագիրը, ուստի գտել է, որ արբիտրաժային համաձայնությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է, մինչդեռ Դատարանն արձանագրում է, որ գործարքն անվավեր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (բացառությամբ առոչինչ գործարքների, որոնց դեպքում օրենքն է սահմանում, որ նման գործարքն առոչինչ է), այսինքն՝ գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն դատարանի կողմից, իսկ Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ «Ոսկյա իրերի գրավի և վարկային պայմանագրի» թիվ G36061900141 պայմանագիրը (ներառյալ դրա 8.2 կետը) դատարանի կողմից ճանաչվել է անվավեր, ուստի սույն դեպքում առկա չէ Վճիռը չեղյալ ճանաչելու՝ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը»: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը համանման դիրքորոշում է արտահայտել

Բավական հետաքրքրական է այն հարցը, թե կարող է արդյոք կողմը արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման վարույթում վկայակոչել արբիտրաժային համաձայնության բացակայությունը կամ դրա անվավերությունը, եթե արբիտրաժի ընթացքում Օրենքի 16-րդ հոդվածով

նաև թիվ ԵԴ2/25602/02/23 գործով 2023 թ. հոկտեմբերի 26-ի որոշմամբ:

Թիվ ԵԴ/52031/02/22 գործով 2023 թ. մարտի 15-ի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանն արձանագրել է. ««Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով՝ արբիտրաժային դատարանի վճիռը կարող է չեղյալ ճանաչվել, եթե դիմողի կողմից ներկայացվել են ապացույցներ առ այն, որ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ անվավեր է: Նման իրավակարգավորման ուժով օրենսդիրը սահմանել է իրավական հնարավորություն չեղյալ ճանաչել արբիտրաժային դատարանի կողմից կայացված վճիռը, սակայն, եթե նման պահանջի շրջանակներում ներկայացվել է արբիտրաժային համաձայնությունն անվավեր ճանաչելու մասին ապացույց, որպիսին ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հանդիսանալ արբիտրաժային համաձայնությունը՝ որպես գործարք, անվավեր ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ «1. Գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք)»: Հետևաբար, գործարքը կարող է անվավեր ճանաչվել բացառապես դատական կարգով, և գործարքի անվավերության փաստը հավաստող թույլատրելի և վերաբերելի ապացույց կարող է հանդիսանալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որպիսին տվյալ դեպքում չի ներկայացվել Դատարանին»:

սահմանված կարգով չի արել հայտարարություն դրա բացակայության կամ անվավերության մասին կամ իր կատարած հայտարարության հիման վրա արբիտրաժային տրիբունալի՝ որոշում կայացնելուց հետո չի դիմել դատարան տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հայցով:

Օտարերկրյա դատարանը գործերից մեկով համարել է, որ եթե կողմը, Մոդելային օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով, առարկություններ չի ներկայացրել արբիտրաժային համաձայնության առկայության վերաբերյալ, ապա հետագայում չի կարող արձարծել այդ հարցը արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման վերաբերյալ վարույթում: Այնուամենայնիվ, եթե կողմն արբիտրաժային տրիբունալի մեղքով զրկված է եղել համապատասխան հայտարարությունն անելու հնարավորությունից, ապա հետագայում զրկված չէ դատարանում արբիտրաժային համաձայնության առկայության կամ դրա անվավերության հիմքերը վկայակոչելու հնարավորությունից²⁸:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք կատարված հայտարարության հիման վրա արբիտրաժային տրիբունալի կայացրած որոշումից հետո դատարան չդիմելու դեպքում կողմը զրկվում է հետագայում արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման վարույթում արբիտրաժային համաձայնության բացակայության կամ դրա անվավերության հիմքերը վկայակոչելու հնարավորությունից, թե ոչ, ապա նշենք, որ այս հարցում առկա են տարբեր դիրքորոշումներ: Այսպես,

²⁸ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 144, 44-րդ կետ:

գերմանական դատարանները համարել են, որ եթե արբիտրաժային տրիբունալի՝ համապատասխան որոշում կայացնելուց հետո կողմը չի դիմել դատարան այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար, ապա հետագայում պետք է զրկված լինի դատարանում այդ հիմքը վկայակոչելու հնարավորությունից: Սինգապուրի և Հունգարիայի դատարանները հակառակ դիրքորոշումն են արտահայտել: Մասնավորապես՝ Սինգապուրի բարձր դատարանը համարել է, որ Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով²⁹ սահմանված կարգով դատարան դիմելը կողմի իրավունքն է, որի չիրացումը չի կարող խոչընդոտել վերջինիս այդ հիմքը հետագայում վկայակոչել դատարանում արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման վարույթում, իսկ Հունգարիայի գերագույն դատարանն այն դիրքորոշումն է արտահայտել, որ արբիտրաժի ընթացքում դատարան չդիմած կողմի համար օրենքով նման բացասական հետևանքներ նախատեսված չեն³⁰: Հայրենական իրավակիրառ փորձն այս հարցի պատասխանը դեռևս չի տվել:

Քննարկվող հարցի վերաբերյալ բավական հետաքրքիր իրավական դիրքորոշումներ են արտահայտվել Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ-2/29460/02/23 քաղաքացիական գործի շրջանակում: Մեջբերենք այդ գործով կայացված դատական ակտից հատված.

²⁹ Համապատասխանում է Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին:

³⁰ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 144, 45-րդ կետ:

«Միջազգային արբիտրաժային դատարանը, անդրադառնալով անվավեր արբիտրաժային համաձայնություններին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Միևնույն ժամանակ, անդրադառնալով այն հանգամանքին, որ Կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ սահմանված չէ, թե կոնկրետ որ արբիտրաժային փոփոխալի կողմից պետք է լուծվի վեճը՝ նշեմ հետևյալը. արբիտրաժային պրակտիկայում գոյություն ունեն, այսպես կոչված, պաթոլոգիկ արբիտրաժային համաձայնություններ:

Նման համաձայնությունների խնդրին մանրամասն կերպով անդրադարձ է կատարել Գարի Բորնը իր «Միջազգային առևտրային արբիտրաժ» գրքում, որից հաղվածներ կմեջբերվեն ստորև: Պաթոլոգիկ արբիտրաժային համաձայնությունները դրանք այն արբիտրաժային համաձայնություններն են, որոնք ա) չեն կարգավորում էական պայմանները, բ) անորոշ են, գ) հղում են կատարում գոյություն չունեցող արբիտրաժային հաստատությունների, դ) հակասական են, ե) այլընտրանքային համաձայնություններ են: Այսպես, էական պայմանները չկարգավորող արբիտրաժային համաձայնությունների թվին են դասվում նրանք, որոնք չեն մատնանշում կոնկրետ արբիտրաժային հաստատության անվանումը, որը պետք է քննի հնարավոր վեճը: Սակայն, միջազգային պրակտիկան, ինչպես նաև գրեթե բոլոր հեղինակավոր արբիտրաժային հաստատությունները որդեգրել են այն մոտեցումը, որ արբիտրաժային հաստատության անվանման վերաբերյալ նշման

բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ և բավարար չէ արբիտրաժային համաձայնության անվավերության համար: Եթե վեճի լուծումը արբիտրաժին հանձնելը եղել է կողմերի միակ կամ դոմինանտ մտադրությունը, ապա անորոշությունները, վրիպակները, մանրամասները, որոնք վերաբերում են արբիտրաժային վարույթի ընթացակարգին, ներառյալ արբիտրաժային հաստատության անվանումը, չեն կարող էական դեր խաղալ»:

Արբիտրաժային համաձայնության ոչ ամբողջական, անորոշ կամ հակասական պայմանները չեն կարող արբիտրաժային համաձայնությունը դարձնել պաթոլոգիկ: Քանի դեռ դրանք չեն վերաբերում պարտադիր պայմանների, այն է՝ կողմերի կամքը վեճի լուծումը հանձնել արբիտրաժին, դրանք չեն հանազեցնում արբիտրաժային համաձայնության անվավերության: Փոխարենը, անհրաժեշտ է գտնել լուծում մեկնաբանելու կամ լրացնելու նման արբիտրաժային համաձայնությունը՝ հղում կատարելով ընդհանուր պայմանագրային իրավունքին, որը հարգում է կողմերի կամքը վեճի լուծումը հանձնելու արբիտրաժային դատարանին: (...) Եթե պարզ է դառնում, որ կողմերի մոտ եղել է կամք վեճի լուծումը հանձնելու արբիտրաժային դատարանին՝ բացառելով ընդհանուր իրավասության դատարանը, արբիտրաժային համաձայնությանը պետք է ուժ տրվի»:

«Արբիտրաժային համաձայնությունները պետք է մեկնաբանվեն հոգույ դրա վավերության՝ կողմերի՝ վեճի լուծումն արբիտրաժայի և դատարանին հանձնելու կամքին ուժ տալու նպատակով»:

«Արբիտրաժային համաձայնությունը վավեր է, անգամ եթե դրանում բացակայում է արբիտրաժային դատարանի նստավայրի վերաբերյալ նշումը»:

Թե՛ դատարանները, և թե՛ արբիտրաժային տրիբունալները մշտապես մերժել են արբիտրաժային համաձայնության անվավերության պահանջները, միայն այն հիմքով, որ դրանցում բացակայում է արբիտրաժի նստավայրի մասին նշումը:

Մեկ այլ դատական գործով, Հոնկոնգի առաջին աստիճանի դատարանը, անդրադառնալով արբիտրաժային համաձայնությանը, որը չի պարունակել նշում կոնկրետ արբիտրաժային հաստատության մասին, այլ սահմանափակվել է «երրորդ երկրի արբիտրաժ» եզրույթով, հաստատել է, որ վեճը ենթակա է ցանկացած երրորդ երկրի ցանկացած արբիտրաժային դատարանի քննության: Նմանատիպ մոտեցում է ցուցաբերել նաև Շվեյցարիայի դաշնային տրիբունալը:

Ընդհանուր մոտեցումն այն է, որ առաջնային և էական է միայն կողմերի կամքը՝ վեճի լուծումը հանձնելու արբիտրաժային տրիբունալին, և ընդհանուր կանոնն այն է, որ արբիտրաժային հաստատության կամ վայրի վերաբերյալ նշման բացակայության պարագայում, վեճի լուծումը պետք է իրականացնի այն արբիտրաժային հաստատությունը, որն ի վիճակի է քննելու տվյալ վեճը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորն ունի բացառիկ իրավունք ընտրելու վեճը քննող արբիտրաժային հաստատությունը Կողմերի միջև վեճը ենթակա է քննության Հայաստանում գործող արբիտրաժային

դատարանի կողմից, և վեճի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքը: Արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառելի իրավունքի, արբիտրաժային հաստատության, արբիտրաժի գտնվելու վայրի վերաբերյալ համաձայնության բացակայությունը չի հանգեցնում արբիտրաժային համաձայնության անվավերության կամ բացակայության»³¹:

Համաձայն լինելով նշված դատական ակտով արտահայտված դիրքորոշումներին՝ հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտադրել, որ միջազգային արբիտրաժում ձևավորված արբիտրաժային համաձայնության վավերության կանխավարկածի լույսի ներքո արբիտրաժային համաձայնության վավերությանը պետք է գերակայություն տրվի, և ձևական թերացումները կամ բացթողումները չպետք է մեկնաբանվեն որպես անվավերության հիմք, ինչը կոտնահարի արբիտրաժի միջոցով իրենց վեճը լուծելու կողմերի կամքը:

³¹ Մեջբերված է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի ԵԴ2/29460/02/23 գործով 2023 թ. նոյեմբերի 13-ի որոշումից:

§3. Ծանուցման բացակայությունը և գործ ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելը

Արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարումը մերժելու հիմք է նաև արբիտրաժային համաձայնության կողմի պատշաճ ձևով տեղեկացված չլինելը արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ իր գործը ներկայացնելու հնարավորությունից այլ պատճառներով զրկված լինելը: Սա արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման և հարկադիր կատարման մերժման՝ դատական պրակտիկայում առավել հաճախ կիրառվող հիմքն է: Գործերից մեկով՝ Հոնկոնգի առաջին ատյանի դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ կողմի՝ իր գործը ներկայացնելու և մյուս կողմի ներկայացրած գործին ծանոթանալու իրավունքները «բնական արդարության հիմնարար սկզբունքներ են»³²:

Ծանուցման բացակայության փաստի հաստատման համար պետք է պարզել, թե ինչ կարգ է գործում կողմերի միջև գրավոր հաղորդակցության հարցում, մասնավորապես՝ արդյոք կողմերը նախատեսել են ծանուցման որևէ եղանակ: Այսպես, եթե կողմերը արբիտրաժային համաձայնությամբ պայմանավորվել են հաղորդակցությունն ու ծանուցումները կատարել էլփոստի միջոցով, ապա արբիտրաժային վարույթում ամբողջ հաղորդակցությունը պետք է տեղի ունենա ծանուցման այդ եղանակով:

³² The Guide to Challenging and Enforcing Arbitration Awards - Second Edition – Awards.

Եթե կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ բան չեն նախատեսել, ապա գործում է Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված կարգը, ըստ որի՝ գրավոր հաղորդակցությունը համարվում է տեղի ունեցած, եթե հաղորդագրությունն ուղարկված է անձամբ հասցեատիրոջը կամ նրա ձեռնարկատիրական գործունեության կամ մշտական բնակության վայր, կամ հաղորդագրությունն ուղարկված է կապի այլ միջոցներով: Այն դեպքում, երբ ողջամիտ հարցումներ կատարվելուց հետո նշված հասցեներից ոչ մեկը չի պարզվում, գրավոր հաղորդակցությունը համարվում է տեղի ունեցած, եթե հաղորդագրությունն ուղարկված է հասցեատիրոջ՝ ուղարկողին վերջին հայտնի գործունեության կամ մշտական բնակության վայր կամ փոստային հասցեին՝ պատվիրված նամակով կամ նշված հաղորդագրությունը հասցնելու փորձի գրանցումն ապահովող որևէ այլ ձևով:

Անդրադառնալով հայրենական իրավակիրառ փորձին՝ նշենք, որ ՀՀ դատարանները, հիմք ընդունելով Օրենքի 19-րդ հոդվածը³³, արբիտրաժի ընթացքում կողմերի ծանուցման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառում են նաև ՀՀ ՔԴՕ-ի դրույթները այնքանով, որքանով կողմերի համաձայնությամբ և Օրենքով վարույթի իրականացման

³³ Տե՛ս, օրինակ, թիվ ԵԴ/64757/02/22 գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2024 թ. հունվարի 8-ի որոշումը, որով դատարանն արձանագրել է, որ ՀՀ ՔԴՕ՝ դատական ծանուցումների վերաբերյալ կարգավորումները գործում են այնքանով, որքանով Օրենքով և կողմերի միջև այլ բան սահմանված չէ:

ընթացակարգի, ներառյալ ծանուցումների կատարման կարգի վերաբերյալ այլ կանոններ չեն նախատեսվել:

Ներկայացնենք արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչման և հարկադիր կատարման մերժման այս հիմքի գործնական կիրառության և դրան տրված մեկնաբանությունների որոշ օրինակներ հայրենական իրավակիրառ փորձից.

- Դատարանը համարել է, որ դատավարական ընթացակարգերի պահպանված լինելը չպետք է և չի կարող սահմանափակել ու ի չիք դարձնել անձի՝ արդար դատաքննության սահմանադրական իրավունքը, քանի որ տվյալ դեպքում անձը զրկվում է իր գործը ներկայացնելու հնարավորությունից, ինչն արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման հիմք է³⁴:

³⁴ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/0936/02/24 գործով 2024 թ. փետրվարի 12-ի որոշումը. «Վերոգրյալի համադրության արդյունքում Դատարանն արձանագրում է, որ Լուսինե Սամվելի Հարությունյանը Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժային դատարանի կողմից ուղարկված RH145403775AM ծրարը ստացել է 20.11.2023 թվականին, և վերջինիս ներկայացուցիչը, արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված ժամկետում, այն է՝ հայցադիմումը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ 25.11.2023 թվականին, փոստ է հանձնել հայցադիմումի պատասխան, որով խնդրել է կիրառել հայցային վաղեմություն և հայցը մերժել, ու թեև հայցադիմումի պատասխանը Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժային դատարանը ստացել է Վճիռը կայացնելուց հետո՝ 29.11.2023 թվականին, սակայն այնուամենայնիվ Դատարանը հաշվի առնելով, որ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի «գործնական և արդյունավետ», «իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլ նաև պրակտիկայում»,

- Դատարանը չեղյալ է ճանաչել արբիտրաժային տրիբունալի վճիռը այն հիմնավորմամբ, որ այն կայացվել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետի ավարտի վերջին օրը³⁵:

դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում, ավելին՝ ամեն դեպքում, երբ հիմնավորվում է, որ անձը չի ստացել դատավարական փաստաթղթերը, տեղյակ չի եղել իր վերաբերյալ քննվող գործի մասին, դատավարական ընթացակարգերի պահպանված լինելը չպետք է և չի կարող սահմանափակել ու ի չիք դարձնել անձի՝ արդար դատաքննության սահմանադրական իրավունքը, իսկ սույն դեպքում Լուսինե Սամվելի Հարությունյանը հայցադիմումի պատասխանը ներկայացվել է սահմանված ժամկետում, և վերջինիս հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությանը Վճռով անդրադարձ չի կատարվել, ուստի ըստ էության Լուսինե Սամվելի Հարությունյանը փաստացի գրկվել է իր գործը ներկայացնելու հնարավորությունից, ուստի նման պարագայում Վճիռը պետք է ճանաչել չեղյալ՝ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված հիմքով, այն է՝ կողմը գրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից»:

³⁵ Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/3234/02/23 գործով 2023 թ. հուլիսի 14-ի որոշումը. «Տվյալ պարագայում, սույն քաղաքացիական գործի փաստերը գնահատելով վկայակոչված իրավական կարգավորումների և մեկնաբանությունների լույսի ներքո, Դատարանն արձանագրում է, որ արբիտրաժային գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց՝ Նելլի Արթուրի Ղազարյանին պատշաճ կարգով ծանուցելու վերաբերյալ, մասնավորապես, գործում առկա ծանուցման

- Դատարանն արձանագրել է, որ արբիտրի՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր գործողությունները կատարած լինելու պայմաններում արբիտրաժային վարույթի կողմը օրենքի ուժով համարվել է գրավոր հաղորդակցությունը, ներառյալ արբիտր նշանակելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումները պատշաճ ձևով ստացած, և մերժել է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը³⁶:

Ծրարը վերադարձվել է «անհայտ» նշումով, իսկ վարչական շրջանի ղեկավարին հասցեագրված գրությամբ հայցվել է ծանուցել դիմումատուն, սակայն վերջինիս ծանուցելու վերաբերյալ որևէ ապացույց առկա չէ, իսկ դիմումատուի պնդման համաձայն իր կողմից դիմումը և վարույթ ընդունելու մասին որոշումը ստացվել է 2023թ.-ի մարտի 20-ին համայնքի միջոցով, միաժամանակ դատական ակտը կայացվել է նույն թվականի մարտի 27-ին, որպիսի ժամանակահատվածը ինքնին բավարար չի եղել ԳՆՄ արբիտրաժային տրիբունալի կանոնակարգով սահմանված ժամկետում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար, ըստ էության դատական ակտը կայացվել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետի ավարտի վերջին օրը»:

³⁶ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/44503/02/23 գործով 2024 թ. մարտի 6-ի որոշումը, որով դատարանը արձանագրել է. «Տվյալ դեպքում, ինչպես արդեն նշվել է, արբիտրի կողմից Սիրանուշ Հակոբի Սաֆարյանի մշտական բնակության վայրի հասցեով ուղարկված բոլոր փոստային առաքանիները վերադարձվել են «չպահանջված» նշագրմամբ, բացառությամբ թիվ Ե-10742 գրության, որը վերադարձվել է «տեղափոխված» նշագրմամբ: Դատարանն արձանագրում է, որ թիվ ԱՐԲ/2518/22 արբիտրաժային գործով այն նամակները, որոնք փոստային կապի օպերատորի կողմից վերադարձնել են ուղարկողին «չպահանջված» նշագրմամբ, վկայում են նրա մասին, որ դրանք հնարավոր չի եղել հանձնել Սիրանուշ Հակոբի Սաֆարյանին կամ այն

պատճառով, որ արբիտրը դիմել է այն վերադարձնելու համար, կամ Սիրանուշ Հակոբի Սաֆարյանն է հրաժարվել ստանալ դրանք, կամ Սիրանուշ Հակոբի Սաֆարյանը բացակայել է նշված հասցեից, կամ հասցեն անընթեռնելի է եղել, կամ առկա են եղել այնպիսի հանգամանքներ, որոնք բացառել են փոստային կապի օպերատորի կողմից իր պարտավորությունների կատարումը:

Այս մասով պետք է նշել, որ դիմողը գործի քննության ընթացքում չի բացահայտել այնպիսի հանգամանքներ, որոնք կվերաբերեին նրան, որ նամակները վերադարձվել են արբիտրի կողմից հետ պահանջելու հետևանքով, հասցեի անընթեռնելի լինելու կամ այնպիսի հանգամանքների հետևանքով, որոնք բացառել են փոստային կապի օպերատորի կողմից իր պարտավորությունների կատարումը: Ստացվում է, որ նամակները չստանալու վերոնշյալ հնարավոր պատճառներից մնում են միայն Սիրանուշ Հակոբի Սաֆարյանի կողմից դրանք ստանալուց հրաժարվելը կամ Սիրանուշ Հակոբի Սաֆարյանի կողմից նշված հասցեից բացակայելը: Ըստ այդմ, թեև դիմումի մեջ վերոնշյալ պատճառներից որևէ մեկի մասին նշված չի եղել, այդուհանդերձ դիմողը 2024 թվականի փետրվարի 29-ին, ժամը՝ 11:40-ին կայացած դատական նիստի ընթացքում ըստ էության հայտնել է, որ ինքն աշխատանքով պայմանավորված է բացակայել բնակարանից: Սակայն Դատարանը կարևոր է համարում նշել, որ գործի քննության ընթացքում դիմողը չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որից կհետևեր, որ թիվ ԱԲԲ/2518/22 արբիտրաժային գործով մի շարք նամակներն իր մշտական բնակության վայրի հասցեով փաստացի չստանալը եղել է ոչ թե իր կողմից դրանք ստանալուց հրաժարվելու հետևանքով, այլ փոստային կապի օպերատորի կողմից դրանք յուրաքանչյուր անգամ առաքելու պահին իր կողմից բնակարանից (մշտական բնակության վայրից) բացակայելու հետևանքով:

Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ դիմողը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով կրելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով

- Արձանագրելով այն փաստը, որ արբիտրաժային գործի մասին ծանուցված դիմողը չի ներկայացել դատական նիստին և չի օգտվել արդար դատաքննության, լսված լինելու իրավունքի իրացման իր իրավունքից, դատարանը համարել է, որ մրցակցության և հավասարության սկզբունքները

նախատեսված հանգամանքները հիմնավորելու պարտականություն, չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որի հետազոտման և գնահատման արդյունքում հնարավոր է գալ որոշակի և վերջնական եզրակացության, որ Սիրանուշ Հակոբի Սաֆարյանն իր կամքից անկախ հանգամանքների պատճառով զրկված է եղել թիվ ԱՐԲ/2518/22 արբիտրաժային գործով առաքված փաստաթղթերը ստանալու ողջամիտ հնարավորությունից: Ավելին՝ թիվ ԱՐԲ/2518/22 արբիտրաժային գործով վեճի առարկա պարտավորությունների ոչ պատշաճ կատարման (հակառակի մասին որևէ փաստարկ չի ներկայացվել դիմողի կողմից), այդ գործով փոստային առաքանիները «չպահանջված» նշագրմամբ վերադարձված լինելու, իսկ Դատարանի կողմից ուղարկված միևնույն հասցեով առաքանիները դիմողի կողմից ստացված լինելու հանգամանքներն և միաժամանակ հակառակը հաստատող ապացույցների բացակայությունը վկայում են նրա մասին, որ Սիրանուշ Հակոբի Սաֆարյանը, ունենալով ողջամիտ հնարավորություն իր մշտական բնակության վայրի հասցեով ստանալու առաքվող նամակները, իր կամքով ընտրել է արբիտրաժին չմասնակցելու ճանապարհը, որի հետևանքով փոստային կապի օպերատորի կողմից յուրաքանչյուր անգամ առաքվող նամակները հնարավոր չի եղել փաստացի հանձնել նրան:

Հետևապես՝ Դատարանը կարծում է, որ թիվ ԱՐԲ/2518/22 արբիտրաժային գործով արբիտրի կողմից «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր գործողությունները կատարված լինելու պայմաններում օրենքի ուժով Սիրանուշ Հակոբի Սաֆարյանը համարվել է գրավոր հաղորդակցությունները՝ ներառյալ արբիտր նշանակելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումները պատշաճ ձևով ստացած»:

հավասարապես սահմանված են և՛ հայցվոր, և՛ պատասխանող կողմի համար, ուստիև դատավարության կողմերից որևէ մեկի՝ դատավարական անգործություն դրսևորելը չի կարող հանգեցնել մյուս կողմի՝ արդար դատաքննության իրավունքի խախտմանը՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու հայեցակարգի պահպանման նկատառումով նույնպես³⁷:

- Արձանագրելով այն փաստը, որ արբիտրաժը պահպանել է Օրենքով և կողմերի միջև կնքված

³⁷ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/38346/02/23 գործով 2024 թ. փետրվարի 19-ի որոշումը. ««Օպտիմուս Լեքս» ՍՊԸ-ի մշտապես գործող արբիտրաժային դատարանի միանձնյա արբիտրաժային տրիբունալը 10.04.2020 թվականին թիվ 01-038/06/19 արբիտրաժային գործով վճռում արձանագրել է, որ պատասխանողներ Գագիկ Գրիգորյանը, Գուրգեն Գրիգորյանը, Ամայա Գրիգորյանը, և Մարիամ Գրիգորյանը, ստանալով «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից Արբիտրաժային դատարան ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը, Արբիտրաժային տրիբունալի 06.06.2019 թվականի «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը և Արբիտրաժային դատարանի գրությունը՝ պատասխանողի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, հայցադիմումի գրավոր պատասխան կամ հակընդդեմ հայց չեն ներկայացրել:

Վերոգրյալ իրավանորմերի և սույն գործով հաստատված փաստերի համադրման արդյունքում Դատարանն արձանագրում է, որ «Օպտիմուս Լեքս» ՍՊԸ-ի մշտապես գործող արբիտրաժային դատարանի միանձնյա արբիտրաժային տրիբունալը, ղեկավարվելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով և Արբիտրաժային դատարանի հիմնարկի կանոնակարգով, կատարել է արբիտրաժային գործի մասին պատասխանողի ծանուցմանն ուղղված գործողությունները՝ և արձանագրելով, որ պատասխանող Գագիկ Գրիգորյանը ծանուցված է ավարտել է արբիտրաժային գործը՝ կայացնելով հայցը բավարարելու մասին հիմնավոր վճիռ»:

պայմանագրերով սահմանված՝ կողմի պատշաճ ծանուցումն ապահովելու ընթացակարգը, դատարանն արձանագրել է, որ կողմը համարվել է ծանուցված³⁸:

³⁸ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/35531/02/23 գործով 2024 թ. հունվարի 3-ի որոշումը, որով դատարանն արձանագրել է. «Ըստ Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժային դատարանի 03.08.2023թ. թիվ ՖԱ/0104/23 վճռի (վավերացված պատճեն)՝ հայցվորը պատշաճ տեղեկացվել է արբիտրաժի մասին, իսկ Նատայա Սերգեյի Ռոտենբերգին, ՆՌ Ինվեսթմենթ ՍՊԸ-ին, երրորդ անձինք Տիգրան Արզաքանցյանին և Լույս Ինվեսթմենս ՍՊԸ-ին Հայփոստ ՓԲԸ-ի միջոցով հնարավոր չի եղել տեղեկացնել արբիտրաժի մասին:

ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը պատասխանողներ Նատայա Սերգեյի Ռոտենբերգին, ՆՌ Ինվեսթմենթ ՍՊԸ-ին, երրորդ անձինք Տիգրան Արզաքանցյանին և Լույս Ինվեսթմենս ՍՊԸ-ին արբիտրաժի մասին տեղեկացնելու համար վերջիններիս ծանուցումներ է ուղարկել նաև սուրհանդակային ծառայության միջոցով, սակայն առաքանիները հետ են վերադարձվել:

Բացի այդ, գրություններ են ուղարկվել նաև պատասխանող Նատայա Սերգեյի Ռոտենբերգի և երրորդ անձ Տիգրան Արզաքանցյանի վերջին բնակության հասցեի համայնքի ղեկավարներին:

Ավելին, ըստ պայմանագրերի (վավերացված պատճեններ)՝ կողմերը պայմանավորվում են, որ պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական կամ արբիտրաժային ծանուցում, այդ թվում՝ դատավարական կամ արբիտրաժային փաստաթուղթ, ուղարկվում են սույն պայմանագրի 8-րդ /7-րդ, 5-րդ/ բաժնում նշված հասցեներով և համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված /հանձնված/, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում կամ չի բնակվում, եթե պայմանագրով սահմանված կարգին համապատասխան միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային հասցեները /գտնվելու վայրերը/ փոխելու մասին»:

Անդրադառնալով միջազգային իրավակիրառ փորձին՝ նշենք, որ ընդունված է հետևյալը. եթե կողմն ակտիվորեն մասնակցել է արբիտրաժին, ապա հետագայում նրա համար անհնար կլինի բողոքարկել ծանուցման ոչ պատշաճ լինելը, ինչպես նաև եթե պատասխանողը ստացել է արբիտրաժի մասին ծանուցումը, սակայն չի մասնակցել կամ հրաժարվել է արբիտրաժին մասնակցելուց, ապա դատարանները համարում են, որ պատշաճ ընթացակարգի խախտում տեղի չի ունեցել, այլ կողմը ընտրել է արբիտրաժին չմասնակցելու ճանապարհը, որը չի կարող հիմք լինել՝ մերժելու արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը³⁹:

Կողմի՝ իր գործը ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով: Դատարանները համարել են, որ կողմը չի կարող հղում անել այս հիմքին, եթե դա պայմանավորված է եղել այնպիսի հանգամանքներով, որոնք կախված չեն արբիտրաժային տրիբունալի կամ կողմերի կամքից: Այս հիմքն առկա չէ նաև այն դեպքում, երբ կողմը չի մասնակցել արբիտրաժին, քանի որ կարծել է, որ արբիտրաժային տրիբունալն իրավասու չէ լուծելու կողմերի միջև առաջացած վեճը⁴⁰:

Այժմ ներկայացնենք օտարերկրյա դատարանների մի շարք գործեր, որտեղ հաստատվել է արբիտրաժային վճռի չեղյալ

³⁹ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 125:

⁴⁰ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 146, 53-րդ կետ:

ճանաչման և հարկադիր կատարման մերժման նշված հիմքի առկայությունը.

- Նեապոլի վերաքննիչ դատարանը մերժել է ավստրիական արբիտրաժային վճռի կատարումը՝ հիմք ընդունելով այն, որ իտալական պատասխանողին Վիեննայում արբիտրաժային նիստին մասնակցելու համար դրանից մեկ ամիս առաջ ծանուցելը բավարար չի եղել, քանի որ այդ ժամանակ պատասխանողի գտնվելու վայրում հզոր երկրաշարժ էր տեղի ունեցել:

- Անգլիայի վարաքննիչ դատարանը որոշում է կայացրել մերժելու հնդկական արբիտրաժային վճռի կատարումը՝ հիմնավորելով, որ կողմերից մեկի ծանր հիվանդությունն անհնար է դարձրել նրա մասնակցությունն արբիտրաժին, որն այդ կողմն ապարդյուն կերպով վկայակոչել էր արբիտրաժային նիստի ժամանակ՝ հայցելով նիստի հետաձգում: Դա հիմք կարող էր հանդիսանալ ակնկալելու, որ այդ կողմը չի մասնակցելու արբիտրաժային նիստերին, ներառյալ չի ներկայացնելու հայցի պատասխան:

- Հոնկոնգի բարձր դատարանը մերժել է արբիտրաժային վճռի կատարումը՝ պնդելով, որ Չինաստանի Միջազգային տնտեսական և առևտրային արբիտրաժի հանձնաժողովը պատասխանողին հնարավորություն չի տվել մեկնաբանելու արբիտրաժային դատարանի նշանակած մասնագետի եզրակացությունները:

Ներկայացնենք մի շարք գործեր, որտեղ դատարանը, չնայած կողմի ներկայացրած հիմնավորումներին, համարել է, որ նշված հիմքն առկա չէ.

- Արբիտրը հրաժարվում է լսումների ժամանակացույցը փոփոխելուց՝ հագուտ այն վկայի, որին հրավիրել է վճռի հարկադիր կատարումն առարկող կողմը:
- Տրիբունալը հրաժարվում է լսումները հետաձգելուց և մերժում է լրացուցիչ բացահայտումները:
- Տրիբունալը սնանկության գործընթացի պատճառով մերժում է լսումների հավելյալ հետաձգումը և արբիտրաժի դադարեցումը:
- Տրիբունալը սահմանափակում է վկաների խաչաձև հարցաքննությունը:
- Կողմերը չեն ներկայանում արբիտրաժային նիստին՝ վախենալով արբիտրաժի գտնվելու վայրում բանտարկվելուց:
- Ընկերության ներկայացուցիչը մուտքի վիզայի մերժման պատճառով չի կարողանում ներկայանալ արբիտրաժային նիստին⁴¹:

⁴¹ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 127-128:

§4. Վճռի կայացումն այնպիսի վեճով կամ հարցերով, որոնք նախատեսված չեն արբիտրաժային համաձայնությամբ, չեն համապատասխանում դրա պայմաններին կամ դուրս են դրա սահմաններից

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված են արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարումը մերժելու երեք ինքնուրույն հիմքեր.

- Վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ:
- Վճիռը չի համապատասխանում արբիտրաժային համաձայնության պայմաններին:
- Վճռով որոշվում են այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից:

Քննարկվող հիմքը երբեմն վկայակոչվում է այն ժամանակ, երբ գործով վիճարկվում է արբիտրաժային համաձայնության առկայությունն ընդհանրապես: Այս դեպքում կողմը հղում է անում այս հիմքին այն հիմնավորմամբ, որ վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չի եղել արբիտրաժային համաձայնությամբ:

Օրինակ՝ Հունգարիայի գերագույն դատարանը համարել է, որ կիրառման է ենթակա արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարումը մերժելու այս հիմքը այն դեպքում, երբ վիճարկվում է արբիտրաժային համաձայնության առկայությունը: Սրան հակառակ՝ Սինգապուրի դատարանները, որպես կանոն, բացառում են նման դեպքում

քննարկվող հիմքի կիրառությունը՝ համարելով, որ այս հիմքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալն առհասարակ իրավասու է քննելու կողմերի միջև առաջացած վեճը, սակայն տվյալ դեպքում դուրս է եկել իր իրավասության սահմաններից:

Ինչ վերաբերում է հայրենական իրավակիրառ փորձին, ապա դատարանը գործերից մեկով արձանագրել է. «Դատարանի կողմից պարզվելիք առաջին հարցը դա արբիտրաժային համաձայնության առկայության հարցն է: (...) Արբիտրաժային համաձայնության բացակայությունն ինքնին հիմք է վիճարկվող որոշումը կամ վճիռն անվավեր ճանաչելու համար»⁴²: Հատկանշական է, որ դատարանն այս գործով բավարարել է դիմումատուի՝ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու մասին պահանջը՝ որպես ելակետ չընդունելով Օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք:

Համարվում է, որ վճիռը չի համապատասխանում արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված պայմաններին, երբ, օրինակ, արբիտրաժային տրիբունալը խախտել է վճռի կայացման ժամկետը: Թունիսի դատարանը չեղյալ է ճանաչել արբիտրաժի վճիռը՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ արբիտրաժային տրիբունալը վճիռը կայացրել է արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ⁴³: Բահրեյնի վճռաբեկ դատարանը մեկ այլ գործով

⁴² Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/55127/02/22 գործով 2023 թ. հունվարի 30-ի որոշումը:

⁴³ Արբիտրաժային տրիբունալը երկու անգամ երկարաձգել է վճռի կայացման ժամկետը երեք ամսով, ինչին կողմն առարկել է:

չեղյալ է ճանաչել արբիտրաժային վճիռն այն հիմքով, որ արբիտրաժային տրիբունալը խախտել է կողմերի համաձայնությամբ վճիռ կայացնելու համար սահմանված 90-օրյա ժամկետը 40 օրով: Դատարանը համարել է, որ արբիտրաժային տրիբունալը պարտավոր է վճիռ կայացնել կողմերի համաձայնությամբ նախատեսված ժամկետում, քանի դեռ կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ ժամկետ չեն սահմանել, իսկ նշված ժամկետը լրանալով դադարում է նաև արբիտրաժային տրիբունալի իրավասությունը, և այն այլևս իրավասու չէ որոշում կայացնելու⁴⁴:

Ի հիմնավորումն վճռի՝ արբիտրաժային համաձայնության սահմաններից դուրս լինելու հանգամանքի՝ կողմերը շատ գործերով նշում են արբիտրաժի ընթացքում ներկայացված պահանջների՝ արբիտրաժային համաձայնության սահմաններից դուրս լինելը, քանի որ այդ պահանջները բխում են դելիկտային (վնաս պատճառելու հետ կապված) հարաբերություններից: Կանադական դատարանն այս հարցում այն դիրքորոշումն է հայտնել, որ արբիտրաժային տրիբունալը նաև դելիկտային հարաբերություններից բխող պահանջներով է իրավասու՝ պայմանով, որ այդ դրանք ծագած լինեն այն առևտրային հարաբերություններից, որոնցից ծագող վեճերի լուծման համար կնքվել է արբիտրաժային համաձայնությունը⁴⁵:

Դատարանը համարել է, որ չնայած օրենքը թույլատրում է արբիտրաժային տրիբունալին երկարաձգել վճռի կայացման ժամկետը երկու անգամ, այնուամենայնիվ այդ երկարաձգումները, ըստ կողմերի արբիտրաժային համաձայնության, չպետք է գերազանցեին մեկ ամիսը:

⁴⁴ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 152, 85-րդ կետ:

⁴⁵ Նույն տեղում, կետ 86:

Ի հիմնավորումն արքիտրաժային տրիբունալի՝ իր իրավասությունը գերազանցելու վերաբերյալ հիմքի առկայության՝ կողմերը հաճախ վկայակոչում են նաև այն հանգամանքը, որ արքիտրաժային տրիբունալը վճիռ է կայացրել առանց հաշվի առնելու պայմանագրի դրույթները և կիրառման ենթակա իրավունքը: Նման վկայակոչման իրավական հիմքը Մոդելային օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերն են (ամբողջությամբ համապատասխանում են Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին), որոնք նախատեսում են, որ արքիտրաժային տրիբունալը վճիռը պետք է կայացնի պայմանագրի դրույթների համաձայն՝ կիրառելով կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Օրինակ՝ եգիպտական դատարանը չեղյալ է ճանաչել արքիտրաժի վճիռը, քանի որ արքիտրաժային տրիբունալը, կողմերից լիազորված չլինելով, վճիռը կայացրել էր արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (*ex aequo et bono*): Կամ՝ Օմանի դատարանը չեղյալ է ճանաչել արքիտրաժի վճիռն այն հիմնավորմամբ, որ արքիտրաժային տրիբունալը վեճը լուծել է առանց պայմանագրի կետերը հաշվի առնելու: Այս հիմքի այդպիսի՝ լայն իմաստով մեկնաբանության միջոցով դատարանները հաճախ փորձում են վերանայել արքիտրաժային վճիռն ըստ էության⁴⁶:

Իսպանիայի գերագույն դատարանը համարել է, որ, «*iura novit curia*» սկզբունքին համապատասխան, կողմերի ներկայացրած պահանջների վերադասակարգումը արքիտրը չի կարող մեկնաբանել, որ արքիտրաժային տրիբունալը դուրս է

⁴⁶ Նույն տեղում, էջ 153, կետ 88:

եկել իր իրավասության սահմաններից: Սակայն իրավասության սահմանանցում պետք է որակել այն դեպքերը, երբ վճռով նախատեսվում է կետանցված օրերի համար տուժանք վճարելու պարտավորություն այն պայմաններում, երբ կողմը նման պահանջ չէր ներկայացրել: Սակայն նույն դատարանը հակառակ դիրքորոշում է որդեգրել դատական ծախսերի բռնագանձման հարցում՝ համարելով, որ դրա վերաբերյալ արբիտրաժային տրիբունալը կարող է որոշում կայացնել սեփական նախաձեռնությամբ⁴⁷:

Դատական պրակտիկայում ընդունված է հետևյալը. արբիտրաժային տրիբունալը պետք է համարվի իր իրավասությունը գերազանցած, եթե վճռի կայացումից հետո վերսկսել է արբիտրաժը և կայացրել այնպիսի նոր վճիռ, որով հետ է կանչել կամ ըստ էության փոփոխել է նախորդ վճիռը: Այս դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ արբիտրաժային վճռի կայացումից հետո արբիտրաժային տրիբունալը, Մոդելային օրենքի 33-րդ հոդվածին համապատասխան (ամբողջությամբ համապատասխանում է Օրենքի 33-րդ հոդվածին), կարող է ուղղել միայն վճռում տեղ գտած թվաբանական սխալները, վրիպակները կամ գրասխալները, պարզաբանել վճիռը կամ կայացնել լրացուցիչ վճիռ, սակայն չի կարող հետ կանչել կամ ըստ էության փոփոխել սկզբնապես կայացված վճիռը⁴⁸:

Սինգապուրի բարձր դատարանը գործերից մեկով համարել է, որ արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության վերաբերյալ սխալ որոշում կայացնելը չի կարող որակվել որպես

⁴⁷ Նույն տեղում, էջ կետ 90:

⁴⁸ Նույն տեղում, 91:

իրավասության գերազանցում, քանի որ տվյալ դեպքում պաշտպանության այլ միջոցներ են նախատեսված⁴⁹:

Այն դեպքում, երբ արբիտրաժի միջոցով վեճերի լուծման կարգ նախատեսող պայմանագրով իրավունքներն ու պարտականությունները փոխանցվել են այլ անձի, կամ պայմանագիրը դադարել է, ապա այդ պայմանագրից ծագող վեճերը ենթակա են քննության արբիտրաժի միջոցով՝ պայմանով, որ ներկայացված պահանջները հիմնված են այնպիսի փաստերի վրա, որոնք տեղի են ունեցել նախքան պայմանագիրը դադարելը⁵⁰:

Կարևոր է ի նկատի ունենալ, որ, Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետին և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան, եթե արբիտրաժային տրիբունալը, դուրս գալով իր իրավասության սահմաններից, որոշում է կայացրել նաև այնպիսի հարցերով, որոնցով իրավասու չէ որոշում կայացնելու, սակայն այդ հարցերով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս չեն արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա այս դեպքում կարող է չեղյալ ճանաչվել ոչ թե արբիտրաժային տրիբունալի վճիռն ամբողջությամբ, այլ դրա միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր:

Այստեղ խնդրահարույց է այն հանգամանքը, որ, Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան, հաստատված համարելով նշված կետով

⁴⁹ Նույն տեղում, էջ 153-154, կետ 93:

⁵⁰ Նույն տեղում, էջ 154, կետ 94:

նախատեսված հիմքի առկայությունը, դատարանը կարող է չեղյալ ճանաչել արբիտրաժային վճիռն այն պայմաններում, երբ կողմը վճռի չեղյալ ճանաչման պահանջ չէր էլ ներկայացրել:

§5. Արբիտրաժային տրիբունալի կազմին և ընթացակարգին ներկայացվող պահանջների խախտումը

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետը և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը նախատեսում են, որ արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվում և դրա հարկադիր կատարումը մերժվում է, եթե արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի համաձայնությանը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ վճռի կայացման երկրի օրենսդրությանը⁵¹:

⁵¹ Նշենք, որ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի միջև առկա են որոշակի տարբերություններ: Նախ՝ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետից հետևում է, որ արբիտրաժային տրիբունալի կազմի և ընթացակարգի անհամապատասխանությունը կողմերի արբիտրաժային համաձայնությանը հիմք է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու համար, եթե այդ համաձայնությունը չի հակասում Օրենքի պարտադիր դրույթներին: Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետով նման վերապահում կատարված չէ: Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետից հետևում է, որ եթե կողմերն արբիտրաժային տրիբունալի կազմի կամ ընթացակարգի վերաբերյալ համաձայնության չեն եկել, ապա կազմի և ընթացակարգի նկատմամբ կիրառման ենթակա են լինում Օրենքի դրույթները, որոնց խախտումն էլ հիմք է արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման համար: Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետից հետևում է, որ նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալի կազմի և ընթացակարգի նկատմամբ կիրառվում է արբիտրաժային վճռի կայացման երկրի օրենսդրությունը, որով սահմանված պահանջների խախտումն էլ հիմք է վճռի հարկադիր կատարումը մերժելու համար:

Արբիտրաժային համաձայնության կողմերը ազատ են սահմանելու իրենց վեճը լուծող արբիտրների թիվը և նրանց ներկայացվող պահանջները (կրթությանը, տարիքին, որակավորմանը, մասնագիտական գործունեությանը և այլ ոլորտներին ներկայացվող): Այնուամենայնիվ, Օրենքով նախատեսված են մի շարք պարտադիր դրույթներ, որոնք կողմերի արբիտրաժային համաձայնությամբ շրջանցվել չեն կարող:

Ինչպես Օրենքի, այնպես էլ Մոդելային օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասերը նախատեսում են, որ արբիտրին կարող է բացարկ հայտնվել նաև այն դեպքում, երբ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում: Եթե բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով:

Բավական հետաքրքրական է այն հարցը, թե արդյոք կարող է կողմն արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման վարույթում վկայակոչել արբիտրաժային տրիբունալի կազմի անհամապատասխանությունը կողմերի համաձայնությանը կամ համապատասխան օրենքին, եթե արբիտրաժի ընթացքում բացարկ չի ներկայացրել արբիտրին կամ իր հայտնած բացարկի հիման վրա արբիտրաժային տրիբունալի՝ որոշում կայացնելուց հետո չի դիմել դատարան տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել օտարերկրյա փորձը: Այսպես, Մյունխենի վերաքննիչ դատարանը մերժել է այն առարկությունը, ըստ որի՝ արբիտրաժային տրիբունալի

կազմավորումը չի համապատասխանում կողմերի միջև կնքված համաձայնությանը: Արբիտրաժային տրիբունալը կազմվել էր միայն մեկ արբիտրից, մինչդեռ կողմերն արբիտրաժային վերապահմամբ համաձայնել էին նշանակելու երկու կամ ավելի արբիտրներ: Դատարանը նշել է, որ պատասխանողը տեղյակ է եղել արբիտրաժային տրիբունալի կազմավորմանը, սակայն չի առարկել վարույթի ընթացքում⁵²:

Դանիայի գերագույն դատարանը մեկ այլ գործով համարել է, որ կողմը չի կարող արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչման վարույթում վկայակոչել այնպիսի հիմք, որով կարող էր բացարկ հայտնել արբիտրին արբիտրաժի ընթացքում, սակայն չի հայտնել⁵³:

Մեխիկոյի շրջանի դաշնային դատարանը հետևյալ դիրքորոշումն է հայտնել. այն կողմը, որ իր հայտնած բացարկի հիման վրա կայացված որոշումը ստանալուց հետո չի դիմել դատարան իր արձարձած հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար, հետագայում՝ արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման վերաբերյալ վարույթի ընթացքում, չի կարող վկայակոչել այն՝ որպես վճռի չեղյալ ճանաչման հիմք⁵⁴:

Այսպիսով, կողմը, որ արբիտրաժի ընթացքում բացարկ չի ներկայացրել արբիտրին կամ իր հայտնած բացարկի հիման վրա արբիտրաժային տրիբունալի՝ որոշում կայացնելուց հետո չի

⁵² «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 134:

⁵³ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 155, 102-րդ կետ:

⁵⁴ Նույն տեղում, կետ 103:

դիմել դատարան տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար, արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման վարույթում այլևս չի կարող վկայակոչել արբիտրաժային տրիբունալի կազմի անհամապատասխանությունը կողմերի համաձայնությանը կամ համապատասխան օրենքին՝ որպես վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման հիմք:

Արբիտրաժային համաձայնությունը կարող է մեկ կամ մի քանի արբիտրների համար նախատեսել որոշակի պահանջներ, ինչպես՝ մի քանի լեզվի իմացություն, որոշակի պետության քաղաքացիության առկայություն, որոշակի երկրի փաստաբանի լիցենզիայի առակայություն, ինժեներական կրթություն ևն: Նման դեպքերում դատարանը պետք է ուշադրություն դարձնի հատկապես այն փաստին, թե արդյոք նախատեսված որակավորումներից որևէ մեկի անհամապատասխանությունը ընթացակարգի իմաստով անարդար է: Օրինակ՝ եթե արբիտրաժային վերապահումը պահանջում է, որ արբիտրը լինի գործարար ոլորտի ներկայացուցիչ կամ անձ, որ փորձառություն ունի որոշակի ոլորտում, իսկ փոխարենը նշանակվում է իրավաբան, որ չունի նման որակավորում, այնուամենայնիվ արդարությունը կարող է պահանջել, որ վճիռը կատարվի՝ չնայած նման խախտման առկայությանը⁵⁵:

Ներկայացնենք արբիտրաժային տրիբունալի կազմին ներկայացվող պահանջների խախտման հիմքի կիրառման

⁵⁵ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 133:

վերաբերյալ որոշ մեկնաբանություններ օտարերկրյա դատական ակտերից.

- 1978 թ. Ֆլորենցիայի վերաքննիչ դատարանը մի գործով համարել է, որ Լոնդոնում երկու արբիտրից բաղկացած արբիտրաժային տրիբունալը խախտել է կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությունը, չնայած նրան, որ դա համապատասխանում է այն երկրի օրենսդրությանը, որտեղ տեղի է ունեցել արբիտրաժը: Արբիտրաժային վերապահումը նախատեսում էր երեք արբիտրների նշանակում, սակայն կողմերի նշանակած երկու արբիտրները չէին նշանակել երրորդին, քանի որ իրենք գործի ելքի վերաբերյալ համաձայնության էին եկել, որը տվյալ պահին, գործող անգլիական օրենսդրության համաձայն, թույլատրելի է եղել:

- Միացյալ Նահանգների Երկրորդ շրջանի վերաքննիչ դատարանը հրաժարվել է ճանաչել և կատարել արբիտրաժային վճիռը՝ հիմնավորելով, որ կողմերի միջև կնքված համաձայնությամբ նախատեսված արբիտրաժային տրիբունալի կազմավորման մասին դրույթը խախտվել է, քանի որ համաձայնությամբ սահմանված նշանակման գործընթացը չի կատարվել: Կողմերից մեկի դիմումի հիման վրա նախագահողին դատարանն էր նշանակել, այնինչ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված էր, որ նախագահողի վերաբերյալ համաձայնության գալու համար կողմերի նշանակած երկու արբիտրներին ժամանակ պետք է տրվեր⁵⁶:

- Ի տարբերություն նախորդիվ ներկայացված որոշման՝ «China Nanhai» գործում Հոնկոնգի բարձր դատարանը որոշում է

⁵⁶ Նույն տեղում, էջ 135:

կայացրել առ այն, որ չնայած արբիտրաժային տրիբունալի կազմավորման վերաբերյալ կողմերի միջև համաձայնությունը չի պահպանվել, այնուամենայնիվ վճռի կատարումը հարկադրող դատարանը պետք է իր հայեցողությամբ հարկադրի վճռի կատարումը, քանի որ դատարանն առկա խախտումը համեմատաբար աննշան է համարել⁵⁷:

Այժմ անդրադառնանք արբիտրաժի ընթացակարգին ներկայացվող պահանջներին: Այսպես, Օրենքի 19-րդ հոդվածը նախատեսում է, որ կողմերը Օրենքի դրույթների պահպանմամբ կարող են իրենց հայեցողությամբ համաձայնել, որ արբիտրաժային տրիբունալն իրականացնի վարույթը: Եթե բացակում է կողմերի այդպիսի համաձայնությունը, ապա արբիտրաժային տրիբունալը, Օրենքի դրույթների պահպանմամբ, արբիտրաժային վարույթն իրականացնում է ՀՀ ՔԴՕ-ի համապատասխան ընթացակարգային կանոններով⁵⁸:

⁵⁷ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 133: Այստեղ մասնավորապես նշված է, որ դատարանը պետք է մանրամասնորեն քննի հետևյալ հարցը. արդյո՞ք իսկապես անհրաժեշտ է վճռի կատարման մերժումը, քանի որ այն կողմը, որը հրաժարվում է ճանաչել և կատարել վճիռը, զրկվել է իր իրավունքներից, թե՞, ըստ էության, այդ կողմը ստացել է արբիտրաժային արդար քննություն՝ ընդամենը մեկ չնչին ընթացակարգային շեղումով: Սա դատական գործի այն տեսակն է, որտեղ դատարանն իրավասու է որոշում կայացնելու վճռի հարկադրի կատարման տրամադրման վերաբերյալ, եթե առկա է «de minimis» խախտում:

⁵⁸ 2022 թ. դեկտեմբերի 23-ի խմբագրությամբ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը

Հատկանշական է, որ Մոդելային օրենքի 19-րդ հոդվածը հնարավորություն է տալիս տրիբունալին արբիտրաժի ընթացակարգի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում սեփական հայեցողությամբ որոշելու այդ կանոնները:

Հարկ է արձանագրել, որ Նյու Յորքի կոնվենցիան նպատակ չունի պարտվող կողմին իրավունք վերապահելու արբիտրաժային տրիբունալի ընթացակարգային որոշումները բողոքարկելու: Այս հիմքը ենթակա չէ կիրառման այն դեպքերում, երբ տվյալ գործը քննող դատարանի իրավական մոտեցումը տարբերվում է արբիտրների տեսակետից, օրինակ՝ արդյոք անհրաժեշտ էր լսել վկային, թույլատրել խաչաձև հարցաքննումը, կամ որքան պետք է լիներ գրավոր դիմումների թույլատրելի

նախատեսում էր, որ վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալն արբիտրաժային վարույթն իրականացնում է արբիտրաժի կանոնակարգով սահմանված ձևով, իսկ արբիտրաժի կանոնակարգով նման ձև սահմանված չլինելու դեպքում արբիտրաժային վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան ընթացակարգային կանոններով: Սակայն «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2023 թ. մայիսի 3-ի խմբագրմամբ փոփոխվել է նաև 19-րդ հոդվածի 2-րդ մասը, որը նախատեսում է, որ կողմերի այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան ընթացակարգային կանոններով: Այսինքն՝ վարույթի ընթացակարգի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալն այժմ պարտավոր է ղեկավարվել ոչ թե արբիտրաժի կանոնակարգով, այլ ՀՀ ՔԴՕ համապատասխան ընթացակարգային կանոններով:

քանակը: Այս հիմքն ուղղված է համաձայնեցված ընթացակարգից առավել հիմնարար շեղումների, որոնք կարող են ներառել իրավիճակներ, որտեղ, օրինակ, կողմերը համաձայնել են օգտագործելու մի կենտրոնի կանոններ, մինչդեռ արբիտրաժի վարումը կատարվում է մեկ այլ կենտրոնի կանոններով, կամ նույնիսկ երբ կողմերը համաձայնել են, որ ոչ մի ինստիտուցիոնալ կանոններ չեն կիրառվելու⁵⁹:

Ընթացակարգային խախտումների հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու համար դատարանները գնահատում են խախտված պահանջների կարևորությունը և նման խախտման հետևանքները: Օրինակ՝ կանադական դատարանները, հիմքում ունենալով օրենքի այն կարգավորումը, ըստ որի՝ ընթացակարգային խախտումների առկայության դեպքում դատարանը *կարող է* չեղյալ ճանաչել արբիտրաժային վճիռը, իրենց վերջին որոշումներում հարկադիր կատարման են թույլատրում արբիտրաժային վճիռներ, որոնք կայացվել են ընթացակարգային կանոնների որոշակի խախտումներով: Որոշելու համար՝ կիրառել իրենց հայեցողական լիազորությունները նման դեպքերում, թե ոչ, դատարանները պետք է գնահատեն թույլ տրված ընթացակարգային խախտման բնույթը, պարզեն, թե արդյոք այդ խախտումը խաթարել է արբիտրաժային վարույթի ընթացքը, և թե ինչ չափով է այն անդրադարձել արբիտրաժային վճռի կայացման վրա⁶⁰:

⁵⁹ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 136:

⁶⁰ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 156, 107-րդ կետ:

Ինչպես Օրենքը, այնպես էլ Մոդելային օրենքը նախատեսում են, որ արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է պատճառաբանված լինի, բացառությամբ եթե կողմերը համաձայնել են, որ պատճառաբանություններ չպետք է նշվեն վճռում, կամ եթե կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ՝ Օրենքի 30-րդ հոդվածին համապատասխան:

Տարբեր մոտեցումներ են ձևավորվել արբիտրաժային վճռի պատճառաբանվածության չափանիշի վերաբերյալ: Ավստրալական դատարանը համարել է, որ պատճառաբանվածության չափանիշը պետք է լինի նույնը, ինչ դատական ակտերի դեպքում: Այնուամենայնիվ, սովորաբար դատարանները պատճառաբանվածության ավելի մեղմ ստանդարտներ են սահմանում արբիտրաժային վճիռների, քան դատական ակտերի համար: Գերմանական դատարանները, օրինակ, որդեգրել են այն մոտեցումը, որ արբիտրաժային վճիռը պետք է լինի պատճառաբանված այնպես, որ դրանում արտացոլված լինեն հիմնական պնդումները, և հնարավոր լինի հասկանալ արբիտրաժային վճռի հիմնավորումները⁶¹:

Ներկայացնենք արբիտրաժային վարույթի ընթացակարգի խախտման հիմքի կիրառման վերաբերյալ որոշ մեկնաբանություններ օտարերկրյա դատական ակտերից.

- Իսպանիայի վերաքննիչ դատարանը համարել է, որ արբիտրաժային տրիբունալը, արբիտրների ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելով այն պայմաններում, երբ կողմերի արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է եղել որոշումների միաձայն ընդունման կարգ, թույլ է տվել

⁶¹ Նույն տեղում, էջ 158, 117-118-րդ կետեր:

արբիտրաժային վարույթի ընթացակարգի այնպիսի խախտում, որը հիմք է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու⁶²:

- Շվեյցարիայի վերաքննիչ դատարանը մերժել է գերմանական արբիտրաժային վճռի ճանաչումը և կատարումը՝ համարելով, որ արբիտրաժային վարույթը չի ընթացել կողմերի համաձայնությանը համապատասխան: Արբիտրաժային համաձայնությունը նախատեսում էր արբիտրաժի անցկացում Համբուրգում, որտեղ «բոլոր վեճերը պետք է լուծվեին մեկ և միևնույն արբիտրաժային վարույթի ընթացքում», փոխարենը արբիտրաժային վարույթն ընթացել էր երկու փուլով՝ նախ՝ մասնագիտական արբիտրաժ՝ երկու մասնագետի մասնակցությամբ, ապա՝ պատշաճ արբիտրաժային վարույթ երեք արբիտրից բաղկացած տրիբունալի առաջ⁶³:

- Պատասխանողը մեկ այլ գործով պնդել է, որ արբիտրաժային տրիբունալը պետք է կիրառեր արբիտրաժային հաստատության նախկին կանոնակարգը, այլ ոչ թե դրա փոփոխված տարբերակը, սակայն Հոնկոնգի առաջին ատյանի դատարանը որոշել է կիրառել իր հայեցողական լիազորությունը և թույլատրել արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը⁶⁴:

- Ի տարբերություն Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի՝ որոշ պետությունների օրենսդրություններով նախատեսված է արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության վերաբերյալ

⁶² Նույն տեղում, էջ 155, կետ 104-րդ:

⁶³ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 138:

⁶⁴ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 156, 109-րդ կետ:

նախնական որոշում կայացնելու պարտականություն այն դեպքում, երբ նրա իրավասությունը վիճարկվում է արբիտրաժի ընթացքում: Այնուամենայնիվ, էստոնական դատարանը համարել է, որ իր իրավասության վերաբերյալ նախնական որոշում չկայացնելով և հետագայում այդ հարցին վերջնական վճռում անդրադառնալով՝ արբիտրաժային տրիբունալը թույլ չի տվել այնպիսի ընթացակարգային խախտում, որի հիման վրա արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչվի⁶⁵:

- Դատարանները համարել են, որ վճռի չեղյալ ճանաչման հիմք է ընթացակարգային այնպիսի խախտումը, երբ արբիտրաժային տրիբունալը վեճի լուծման համար կողմերի համաձայնությամբ ընտրվածից տարբեր իրավունք է կիրառում: Նման դեպքերում, սակայն, դատարանները պետք է սահմանափակվեն գնահատելով միայն արբիտրաժային տրիբունալի՝ իրավունքի ընտրության, այլ ոչ թե ընտրված իրավունքի կիրառման և մեկնաբանման իրավաչափությունը⁶⁶:

- Այն, որ արբիտրաժային վճիռը ստորագրել են երեք արբիտրաներից երկուսը, և վճռում նշված չի եղել բացակայող ստորագրության պատճառը, հիմք չի ծառայել կանադական դատարանի համար չեղյալ ճանաչելու արբիտրաժի վճիռը, քանի որ արբիտրաժային տրիբունալի նախագահին այդ պատճառի մասին հայտնել էր դատարանին արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման վարույթի ընթացքում⁶⁷:

⁶⁵ Նույն տեղում, էջ 157, 113-րդ կետ:

⁶⁶ Նույն տեղում, 114-րդ կետ:

⁶⁷ Նույն տեղում, էջ 158, 122-րդ կետ:

§6. Արբիտրաժային վճռի պարտադիր դարձած չլինելը, չեղյալ ճանաչվելը և կատարումը կասեցված լինելը

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետը նախատեսում է արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը մերժելու երեք ինքնուրույն հիմքեր.

- արբիտրաժային վճիռը չի դարձել պարտադիր կողմերի համար⁶⁸,

⁶⁸ Կոնվենցիայի տեքստի պաշտոնական տարբերակներից երեքում անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն, օգտագործվում է «վճիռը կողմերի համար պարտադիր չի դարձել», իսկ մեկ այլ պաշտոնական տարբերակում՝ ռուսերեն տեքստում, օգտագործվում է «վճիռը կողմերի համար վերջնական չի դարձել» ձևակերպումը: Կոնվենցիայի հայերեն թարգմանության մեջ ևս օգտագործվում է՝ «որոշումը Կողմերի համար դեռևս վերջնական չի դարձել»: Ուղեցույցում նշված է. «Նյու-Յորքի Կոնվենցիայի հեղինակների կողմից սույն համատեքստում առավելապես օգտագործվել է «պարտադիր իրավական ուժ ունեցող» եզրույթը, քան թե «վերջնական» եզրույթը (վերջինս համարժեքորեն կիրառվել է 1927թ.-ի Ժնևի Օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման վերաբերյալ կոնվենցիայում): «Պարտադիր իրավական ուժ ունեցող» եզրույթի օգտագործումը նպատակ ունի հստակեցնելու այն, որ կողմն իրավունք ունի դիմել արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման համար այն բանից հետո, երբ այդ վճիռը կայացվել է արբիտրաժային տրիբունալի կողմից: Սա նշանակում էր, որ կողմի համար անհրաժեշտություն չկար ստանալու կատարողական թերթ (exequatur) կամ թողնել դրա ստացումն այն երկրի դատարանի վրա, որտեղ կամ որի օրենսդրության համաձայն վճիռը կայացվել էր (հայտնի է որպես կրկնակի կատարողական թերթ (double exequatur)), ինչպես պահանջվում էր 1927 թվականի Ժնևի կոնվենցիայով: Տե՛ս «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 140:

- արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվել,
- արբիտրաժային վճռի կատարումը կասեցվել է:

Դատարանների մոտեցումներն առ այն, թե որ պահից սկսած է վճիռը ձեռք բերում պարտադիր իրավական ուժ, տարբերվում են: Որոշ դատարաններ համարում են, որ այդ պահը որոշվում է այն երկրի ներպետական իրավունքով, որտեղ վճիռը կայացվել է: Այլ դատարաններ որոշում են կայացնում՝ անկախ վճռի նկատմամբ կիրառվող իրավունքից, և համարում, որ օտարերկրյա արբիտրաժային վճիռները կողմերի համար պարտադիր իրավական ուժ են ձեռք բերում այն դեպքում, երբ դրանց դեմ բողոքարկման տարրական միջոցներ առկա չեն կամ այլևս առկա չեն: Սա նշանակում է, որ արբիտրաժային վճիռն այլևս ենթակա չէ ըստ էության բողոքարկման արբիտրաժային վերաքննիչ մարմնում կամ դատարանում: Այստեղ դատարանները որոշ դեպքերում հիմնվում են կողմերի համաձայնության վրա: Եթե, օրինակ, կողմերը որոշել են կիրառել Առևտրի միջազգային պալատի կանոնները, ապա դրանց հոդված 28(6)-ը սահմանում է, որ «յուրաքանչյուր արբիտրաժային վճիռ պետք է կողմերի համար ունենա պարտադիր իրավական ուժ»⁶⁹:

Հաջորդիվ, Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետից հետևում է, որ արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու և դրա կատարումը կասեցնելու մասին որոշում ընդունելու իրավասություն ունի այն պետության դատարանը, որտեղ կամ որի իրավունքին համապատասխան կայացվել է այդ

⁶⁹ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 140-141:

վճիռը: Համարվում է, որ այս դատարանները վճռի նկատմամբ ունեն «վերահսկողական» կամ «առաջնային» իրավասություն: Հակառակ սրան՝ այն դատարանները, որոնց առջև վճռի ճանաչում և կատարում է հայցվում, համարվում են վճռի նկատմամբ «կատարողական» կամ «երկրորդական» իրավասություն ունեցող. դրանք սահմանափակված են միայն իրավասությամբ որոշելու, թե արդյոք առկա են Կոնվենցիայով նախատեսված ճանաչման կամ կատարման մերժման հիմքեր⁷⁰:

Առաջնային իրավասություն ունեցող դատարանը վճիռը պետք է չեղյալ ճանաչած լինի, որպեսզի վճիռը չեղյալ ճանաչված լինելու մասին առարկությունն ընդունվի: Վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարար չէ վճիռը չեղյալ ճանաչելու համար: Սա կանխում է պարտվող կողմի՝ չեղարկման գործընթացի միջոցով կատարումը հետաձգելու հնարավորությունը⁷¹: Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու իրավասություն ունեցող դատարանին վճռի չեղյալ ճանաչման վերաբերյալ միջնորդություն ներկայացված լինելու դեպքում դատարանը, որտեղ հայցվում են վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը, կարող է իր հայեցողությամբ հետաձգել իր կայացնելիք որոշումը, ինչպես նաև վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը հայցող կողմի միջնորդության հիման վրա պարտադրել մյուս կողմին ներկայացնելու համազոր ապահովում:

⁷⁰ Նույն տեղում, էջ 142:

⁷¹ Նույն տեղում:

Թեև արբիտրաժային վճռի կատարումը չեղյալ է ճանաչվում այն երկրում, որտեղ կամ որի օրենսդրության ներքո վճիռը կայացվել է, այլ երկրի դատարանը կարող է այդուհանդերձ ճանաչել և կատարել վճիռը Կոնվենցիայի ռեժիմից դուրս: Ֆրանսիան այս հարցում լավագույն օրինակն է, որտեղ վճիռը կատարման ենթակա է ճանաչվում՝ հակառակ այն հանգամանքին, որ չեղյալ է ճանաչվել դրա կայացման երկրում: Ֆրանսիայի նմանօրինակ մոտեցումը հիմնվում է ոչ թե Կոնվենցիայի, այլ ներպետական օրենքի վրա, որը շրջանցում է Կոնվենցիան հոդված 7(1)-ի միջոցով, որն առավել բարենպաստ իրավունքի վերաբերյալ դրույթն է: Սա դատարաններին թույլ է տալիս կիրառել կատարման վերաբերյալ ավելի բարենպաստ ռեժիմ, քան Կոնվենցիայինն է, այսինքն՝ այն, որ վճռի ճանաչման և կատարման կհանգեցնի այն դեպքում, երբ Կոնվենցիան դա չի ապահովում⁷²: Այս հարցի վերաբերյալ համանման մոտեցում ունեն նաև կանադական դատարանները, որոնք համարել են, որ հայեցողություն ունեն հարկադիր կատարման թույլատրելու այլ դատարանի չեղյալ ճանաչած արբիտրաժային վճիռը⁷³:

Անդրադառնալով արբիտրաժային վճռի կատարումը կասեցված լինելու հիմքին՝ նշենք, որ ինչպես Կոնվենցիան, այնպես էլ Օրենքը արբիտրաժային վճռի կատարումը կասեցնելու ինստիտուտ չեն նախատեսում⁷⁴: Դատարանները

⁷² Նույն տեղում, էջ 143:

⁷³ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 182, 48-րդ կետ:

⁷⁴ 2024 թ. ապրիլի 11-ին ընդունված և 2025 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտնելիք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-193-Ն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսվում

հիմնականում բացատրել են այս հասկացությունը՝ անդրադառնալով արբիտրաժային վճռի կայացման երկրում դատարանի՝ վճռի կատարման կասեցմանը (հետևաբար ոչ օրենքի գործողությամբ, օրինակ, երբ վճռի չեղյալ ճանաչման մասին որոշման քննությունն է ընթանում)⁷⁵:

է ՀՀ ՔԴՕ 316-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4. Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունվելու դեպքում դրա կատարումը կասեցվում է մինչև դիմումի քննության արդյունքներով եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը»:

⁷⁵ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 143-144:

§7. Վեճի առարկան արբիտրաժով լուծման ենթակա չլինելը

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետը և 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետը նախատեսում են, որ արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվում և դրա հարկադիր կատարումը մերժվում է, եթե, համաձայն ՀՀ օրենսդրության, վեճի առարկան արբիտրաժով ենթակա չէ լուծման (արբիտրունակ չէ):

Վեճի արբիտրունակության և հանրային կարգի վերապահման ինստիտուտները բավականին փոխկապակցված են միմյանց: Օրինակ՝ Չամբիայի, Թունիսի և Չինբաբվեի օրենսդրություններով ուղղակիորեն նախատեսված է, որ հանրային կարգի վերապահման հիմքը կիրառվում է, եթե վեճն արբիտրունակ չէ: Ֆինլանդիայում և Լիբանանում վեճի արբիտրունակ չլինելն ինքնին հիմք չէ կայացված արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու կամ դրա հարկադիր կատարումը մերժելու համար, եթե դա չի հակասում հանրային կարգին⁷⁶:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ նշենք, որ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ գործում է քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության անսահմանափակ իրավունք, արբիտրաժային կարգով կարող են քննվել և լուծվել միայն որոշակի բնույթի իրավահարաբերություններից բխող վեճերը: Մասնավորապես՝ Օրենքից հետևում է, որ արբիտրաժի միջոցով կարող են լուծվել

⁷⁶ The Guide to Challenging and Enforcing Arbitration Awards - Second Edition, Arbitrability and Public Policy Challenges.

առևտրային բնույթ ունեցող վեճերը, իսկ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է, որ «առևտրային» հասկացությունը ներառում է քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը, ներառյալ այդ իրավահարաբերությունների առնչությամբ գործարքները կնքված լինելու կամ դրանց անվավերության հետ կապված հարցերը: Առևտրային բնույթն առանց սահմանափակման մասնավորապես ներառում է բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված վեճերը, ապրանքների մատակարարման ու փոխանակման, ծառայությունների մատուցման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալության, ֆակտորինգի, վարձակալության, լիզինգի, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների հետ կապված իրավահարաբերությունները (Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն ամբողջությամբ փոխառված է Մոդելային օրենքից):

Հնդկաստանի բարձրագույն դատարանը, հղում անելով Մոդելային օրենքում օգտագործված «առևտրային» հասկացությանը և մեկնաբանելով այն, համարել է, որ դա ներառում է բոլոր այն առևտրային հարաբերությունները, որոնք չունեն ամուսնաընտանեկան, մշակութային, սոցիալական կամ քաղաքական բնույթ: Դատարանն այս գործով այն դիրքորոշումն

է հայտնել, որ խորհրդատվական ծառայությունների մատուցումը առևտրային բնույթ ունի: Մեկ այլ գործով՝ նույն դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ կազմակերպության և տնօրենի միջև հարաբերությունները ևս առևտրային բնույթ ունեն, և նրանց միջև կնքված պայմանագրի նկատմամբ կիրառման ենթակա են արբիտրաժային վերապահման վերաբերյալ կանոնները: Կանադական դատարանը համարել է, որ իրավահարաբերության առևտրային լինելը կախված չէ դրա մասնակիցների կարգավիճակից, մասնավորապես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ լինելու կամ չլինելու հանգամանքից: Օրինակ՝ բնակելի անշարժ գույքի վաճառքը համարվել է առևտրային իրավահարաբերություն, հատկապես քանի որ տեղի է ունեցել պրոֆեսիոնալ գործակալների մասնակցությամբ և խոշոր գործարքին վերաբերող օրենսդրական նորմերի պահպանմամբ: Բացի դրանից՝ Ազատ առևտրի մասին հարավամերիկյան պայմանագրին (NAFTA) համապատասխան իրականացվող արբիտրաժը մասնավոր ներդրողի և նշված պայմանագրի անդամ պետության միջև ևս Մոդելային օրենքի իմաստով համարվել է առևտրային արբիտրաժ, քանի որ ներդրողի և պետության միջև հիմնական հարաբերությունները կապված են եղել ներդրումների կատարման հետ⁷⁷:

Այնուամենայնիվ, բիզնեսին վերաբերող ոչ բոլոր հարաբերություններն են համարվում առևտրային բնույթ ունեցող, օրինակ՝ եթե խոսքը գործատուի և աշխատողի, այլ ոչ

⁷⁷ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 10, 7-րդ կետ:

թե պատվիրատուի և կատարողի հարաբերությունների մասին է. այս դեպքում դրանք Մոդելային օրենքի իմաստով համարվում են ոչ առևտրային բնույթ ունեցող: Կանադական դատարանն էլ գործերից մեկով, ինչպես նշել ենք վերևում, իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ վնաս պատճառելու հետ կապված հարաբերությունից բխող վեճերը ենթակա են քննության արբիտրաժի միջոցով, եթե հարաբերությունը, որի ընթացքում վնաս է պատճառվել, առևտրային բնույթ ունի⁷⁸:

Օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ արբիտրաժի լուծմանը կարող են հանձնվել նաև ոչ առևտրային բնույթ ունեցող այն վեճերը, որոնց՝ արբիտրաժային կարգով լուծման հնարավորությունը նախատեսված է օրենքով: Օրինակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի⁷⁹ 264-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, աշխատանքային վեճերը, ՀՀ ՔԴՕ-ի և Օրենքի պահանջներին համապատասխան, կարող են հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը, եթե աշխատողի և գործատուի միջև կնքվել է համաձայնություն, կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված է վեճն արբիտրաժին հանձնելու հնարավորություն: Մեկ այլ օրինակ. ՀՀ ընտանեկան օրենսգրքի⁸⁰ 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե ամուսինների ընդհանուր գույքի բաժանումը չի շոշափում երրորդ անձանց շահերը, ապա ամուսիններն իրենց ընդհանուր գույքը բաժանելու հետ կապված վեճը փոխադարձ համաձայնությամբ կարող են հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը՝ ՀՀ ՔԴՕ-ի և Օրենքի պահանջներին համապատասխան:

⁷⁸ Նույն տեղում, 8-րդ կետ:

⁷⁹ Ընդունվել է՝ 09.11.2004, ուժի մեջ է մտել՝ 21.06.2005:

⁸⁰ Ընդունվել է՝ 09.11.2004, ուժի մեջ է մտել՝ 19.04.2005:

Այն հարցը, թե արդյոք վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի միջոցով, պետք է որոշվի այն երկրի իրավունքով, որտեղ վճռի ճանաչման և կատարման դիմում է ներկայացվել: Արբիտրաժին ենթակա չլինելու հանգամանքը պետք է վերաբերի պահանջի նյութական մասին և ոչ թե ձևական⁸¹:

Քննարկվող հիմքի կիրառմամբ՝ արբիտրաժային վճռի հարկադիր կատարման մերժման սակավաթիվ գործեր են առկա, որոնցից են հետևյալները.

- Բելգիայի վճռաբեկ դատարանի որոշումն արբիտրաժային վճռի կատարումը մերժելու այն հիմքով, որ վեճի առարկա բացառիկ դիստրիբյուցիայի պայմանագրի դադարեցումը ենթակա չէ արբիտրաժային կարգով լուծման՝ ըստ ներպետական օրենսդրության, քանի որ դիստրիբյուտորներին վերաբերող հատուկ օրենքով՝ Բելգիայի դատարաններին նմանատիպ գործերով բացառիկ իրավասություն էր վերապահված,

- Մոսկվայի շրջանի դաշնային առևտրային դատարանի որոշումն առ այն, որ Սլովակիայի արբիտրաժային վճիռը ենթակա չէ կատարման, քանի որ կայացվել է այն բանից հետո, երբ արբիտրաժային դատարանը ռուս պատասխանողին սնանկ էր ճանաչել: Ռուսաստանի Դաշնության «Սնանկության մասին» օրենքի համաձայն՝ արբիտրաժային դատարանները բացառիկ իրավասություն ունեն սնանկ ճանաչված անձի պարտապանների հանդեպ ունեցած պահանջների բնույթի և

⁸¹ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 146:

չափի մասով: Դատարանն իր որոշումը հիմնավորել է Կոնվենցիայի 5(2)(բ) հոդվածով, քանի որ արբիտրունակ լինելու հարցը կարող է ներառվել պետության հանրային կարգի շրջանակում⁸²:

⁸² Նույն տեղում:

§8. Հանրային կարգի վերապահումը

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետը նախատեսում է, որ արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվում, եթե վճիռը հակասում է ՀՀ հանրային կարգին, իսկ 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը սահմանում է, որ արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը մերժվում է, եթե վճռի ճանաչումը և կատարումը հակասում են ՀՀ հանրային կարգին:

Անդրադառնալով «հանրային կարգ» հասկացությանն ու հանրային կարգի վերապահման հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հարցին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից ներկայացված փաստարկներն անհիմն են, քանի որ «հանրային կարգ» ասելով պետք է հասկանալ Սահմանադրությունում և օրենքներում ամրագրված հիմնական սկզբունքները: Արբիտրաժային դատարանի վճիռը կարող է ճանաչվել իրավունքի հիմնարար սկզբունքները խախտող այն դեպքում, եթե դրա կատարման արդյունքում կձեռնարկվեն գործողություններ, որոնք կամ անմիջականորեն արգելված են օրենքով, կամ պետության ինքնիշխանությանը կամ անվտանգությանը վնաս են հասցնում՝ շոշափելով սոցիալական մեծ խմբերի շահերը, ինչն անհամատեղելի է պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգի կառուցման սկզբունքների հետ, կամ խախտվում են մասնավոր անձանց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև որոնք

հակասում են քաղաքացիական օրենսդրության հիմնական սկզբունքներին, ինչպիսիք են մասնակիցների հավասարությունը, սեփականության անձեռնմխելիությունը, պայմանագրի ազատությունը: «Հանրային կարգ» հասկացության բովանդակությունը որպես իրավական հիմնարար սկզբունքներ, օժտված են բարձրագույն իմպերատիվությամբ, համընդհանրությամբ, հասարակական և հանրային առանձնահատուկ նշանակությամբ, կազմում են պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգի կառուցման հիմքը»⁸³:

Անդրադառնալով միջազգային իրավակիրառ փորձին՝ նշենք, որ այստեղ հանրային կարգի վերապահումը մեկնաբանվում է բավական նեղ իմաստով և կիրառվում բացառիկ դեպքերում, եթե առկա են դատավարական և նյութաիրավական լուրջ անարդարություններ⁸⁴, խախտվել են բարոյականության և արդարության հիմնարար սկզբունքները⁸⁵: Դատարանները համարել են, որ հանրային կարգի վերապահումը կարող է կիրառվել հետևյալ դեպքերում.

- խախտվել է իրավունքի, բարոյականության կամ արդարության հիմնարար սկզբունք,

⁸³ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ-2/39457/02/23 գործով 2024 թ. փետրվարի 23-ի որոշումը:

⁸⁴ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 159, 129-րդ կետ:

⁸⁵ Anselmo Reyes, Judicial Support of International Commercial Arbitration under the Model Law: A Précis of Available Options for Judges, p. 108.

- արբիտրաժային վճիռը հիմնովին հակասում է արդարադատության հիմնարար սկզբունքներին կամ վկայում է արբիտրաժային տրիբունալի կոռումպացված լինելու մասին,

- արբիտրաժային վճիռը հակասում է հասարակական և տնտեսական կյանքի անկյունաքարային սկզբունքներին⁸⁶:

Օրինակ՝ հանրային կարգի վերապահումը կարող է կիրառվել այն դեպքում, երբ տեղի է ունեցել կոռուպցիա, խաբեություն կամ վարութային կոպիտ խախտում:

Միջազգային իրավակիրառ պրակտիկայում տարբերակվում են նաև «ազգային հանրային կարգ» և «միջազգային հանրային կարգ» հասկացությունները, որոնցից վերջինը համարվում է առավել նեղ կատեգորիա⁸⁷: «Հանրային կարգի» վերաբերյալ 2002 թ. հրատարակված Միջազգային իրավունքի ասոցիացիայի խորհրդատվությունները (այսուհետև նաև՝ ՄԻԱ-ի խորհրդատվություններ) համարվում են միջազգային լավագույն փորձի արտացոլում: Դրա շրջանակում ընդհանուր խորհրդատվություններից է այն, որ վճիռների վերջնական լինելը «միջազգային առևտրային արբիտրաժում պետք է հարգվի՝ բացառությամբ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում» (Ընդհանուր բաժին, հոդված 1(ա)), և այդպիսի բացառիկ հանգամանքները «մասնավորապես կհամարվեն առկա, եթե միջազգային արբիտրաժային վճռի ճանաչումը կամ կատարումը հակասի միջազգային հանրային կարգին» (Ընդհանուր բաժին, հոդված 1(բ)): ՄԻԱ-ի

⁸⁶ Նույն տեղում, էջ 160, 132-րդ կետ:

⁸⁷ Նույն տեղում, 130-րդ կետ:

խորհրդատվությունների հոդված 1(գ)-ն սահմանում է, որ «միջազգային հանրային կարգ» արտահայտությունն օգտագործվում է՝ նշելու երկրի ճանաչած սկզբունքների և կանոնների ամբողջությունը, որոնք, իրենց բնույթից ելնելով, կարող են արգելել միջազգային առևտրային արբիտրաժի շրջանակում ընդունված արբիտրաժային վճռի ճանաչումը կամ կատարումը այն դեպքում, երբ այդպիսի վճռի ճանաչումը կամ կատարումը կարող է հանգեցնել դրանց խախտման, կամ դատավարական նորմերի մասով, համաձայն որոնց՝ այն ընդունվել է (միջազգային հանրային դատավարական կարգ) կամ բովանդակության մասով (միջազգային հանրային նյութական կարգ): ՄԻԱ-ի խորհրդատվությունները սահմանում են, որ յուրաքանչյուր պետության միջազգային հանրային կարգը ներառում է հետևյալը.

- արդարադատության և բարոյականության վերաբերյալ հիմնարար սկզբունքներ, որոնք պետությունը ցանկանում է պաշտպանել, անգամ եթե խնդիրն ուղղակիորեն իրեն չի վերաբերում,

- կանոններ, որոնք նպատակ ունեն ծառայելու պետության քաղաքական, սոցիալական կամ տնտեսական էական շահերին, որոնք հայտնի են որպես «lois de police» կամ «հանրային կարգի կանոններ»,

- պետության պարտականությունը՝ հարգելու այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հանդեպ ստանձնած իր պարտավորությունները⁸⁸:

⁸⁸ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 148-149:

Ներկայացնենք գործեր, որտեղ դատարանները մերժել են հանրային կարգի վերապահման հիմքի կիրառումը.

- Ֆինանսական միջոցների բացակայություն: Պորտուգալիայի արդարադատության բարձրագույն դատարանը մերժել է հանրային կարգի խախտման այն հիմնավորումը, ըստ որի՝ պորտուգալացի պատասխանողը չէր ներկայացել Նիդերլանդների արբիտրաժային դատարան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

- Արբիտրների անկողմնակալության բացակայություն: Դատարանները համարում են, որ «կողմնակալության տպավորությունը» բավարար չէ: Պետք է լինի «իրական կողմնակալություն», այսինքն՝ արբիտրը պետք է գործի կողմնակալ կերպով:

- Արբիտրաժային վճռում առկա հիմքերի բացակայություն: Այն երկրների դատարանները, որտեղ արբիտրաժային վճռում հիմքերի առկայությունը պարտադիր է, ընդհանուր առմամբ կատարում են այն արբիտրաժային վճիռները, որոնք որևէ հիմք չեն պարունակում, սակայն ընդունվել են այնպիսի երկրներում, որտեղ նման վճիռները վավեր են համարվում:

Այժմ ներկայացնենք գործեր, որտեղ դատարանները կիրառել են հանրային կարգի վերապահման հիմքը.

- Բավարիայի վերաքննիչ դատարանը մերժել է ռուսական վճռի ճանաչումն ու կատարումը հանրային կարգին հակասելու հիմքով, քանի որ վճիռը կայացվել էր այն բանից հետո, երբ կողմերն արդեն համաձայնության էին հասած եղել, ինչին արբիտրները տեղյակ չէին եղել:

- Ռուսաստանի Դաշնության Տոմսկի շրջանի դաշնային առևտրային դատարանը մերժել է Ֆրանսիայում կայացված Առևտրի միջազգային պալատի վճիռը՝ համարելով, որ փոխառության մասին համաձայնությունները, որոնց վերաբերյալ ընդունվել էր վճիռը, կնքվել են միևնույն խմբի ընկերությունների միջև անօրինական կերպով, իսկ կողմերի միջև ծագած վեճն արհեստականորեն է ստեղծվել⁸⁹:

⁸⁹ Նույն տեղում, էջ 152-154:

ԳԼՈՒԽ 2. ԱՐՔԻՏՐԱԺԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԶԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Արբիտրաժային վճիռը կարող է վիճարկվել միայն վճիռը չեղյալ ճանաչելու դիմումի ներկայացման միջոցով: ՔԴՕ-ի 316-րդ հոդվածից հետևում է, որ ՀՀ դատարաններում կարող են վիճարկվել միայն այն արբիտրաժային վճիռները, որոնք կայացվել են ՀՀ տարածքում: Միջազգային իրավակիրառ պրակտիկայում ընդունված է, որ արբիտրաժային վճիռները կարող են վիճարկվել միայն այն պետության դատարաններում, որի իրավազորության ներքո է գտնվում արբիտրաժի վայրը: Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ արբիտրաժի վայրը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում այն որոշում է արբիտրաժային տրիբունալը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ կողմերի հարմարությունը: Այնուամենայնիվ, եթե կողմերը չեն սահմանել արբիտրաժի վայրը, ինչպես նաև եթե արբիտրաժային դատարանն այն չի որոշել, ապա արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը քննելու իրավասություն ունեցող պետք է համարվի այն պետության դատարանը, որի տարածքում փաստացիորեն իրականացվել է արբիտրաժը, այսինքն՝ տարածքը, որտեղ կատարվել են վեճը արբիտրաժի միջոցով լուծելուն ուղղված համապատասխան գործողությունները, իսկ եթե դա էլ հնարավոր չէ որոշել, ապա՝ այն տարածքը, որտեղ անցկացվել է վերջին բանավոր լսումը⁹⁰:

⁹⁰ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 36, 11-րդ կետ:

Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու դիմումներով գործերի վարույթում վիճարկման առարկա է գործն ըստ էության լուծող արբիտրաժային վճիռը, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջանկյալ վճիռը: Այս առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ արբիտրաժային տրիբունալի կայացնելիք որոշումները, օրինակ՝ արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության վերաբերյալ որոշումը, արբիտրին ներկայացված բացարկի մասին արբիտրաժային տրիբունալի որոշումը ևն, դատարանը չի կարող վիճարկել և չեղյալ ճանաչել:

Դիմում ներկայացնելու իրավունք ունեն արբիտրաժային վարույթի մասնակիցները, ինչպես նաև այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ:

Արբիտրաժային վճիռների վիճարկման դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է առարկայական ընդդատություն, մասնավորապես, ըստ Օրենքի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը կարող է չեղյալ ճանաչել արբիտրաժային տրիբունալի վճիռը:

ՔԴՕ-ի 316-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը ներկայացվում է Օրենքով սահմանված ժամկետում: Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ չեղյալ ճանաչման դիմումը չի կարող ներկայացվել արբիտրաժային տրիբունալի վճիռը ստանալուց երեք ամիսը լրանալուց հետո, իսկ այն դեպքում, երբ դիմում է ներկայացվել Օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով, ապա՝ այդ դիմումի կապակցությամբ արբիտրաժային

տրիբունալի կայացրած վճռի օրվանից երեք ամիսը լրանալուց հետո:

ՔԴՕ-ի 316-րդ հոդվածի 3-րդ մասն էլ նախատեսում է, որ այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ արբիտրաժը կայացրել է վճիռ, կարող են ներկայացնել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ իմացել են այդ վճռի կայացման մասին: Անդրադառնալով այս երկու նորմերի հարաբերակցությանը՝ նշենք, որ Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետը վերաբերում է արբիտրաժի կողմերին, քանի որ միայն արբիտրաժի կողմերը կարող են ստանալ արբիտրաժային վճիռը: ՔԴՕ-ի 316-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը վերաբերում է այն անձանց, որ մասնակից չեն եղել արբիտրաժին, սակայն արբիտրաժի միջոցով կայացված վճիռն իրավական հետևանքներ է առաջացրել նաև նրանց համար: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում է ներկայացրել արբիտրաժի կողմը, դատարանները դիմում ներկայացնելու ժամկետը պահպանված լինելու հարցը պարզելու համար պետք է ղեկավարվեն Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ այն դեպքերում, երբ դիմում է ներկայացրել այն անձը, որ մասնակից չի դարձել արբիտրաժի, սակայն արբիտրաժային վճիռը իրավական հետևանքներ է առաջացրել նաև նրա համար, ապա՝ ՔԴՕ-ի 316-րդ հոդվածի 3-րդ մասով:

ՀՀ ՔԴՕ-ի 323-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալուց հետո արգելվում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնելը՝ բացառությամբ

այն դեպքի, երբ վճիռը չեղյալ ճանաչելու դիմում ներկայացրած անձը արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումով հիմնավորում է, որ վարույթի ընթացքում նման դիմում ներկայացնելն անհնար է եղել իրենից անկախ պատճառներով: Սա նշանակում է, որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ արբիտրաժի վճիռն արդեն ուղարկված լինի հարկադիր կատարման, և հենց կատարողական վարույթի ընթացքում ներկայացվի արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում: Ներկայումս ՔԴՕ-ն չի նախատեսում, թե ինչպես պետք է կարգավորվի արբիտրաժային վճռի հարկադիր կատարման հարցը ներկայացված չեղյալ ճանաչման դիմումը վարույթ ընդունվելու դեպքում: Այս հարցը կարգավորվել է ՔԴՕ-ի 2025 հուլիսի 1-ից ուժի մեջ մտնելիք փոփոխություններով⁹¹: Մասնավորապես՝ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը վարույթ ընդունվելու դեպքում վճռի կատարումը կասեցվում է մինչև դիմումի քննությամբ եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը:

Բավական հետաքրքիր է այն հարցը, թե արդյոք արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման համար դիմում ներկայացնելու ժամկետը դատավարական ժամկետ է, այլ կերպ ասած՝ արդյոք դատարանը պարտավոր է իր նախաձեռնությամբ ստուգել օրենքով նախատեսված ժամկետը պահպանված լինելը, թե դրան կարող է անդրադառնալ միայն այն ժամանակ, երբ մյուս կողմը վկայակոչի այդ ժամկետը պահպանված չլինելու հարցը: Իսպանական դատարանը գործերից մեկով համարել է, որ

⁹¹ ՀՕ-193-Ն, ընդունվել է՝ 11.04.2024, ուժի մեջ է մտել՝ 01.07.2025, սկզբնաղբյուրը՝ միասնական կայք (2024.04.29–2024.05.12), պաշտոնապես հրապարակվել է՝ 07.05.2024:

արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման համար դիմում ներկայացնելու ժամկետը դատավարական ժամկետ է, որին դատարանը պետք է անդրադառնա սեփական նախաձեռնությամբ (ex officio)՝ անկախ մյուս կողմի՝ ժամկետը բաց թողած լինելու հանգամանքը վկայակոչված լինելու կամ չլինելու հանգամանքից⁹²: Անդրադառնալով մեր օրենսդրությանը՝ նշենք, որ, ՔԴՕ-ի 317-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ՔԴՕ-ի 316-րդ հոդվածով նախատեսված պահանջների (այս հոդվածով նախատեսված է նաև դիմում ներկայացնելու ժամկետը) խախտմամբ ներկայացված դիմումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած անձին: Հայրենական դատական պրակտիկայում նույնպես ընդունված է, որ չեղյալ ճանաչման դիմումը վերադարձվում է, եթե այն ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ⁹³:

ՔԴՕ-ի 318-րդ հոդվածը նախատեսում է, որ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ առանց դատական նիստ հրավիրելու: Եթե դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմում, ապա այդ երկու

⁹² UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 164, 154-րդ կետ:

⁹³ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանն այսպիսի դիրքորոշում է արտահայտել իր թիվ ԵԴ2/0816/02/24 գործով 2024 թ. փետրվարի 7-ի, թիվ ԵԴ2/2935/02/24 գործով 2024 թ. մայիսի 2-ի, թիվ ԵԴ2/3796/02/24 գործով 2024 թ. մայիսի 31-ի, թիվ ԵԴ2/4167/02/24 գործով 2024 թ. հունիսի 10-ի որոշումներով:

դիմումներն էլ արբիտրաժի վճռի համար կատարողական թերթ տալու դիմումը քննող դատավորն է քննում մեկ վարույթի շրջանակում: Միացված դիմումները քննվում են, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը վարույթ ընդունվելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առանց դատական նիստ հրավիրելու⁹⁴:

ՔԴՕ-ի 318-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է, որ դատարանը կարող է գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ ողջամիտ ժամկետով հետաձգել որոշման կայացումը, եթե համարում է, որ արբիտրաժային վարույթը վերսկսելու միջոցով հնարավոր է վերացնել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքը: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, անդրադառնալով տվյալ իրավանորմին, նշել է. «Փաստերի նման դասավորվածության և իրավակարգավորման լույսի ներքո Դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու պահանջի ընթացքում իր կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ ողջամիտ ժամկետով հետաձգել որոշման կայացումը՝ դադարեցնելով արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու

⁹⁴ Նշված դեպքերում դատարանը կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Այդ դեպքում դիմումները քննվում են, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը վարույթ ընդունվելու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

հարցի քննությունը, հնարավորություն ընձեռելով արբիտրաժային տրիբունալին վերսկսելու արբիտրաժային վարույթը՝ վերացնելով արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքը և ձեռնամուխ լինելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ապահովել արբիտրաժային վարույթի մասնակիցների իրազեկումը արբիտրաժային վարույթի կապակցությամբ: Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը փաստում է, որ առկա է հիմքեր Ընկերության միջնորդությունը բավարարելու համար, քանի որ Դատարանը գտնում է, որ արբիտրաժային վարույթը վերսկսելու միջոցով կարող է վերացվել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքը, հետևաբար վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ Ընկերության միջնորդությունը պետք է բավարարել և ողջամիտ ժամկետով հետաձգել որոշման կայացումը»⁹⁵: Նշված գործի շրջանակում դատարանը համարել է, որ արբիտրաժային տրիբունալը խախտել է պատասխանողին արբիտրաժի մասին ծանուցելու՝ Օրենքով նախատեսված կարգը և, հետաձգելով որոշման կայացումը, հնարավորություն է ընձեռել արբիտրաժը վերսկսելու միջոցով վերացնելու արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքը:

ՔԴՕ-ի 318-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված նորմի նպատակն է բացառել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչումը բոլոր այն դեպքերում, երբ դրա հիմքը կարող է վերացվել արբիտրաժային վարույթը վերսկսելու միջոցով: Արբիտրաժի միջոցով վեճի լուծումը խրախուսելու տեսանկյունից

⁹⁵ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/64757/02/22 գործով 2023 թ. ապրիլի 7-ի որոշումը:

այս նորմն ունի շատ կարևոր նշանակություն և պետք է կիրառվի բոլոր այն դեպքերում, երբ արբիտրաժային վարույթի ընթացքում թույլ տրված խախտումն այնպիսին է, որ կարող է վերացվել արբիտրաժի վերսկսման միջոցով:

ՔԴՕ-ի 320-րդ հոդվածը նախատեսում է, որ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումի քննությամբ՝ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի ՔԴՕ-ի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար ՔԴՕ-ով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Դատարանը դիմումի քննությամբ որոշում է կայացնում արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու կամ դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու մասին, իսկ եթե որոշում է կայացվել արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչման և հարկադիր կատարման դիմումների հիման վրա հարուցված միացյալ վարույթով, ապա՝ դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու և արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ:

Արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչումը խոչընդոտ չէ կրկին արբիտրաժ դիմելու համար, եթե արբիտրաժ դիմելու հնարավորությունը սպառված չէ, ինչպես նաև եթե արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ է ճանաչվել արբիտրաժային համաձայնության անվավերության հետևանքով, կամ եթե նման վճիռը կայացվել է արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժին չվերապահված վեճի վերաբերյալ կամ չի համապատասխանում դրա պայմաններին կամ արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված

հարցերով որոշումներ է պարունակում. նման դեպքերում արբիտրաժային վարույթի կողմերն իրենց վեճը լուծելու համար կարող են դիմել դատարան:

**ԳԼՈՒԽ 3. ԱՐՔԻՏՐԱԺԻ ՎՃՌԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ ՏԱԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ⁹⁶**

ՀՀ ՔԴՕ-ի 321-րդ հոդվածը նախատեսում է, որ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը դատարանը քննում է այն դեպքում, երբ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար դիմումը չէր կարող ներկայացվել մշտապես գործող արբիտրաժային հաստատություն՝ Օրենքով սահմանված դեպքերում, և երբ արբիտրաժի վայր է եղել ՀՀ տարածքը: Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասից հետևում է, որ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար դիմումը ներկայացվում է մշտապես գործող արբիտրաժային հաստատություն հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- արբիտրաժը մշտապես գործող արբիտրաժային հաստատությունն է իրականացրել,
- արբիտրաժի վայր է եղել ՀՀ տարածքը,
- արբիտրաժի կողմերը միայն ՀՀ քաղաքացիներ են կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք,

⁹⁶ 2024 թ. ապրիլի 11-ին ընդունված և 2025 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտնելիք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին» ՀՕ-193-Ն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսվում է ՀՀ ՔԴՕ 2-րդ բաժնի 5-րդ ենթաբաժնի վերնագրում և 315-րդ հոդվածի 1-ին մասում, 46-րդ գլխի վերնագրում, 321-րդ և 322-րդ հոդվածներում «վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալ» ձևակերպումը փոխարինել՝ «վճիռը հարկադիր կատարման ներկայացնել»:

- արբիտրաժի վճռով բռնագանձման ենթակա գումարի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը:

Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու հարցը դատարանը քննում է այն անձի դիմումի հիման վրա, որի օգտին կայացվել է արբիտրաժի վճիռը: Այս դիմումների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է առարկայական ընդդատություն, մասնավորապես, ըստ Օրենքի, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու գործառույթները կատարում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը:

Դիմումը կարող է ներկայացվել դատարան արբիտրաժի վճիռը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում⁹⁷, բայց ոչ

⁹⁷ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթ ստանալու համար դիմումը ներկայացվում է մեկ տարվա ընթացքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ՝ սկսած այն օրվանից, երբ արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ: Այստեղից հետևում է, որ ՔԴՕ-ով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված են կատարողական թերթ ստանալու համար դիմում ներկայացնելու մեկ տարվա ժամկետի սկզբի վերաբերյալ տարբեր կարգավորումներ:

2024 թ. ապրիլի 11-ին ընդունված և 2025 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտնելիք «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքով՝ այս հարցերն առավել լավ են կարգավորված: Մասնավորապես՝ նշված օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ արբիտրաժային տրիբունալների վճիռների (...) հիման վրա հարկադիր կատարման դիմումը ներկայացնում է համապատասխանաբար արբիտրաժի վճռի

շուտ, քան վճիռը ստանալու պահից երեք ամիս հետո: Այսինքն՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար դիմում ներկայացնելու իրավունքը ծագում է այն պահից, երբ լրանում է վճիռը չեղյալ ճանաչելու դիմումի ներկայացման ժամկետը:

Դիմումին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ տեղեկությունը, որ պետք է նշվի դիմումի մեջ, և դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը սահմանված են ՔԴՕ-ի 322-րդ հոդվածով: Ի տարբերություն Կոնվենցիայի, որը նախատեսում է արբիտրաժային որոշման պատշաճ կերպով հաստատված բնօրինակի կամ պատշաճ կերպով հաստատված պատճենի ներկայացման պարտավորություն, ՔԴՕ-ի 322-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված է միայն արբիտրաժի վճռի բնօրինակի կամ պատշաճ ձևով վավերացրած պատճենի ներկայացման պարտավորություն, այսինքն՝ ՔԴՕ-ն

հարկադիր կատարման (...) թույլատրելու մասին դատական ակտը կայացրած դատարանը (իրավասու դատարանը) դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, բացառությամբ եթե պահանջատերն իրավասու դատարանին խնդրել է չներկայացնել հարկադիր կատարման դիմում: Իրավասու դատարանին նման խնդրանք ներկայացնելու դեպքում պահանջատերը կարող է հարկադիր կատարման դիմում ներկայացնել սույն օրենքով սահմանված կանոններով: Այնուհետև, 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը նախատեսում է, որ պահանջատերը կարող է հարկադիր կատարման դիմում ներկայացնել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել սույն օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավասու դատարանի դատական ակտը, եթե իրավասու դատարանը հարկադիր կատարման դիմում չի ներկայացրել:

արբիտրաժային վճռի պատշաճ կերպով հաստատման պահանջ⁹⁸ չի սահմանում:

ՔԴՕ-ի 322-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը նախատեսում է, որ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին դիմումին կից ներկայացվում են արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացված պատճենը: Նշենք, որ դիմողն այս փաստաթուղթը կարող է ներկայացնել միայն այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, միջնդեռ Օրենքով նախատեսված են նաև արբիտրաժային համաձայնության կնքման այնպիսի ձևեր, որոնց դեպքում արբիտրաժային համաձայնությունը չի արտահայտվում կողմերի ստորագրությամբ բնօրինակ փաստաթղթում, մասնավորապես, Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված, եթե դա կատարվել է էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու

⁹⁸ Արբիտրաժային վճռի հաստատումն այն գործընթացն է, որի շրջանակում իրավասու մարմինը հաստատում է վճռում առկա ստորագրությունները որպես իսկական: Արբիտրաժային վճռի բնօրինակի կամ դրա պատճենի պատշաճ կերպով հաստատման նպատակն է հավաստել, որ իսկական տեքստն է, և այն կազմել են նշանակված արբիտրները: Առավել մանրամասն տե՛ս՝ Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար (Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019), էջ 100-102:

պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրան, ինչպես նաև եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որևէ ձևով ընդունել է մյուս կողմը: Համեմատության համար նշենք, որ Օրենքով սահմանված ձևերից մեկով արբիտրաժային համաձայնություն կնքելու դեպքում արբիտրաժի վճիռը չէղյալ ճանաչելու դիմումին կցվում է կնքված լինելու ապացույցի բնօրինակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է ոչ թե կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, այլ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ ձևով, ապա կողմը արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումին կարող է կցել նաև արբիտրաժային համաձայնություն կնքած լինելու ապացույցի բնօրինակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը, ինչը պետք է բավարար լինի դատարանի համար: Հակառակ մեկնաբանության դեպքում կսահմանափակվի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը⁹⁹:

⁹⁹ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՍԴՌ-652, ՍԴՌ-690, ՍԴՌ-719, ՍԴՌ-765, ՍԴՌ-844, ՍԴՌ-873, ՍԴՌ-890, ՍԴՌ-932, ՍԴՌ-942, ՍԴՌ-1037, ՍԴՌ-1052, ՍԴՌ-1115, ՍԴՌ-1127, ՍԴՌ-1190, ՍԴՌ-1192, ՍԴՌ-1196, ՍԴՌ-1197, ՍԴՌ-1220, ՍԴՌ-1222, ՍԴՌ-1257, ՍԴՌ-1289) հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքնության իրավունքների երաշխավորման սահմանադրականության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության

Արբիտրաժային համաձայնության վավերականության բովանդակային քննությունը և դրա համապատասխանությունը Կոնվենցիայի պահանջներին տեղի է ունենում ճանաչման կամ կատարման դատավարական գործընթացի 2-րդ փուլում, իսկ դիմումը վարույթ ընդունելիս դատարանը պարզում է միայն, թե արդյոք տրամադրվող փաստաթուղթը առերևույթ (*prima facie*) վավեր արբիտրաժային համաձայնություն է, թե ոչ¹⁰⁰: Իսպանական դատարանը համարել է, որ դիմողի՝ արբիտրաժային համաձայնությունը ներկայացնելու պարտականությունը չի ենթադրում, որ դատարանը կարող է իր նախաձեռնությամբ գնահատել դրա վավերականությունը¹⁰¹:

Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը քննվում և դրա

իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատավարական գործընթացներում: Վերոգրյալ որոշումներով ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի մեջ իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, իսկ ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում:

¹⁰⁰ «Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց: Ձեռնարկ դատավորների համար», Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, 2019, էջ 104:

¹⁰¹ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 171, 23-րդ կետ:

վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունվելու օրվանից 15 օրվա ընթացքում՝ առանց դատական նիստ հրավիրելու: Դատարանը նշված ժամկետում կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Այդ դեպքում արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունվելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՔԴՕ-ի 323-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է, որ եթե դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում, ապա երկու դիմումն էլ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը քննող դատավորն է քննում մեկ վարույթի շրջանակում: Այս դեպքում դիմումները քննվում, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը վարույթ ընդունվելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առանց դատական նիստ հրավիրելու: Ինչպես արդեն նշել ենք վերևում, համանման կարգավորում նախատեսված է նաև ՔԴՕ-ի 318-րդ հոդվածի 2-րդ մասով, որը պահանջում է, որ միացված դիմումները քննի արբիտրաժի վճռի համար կատարողական թերթ տալու դիմումը քննող դատավորը մեկ վարույթի շրջանակում: Այս իրավանորմերի միաժամանակյա գործողության պայմաններում անհասկանալի է, թե որ դիմումը քննող դատավորը պետք է քննի միացված դիմումները, քանի որ ՔԴՕ-ն դա որոշելու կանոններ չի նախատեսում: Խնդիրն այստեղ օրենսդրական մակարդակում է և կարող է լուծվել օրենսդրական

փոփոխությունների միջոցով: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս նորմերը նախատեսելու օրենսդրի նպատակը գործերի առավել արագ և արդյունավետ քննության ապահովումն է, կարծում ենք, որ նախքան այդ փոփոխությունները կատարվելը անհրաժեշտ է որդեգրել միատեսակ մոտեցում, որն ավելի շատ կբխի ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից: Որպես այդպիսի մոտեցում կարող է լինել այն, որ դիմումը քննող այն դատավորը քննի միացված գործը, որն ավելի վաղ է կայացրել դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում¹⁰²:

Դատարանը դիմումի քննությամբ կայացնում է որոշում, որը պետք է բավարարի ՔԴՕ-ի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար ՀՀ ՔԴՕ-ով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ մտնում հրապարակման պահից: Դատարանը դիմումի քննությամբ որոշում է կայացնում արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու կամ կատարողական թերթ տալը

¹⁰² Ստեղծված իրավիճակը կարող է մեկնաբանվել նաև այսպես. ՔԴՕ-ի վերոգրյալ նորմերի միջև առկա է կոլիզիա, և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով ու հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1-3-րդ կետերով նախատեսված կանոնները կիրառելի չեն (դրանցով հարցը չի լուծվում), անհրաժեշտ է առաջնորդվել 4-րդ կետով նախատեսված կանոնով և կիրառել ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, որը տվյալ իրավիճակում կարող է լինել այն, որն ապահովում է գործի առավել արագ քննություն, այսինքն՝ այն դատավորը պետք է քննի միացված դիմումները, որն ավելի վաղ է կայացրել դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում:

մերժելու մասին, իսկ եթե որոշում է կայացվել արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչման և հարկադիր կատարման դիմումների հիման վրա հարուցված միացյալ վարույթով, ապա՝ արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու կամ դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու և արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ:

Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելը խոչընդոտ չէ արբիտրաժին կրկին դիմելու համար, եթե արբիտրաժին դիմելու հնարավորությունը սպառված չէ, ինչպես նաև եթե դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել է արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը արբիտրաժային համաձայնությունն անվավեր ճանաչելու հետևանքով կամ այն հիմքով, որ վճիռ է կայացվել այնպիսի վճռի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին, կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից: Այս դեպքերում արբիտրաժային վարույթի կողմերը կարող են դիմել դատարան՝ իրենց միջև առկա վեճը ՀՀ ՔԴՕ-ով սահմանված ընդհանուր կանոնների համաձայն լուծելու համար:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ¹⁰³

Անդրադառնալով արբիտրաժային տրիբունալի այն ակտերին, որոնք ենթակա են հարկադիր կատարման, նշենք, որ, բացի գործն ըստ էության լուծող արբիտրաժային վճիռներից, դրանց շարքին են դասվում նաև հայցի ապահովման միջոց կիրառելու մասին արբիտրաժային տրիբունալի կայացրած որոշումները: Մասնավորապես՝ Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել հայցի ապահովման այնպիսի միջոցներ կիրառելու վերաբերյալ, որոնք անհրաժեշտ կհամարի՝ հաշվի առնելով վեճի առարկան: Արբիտրաժային տրիբունալը հայցի ապահովման միջոցի կամ նախնական կարգադրության կիրառմամբ կարող է ցանկացած կողմից պահանջել տրամադրել ձեռնարկվող միջոցներին համապատասխանող, ներառյալ նախնական կարգադրությունների հետ կապված կամ հակընդդեմ ապահովում, եթե դա նպատակ ունի կանխելու կամ հատուցելու

¹⁰³ Օրենքի գլուխ 8.1-ը վերնագրված է «Հայցի ապահովման միջոցների ճանաչումը և կատարումը», քանի որ կարգավորում է ոչ միայն ՀՀ տարածքում կայացված, այլև օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման հարցեր: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ձեռնարկի շրջանակում անդրադարձ ենք կատարել միայն ՀՀ տարածքում կայացված արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման ու չեղյալ ճանաչման հարցերին, որոնք ճանաչվում են պարտադիր օրենքի ուժով, այլ ոչ թե դատարանի որոշմամբ, սույն զլխում չենք օգտագործի «հայցի ապահովման միջոցի ճանաչում» հասկացությունը:

մյուս կողմին պատճառվելիք հնարավոր վնասները կամ պահպանելու ապացույցները: Օրենքի 36.1 հոդվածի համաձայն՝ Արբիտրաժային տրիբունալի սահմանած հայցի ապահովման միջոցը ճանաչվում է որպես պարտադիր միջոց, և եթե արբիտրաժային տրիբունալն այլ բան չի նախատեսել, կատարվում է իրավասու դատարան միջնորդություն ներկայացվելու միջոցով¹⁰⁴:

Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ արբիտրաժային տրիբունալի նշված որոշումները կարող են ամրագրվել միջանկյալ վճռի ձևով: Այս նորմում օգտագործված «կարող են» արտահայտությունից ուղղակիորեն հետևում է, որ դրանք կարող են ամրագրվել նաև որոշման ձևով: Հատկանշական է նաև, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման (այլ ոչ թե միջանկյալ վճռի) կայացման հնարավորություն նախատեսված է նաև Օրենքի 8.1 գլխով, որը վերնագրված է «Հայցի ապահովման մասին որոշումների ճանաչումը և կատարումը»: Այսինքն՝ արբիտրաժային տրիբունալը հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ կարող է կայացնել ինչպես միջանկյալ վճիռներ, այնպես էլ որոշումներ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և ենթակա են ճանաչման ու հարկադիր կատարման Օրենքով սահմանված կարգով:

¹⁰⁴ Բացի հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին որոշումից՝ արբիտրաժային տրիբունալն իրավասու է կայացնելու նաև նախնական կարգադրություններ տալու մասին որոշում: Եթե հայցի ապահովման միջոց կիրառելը նպատակ ունի ապահովելու արբիտրաժի միջոցով կայացվելիք վերջնական արբիտրաժային վճռի կատարումը, ապա նախնական կարգադրություն տալը նպատակ ունի ապահովելու կիրառվելիք հայցի ապահովման միջոցի կատարումը:

Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ հայցի ապահովման միջոցները, որոնք արբիտրաժային տրիբունալը պահանջել կամ կարգադրել է ձեռնարկել՝ կայացնելով միջանկյալ վճիռ, կարող են ճանաչվել, հարկադրաբար կատարվել կամ չեղյալ ճանաչվել Օրենքի 34-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ հայցի ապահովման մասին որոշումների հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենքի 36.1 և 36.2 հոդվածներով, որոնք, ի տարբերություն Օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածների, նախատեսում են մի շարք հատուկ կարգավորումներ: Հետևաբար, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով առաջնորդվելու դեպքում, հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ ինչպես որոշումների, այնպես էլ միջանկյալ վճիռների ճանաչման և կատարման դիմումի քննության ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել Օրենքի 36.1 և 36.2 հոդվածները:

Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջանկյալ վճիռների հարկադիր կատարման հարցերով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է առարկայական ընդդատություն, մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, այդ գործառույթները կատարում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը: Բավական հետաքրքիր է այն հարցը, թե արդյոք միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար կողմը կարող է միանգամից դիմել դատարան, թե պարտավոր է նախևառաջ դիմել արբիտրաժն իրականացրած

մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը, ինչպես արվում է արբիտրաժային վճիռների դեպքում, եթե առկա են Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմանները:

Այս հարցի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատարանը, դիմումի վերադարձման հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դիմումը մշտապես գործող արբիտրաժային հաստատություն ներկայացնելու անհնարինության փաստը հաստատված չլինելու հանգամանքը, հաշվի չի առել ներկայացված դիմումի առանձնահատկությունները, այն է՝ ներկայացված դիմումը վերաբերել է միջանկյալ վճռի ձևով ամրագրված՝ արբիտրաժային հաստատության կողմից կիրառված հայցի ապահովման միջոցների կատարմանը, որպիսի հարցի քննությունը և լուծումը, արբիտրաժային տրիբունալի կողմից այլ բան նախատեսված չլինելու պայմաններում, վերապահված է իրավասու դատարանին, տվյալ դեպքում՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, և ընդդատության նշված կանոնի պահպանմամբ էլ ներկայացվել էր դիմումը, իսկ խնդրո առարկա միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար դիմումը արբիտրաժային հաստատությանը ներկայացնելու «առաջնահերթության» կանոնի կիրառելիությունը սույն դեպքում բացառվում էր «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 1-ին մասի հատուկ նորմով, որը, ի տարբերություն արբիտրաժային տրիբունալի այլ վճիռների, սահմանում է հայցի

ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման և (կամ) միջանկյալ վճռի կատարման հարցով բացառապես իրավասու դատարանում միջնորդություն ներկայացնելու միջոցով հանդես գալու հնարավորությունը, ուստի սույն դեպքում դիմումի ներկայացմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը խախտված չէր, քանի որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև նույն օրենքի 35.1-35.4 հոդվածների իրավակարգավորումներն ի սկզբանե կիրառելի չէին խնդրո առարկա դիմումի նկատմամբ, իսկ արբիտրաժային հաստատությունն օժտված չէր նշված միջանկյալ վճռի կատարման հարցը իրեն ներկայացված դիմումի հիման վրա լուծելու իրավասությամբ»¹⁰⁵:

Այսպիսով, իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման և/կամ միջանկյալ վճռի հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա լինի Օրենքի 36.1 հոդվածը, որով արբիտրաժային տրիբունալի՝ այդ որոշումը հարկադիր կատարման ուղարկելու որևէ հնարավորություն նախատեսված չէ: Հետևաբար հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման և/կամ միջանկյալ վճռի հարկադիր կատարումը հնարավոր է միայն իրավասու դատարան դիմում ներկայացնելու միջոցով:

¹⁰⁵ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/0444/02/23 գործով 2023 թ. օգոստոսի 1-ի որոշումը:

Անդրադառնալով միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար դիմում ներկայացնելու ընթացակարգին՝ նշենք, որ ինչպես ՔԴՕ-ն, այնպես էլ Օրենքը հատուկ կարգավորումներ չեն նախատեսում: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը գործերից մեկով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. ««Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքից բխում է, որ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված միջանկյալ վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ ճանաչման ընթացակարգերը չեն տարբերվում արբիտրաժային դատարանի կողմից կայացված վեճն ըստ էության լուծող վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ ճանաչման ընթացակարգերից, ուստի Դատարանը գտնում է, որ արբիտրաժային տրիբունալի միջանկյալ վճռի ճանաչման և հարկադիր կատարման դիմումի վարույթ ընդունման հարցը պետք է լուծել հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխով սահմանված կանոնները»¹⁰⁶:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, մեկ այլ գործով անդրադառնալով նշված հարցին, արձանագրել է. «(...) ինչպես Օրենքը, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չեն բովանդակում արբիտրաժային տրիբունալի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման կամ միջանկյալ վճռի հարկադիր կատարման վերաբերյալ իրավասու դատարան

¹⁰⁶ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/8681/02/23 գործով 2023 թ. մարտի 23-ի որոշումը:

ներկայացվող միջնորդությանը (դիմումին) առաջադրվող պահանջների կապակցությամբ հատուկ իրավակարգավորումներ, որպիսի պայմաններում խնդրո առարկա դիմումի ձևի, բովանդակության և կցվող փաստաթղթերի նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը» վերտառությամբ 46-րդ գլխի ընդհանուր կանոնները»¹⁰⁷: Հետևաբար հայրենական իրավակիրառ պրակտիկայում միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար դիմում ներկայացնելու դատավարական ընթացակարգը որոշվում է ՔԴՕ-ի 46-րդ գլխով սահմանված կանոններով:

Անդրադառնանք մեկ այլ հարցի՝ արդյոք դիմողը պարտավոր է միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը և կից փաստաթղթերը դատարան ներկայացնելիս դրանց օրինակն ուղարկել մյուս կողմին, թե ոչ: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողները հիմնականում հակված են նշված փաստաթղթերը մյուս կողմին չուղարկելու, քանի որ մտավախություն ունեն, որ պատասխանողը կարող է այնպիսի գործողություններ կատարել, որի հետևաքով դժվարանա կամ անհնարին դառնա կիրառվելիք հայցի ապահովման միջոցի կատարումը¹⁰⁸:

¹⁰⁷ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/6144/02/23 գործով 2023 թ. հունիսի 15-ի որոշումը:

¹⁰⁸ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/6144/02/23 գործով որոշման

դեմ բերված վերաքննիչ բողոքում բողոքաբերը նշել է, որ նմանատիպ պարտականությունը սահմանված է բացառապես այն դեպքի համար, երբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին դիմումատուուն ներկայացնում է միջնորդություն՝ արբիտրաժային տրիբունալի ըստ էության քննած վեճի շրջանակում կայացված, օրինական ուժ ստացած վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու մասին՝ հաշվի առնելով օրենքի 35.2 հոդվածը: Մեջբերելով Դատարանի պատճառաբանությունները՝ հայտնել է, որ Դատարանը նշել է, թե իր դիրքորոշումը բխում է Օրենքից, առավելապես՝ նույն օրենքի 36.2 հոդվածից, սակայն ինչպես արդեն պատճառաբանվեց՝ Օրենքը որոշման տեսքով կայացված հայցի ապահովման միջոցների կիրառման մասին միջանկյալ վճռի ճանաչման և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու դիմումը արբիտրաժային վարույթին մասնակցող մյուս կողմին կամ կողմերին հասցեագրելու ուղղակի պարտավորություն չի սահմանում, այն սահմանված չէ անգամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կարգավորումների շրջանակում: Հայտնել է, որ թիվ ԵԴ/6144/02/23 գործի շրջանակում Բանկի կողմից ներկայացված դիմումը բովանդակային առումով ակնհայտորեն նմանվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու դատավարական ինստիտուտին, որի պարագայում օրենսդրությունն իմպերատիվ պահանջ չի սահմանում միջնորդության օրինակը պատասխանողին կամ պատասխանողներին ուղարկելու վերաբերյալ: Գտել է, որ նշվածի լույսի ներքո հարկ է նաև որոշակի համեմատականներ անցկացնել հայցի ապահովման ինստիտուտի դատավարական նշանակության ու հետապնդվող նպատակի հետ: Հայտնել է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը քննում է առանց տվյալ միջնորդության մասին գործին մասնակցող մյուս անձանց ծանուցելու և դրա վերաբերյալ նրանց դիրքորոշումները լսելու՝ պահպանելով այսպես կոչված «գաղտնիության ռեժիմը»: Հայցի ապահովման հիմքը հնարավոր դատական ակտի կատարման դժվարացման կամ վեճի

Ինչ վերաբերում է դատական պրակտիկային, ապա այն այս հարցի տեսանկյունից բավական հակասական է: Մասնավորապես՝ թիվ ԵԴ/6144/02/23 գործով բերված վերաքննիչ բողոքում բողոքաբերը նշել է, որ Երևան քաղաքի

առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացման ռիսկն է: Այդ ռիսկն էապես կմեծանա, եթե մինչև հայցի ապահովման կատարումը պատասխանողը տեղեկանա հայցի ապահովման որոշման մասին: Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ հայցադիմումի հետ միասին ներկայացված հայցի ապահովման միջնորդությունը բավարարվելու դեպքում դատարանը հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին է ուղարկում միայն հայցի ապահովման որոշումը կատարվելուց հետո: Փաստորեն՝ նշված նորմերը կոչված են ապահովելու ոչ միայն հայցի ապահովման որոշման, այլ նաև հենց դատական վարույթի գոյության գաղտնիությունը պատասխանողից: Հայտնել է, որ սույն գործի շրջանակում դիմում-միջնորդությունը պատասխանողներին չի ուղարկել, նկատի ունենալով նաև այն փաստական հանգամանքը, որ այս իրավիճակում հայցի ապահովման գաղտնիության սկզբունքից բխող իրավաչափ նպատակներն ամբողջությամբ կարող են խաթարվել: Հակառակ պարագայում ակնհայտորեն առկա է ռիսկ, որ մինչև դրա քննությամբ դատական ակտի կայացումը (լինի այն հոգուտ դիմումատուի, թե ոչ) պատասխանողները հնարավոր է օտարեն իրենց սեփականության իրավունքով պատկանող գույքերը, իսկ անկանխիկ դրամական միջոցների առկայության պարագայում՝ դրանք կանխիկացնելով դժվարացնեն հոգուտ Բանկի կայացվելիք դատական ակտի հետագա կատարումը: Ամփոփելով բարձրացված հարցադրումն ու ներկայացված վերլուծությունը՝ Բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ օրենսդրությունը որևէ նորմով չի պարտավորեցնում արբիտրաժային տրիբունալի կողմից որոշման տեսքով կայացված հայցի ապահովման միջոցների կիրառման մասին միջանկյալ վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար իրավասու դատարանին դիմում ներկայացնելիս դիմումի օրինակը հասցեագրել պատասխանողին կամ պատասխանողներին:

առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ/5193/02/23, ԵԴ/66832/02/22, ԵԴ/1063/02/23, ԵԴ/66802/02/22, ԵԴ/66780/02/22, ԵԴ/66695/02/22, ԵԴ/66746/02/22, ԵԴ/65515/02/22 և ԵԴ/65159/02/22 դատական գործերով բավարարել է միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը, որը կից փաստաթղթերով չէր ուղարկվել մյուս կողմին:

Միևնույն ժամանակ, դատական պրակտիկայում տեղ են գտել նաև վերոգրյալ հարցի վերաբերյալ հակառակ դիրքորոշումներ.

- Արբիտրաժային տրիբունալի վճռի, ներառյալ միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար դիմումը ենթակա է քննության արբիտրաժային վարույթի մյուս կողմի պարտադիր իրազեկմամբ՝ ապահովելու դիմումի մերժման հիմքեր ներկայացնելու և դրանց վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու վերջինիս իրավունքը¹⁰⁹:

- Օրենքի 36.2 հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է ոչ միայն արբիտրաժային տրիբունալի միջանկյալ վճիռը ճանաչելու և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմում դատարան ներկայացված լինելու հանգամանքի վերաբերյալ արբիտրաժային վարույթի մասնակիցների տեղեկացված լինելու, այլև նշված հոդվածով նախատեսված հիմքերով՝ դիմումի քննության փուլում, հայցի

¹⁰⁹ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ-2/0013/02/24 գործով 2024 թ. հունվարի 10-ի, ԵԴ-2/32015/02/23 գործով 2023 թ. հոկտեմբերի 11-ի և ԵԴ-2/16692/02/23 գործով 2023 թ. օգոստոսի 4-ի որոշումները:

ապահովման միջոցի ճանաչումը կամ կատարումը մերժելու խնդրանքի ներկայացման հնարավորությունը: Այսինքն՝ վերոնշյալ նորմերի համադրությունից բխում է, որ դիմող կողմն ազատված չէ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումի պատճենն արբիտրաժային վարույթի մյուս կողմին հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթը դիմումին կցելու պարտականությունից¹¹⁰:

- Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումին առաջադրվող պահանջները, ներառյալ դիմումի պատճենը արբիտրաժային վարույթի մյուս կողմին հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթ ներկայացնելու պարտականությունը սահմանող ընդհանուր կանոնը, արբիտրաժի միջանկյալ վճռի կատարման դիմումին առաջադրվող պահանջների կապակցությամբ հատուկ կարգավորումների բացակայության պայմաններում, կիրառելի են նաև վերջինիս նկատմամբ, ուստի դիմող կողմը պարտավոր է կատարել նշված վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումը մյուս կողմին հանձնելու կամ ուղարկելու պարտականությունը՝ դատարանին ներկայացնելով համապատասխան ապացույցները¹¹¹:

Ինչ վերաբերում է հայցի ապահովման միջոցի կատարումը մերժելու՝ Օրենքի 36.2 հոդվածով սահմանված

¹¹⁰ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/8681/02/23 գործով 2023 թ. մարտի 23-ի որոշումը:

¹¹¹ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/6144/02/23 գործով 2023 թ. հունիսի 15-ի որոշումը:

հիմքերին՝ նշենք, որ դրանք ևս բաժանվում են երկու խմբի՝ հիմքեր, որոնց դատարանը կարող է անդրադառնալ, եթե կողմը վկայակոչել է դրանք (նախատեսված են Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով), և հիմքեր, որոնց դատարանը կարող է անդրադառնալ սեփական նախաձեռնությամբ (նախատեսված են Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով):

Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցի կատարումը կարող է մերժվել միայն այն կողմի խնդրանքով, որին դա վերաբերում է, եթե դատարանը պարզում է, որ այդպիսի մերժումն արդարացված է Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» կամ «բ» կամ «գ» կամ «դ» ենթակետերից որևէ մեկով սահմանված հիմքերով¹¹²:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ արբիտրաժային տրիբունալը հայցի ապահովման միջոցի կամ նախնական կարգադրության կիրառմամբ կարող է ցանկացած կողմից պահանջել տրամադրել ձեռնարկվող միջոցներին համապատասխանող, ներառյալ նախնական կարգադրությունների հետ կապված կամ հակընդդեմ ապահովում, եթե դա նպատակ ունի կանխելու կամ հատուցելու մյուս կողմին պատճառվելիք հնարավոր վնասները կամ պահպանելու ապացույցները: Ապահովում տրամադրելու մասին արբիտրաժային տրիբունալի որոշումը չկատարելը, Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետին

¹¹² Այս հիմքերին մանրամասնորեն անդրադարձել ենք սույն ձեռնարկի 1-ին գլխի համապատասխան պարագրաֆներում:

համապատասխան, հայցի ապահովման միջոցի կատարումը մերժելու հիմք է:

Օրենքի 17.4 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալը կարող է փոփոխել, կասեցնել կամ դադարեցնել իր սահմանած հայցի ապահովման միջոցը կամ նախնական կարգադրությունը՝ կողմերից մեկի դիմումի հիման վրա, կամ բացառիկ դեպքերում կողմերին նախապես ծանուցելուց հետո՝ իր նախաձեռնությամբ: Արբիտրաժային տրիբունալի որոշմամբ հայցի ապահովման միջոցի դադարեցված կամ կասեցված լինելը, Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան, հայցի ապահովման միջոցի կատարումը մերժելու հիմք է¹¹³:

Օրենքի 17.7 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային վարույթի շրջանակում դատարանն ունի ՀՀ ՔԴՕ-ով սահմանված հայցի ապահովման միջոցներ կիրառելու նույն իրավասությունը: Հայցի ապահովման միջոցի անհամատեղելիությունը դատարանին վերապահված իրավասության հետ, Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ

¹¹³ Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցի ճանաչումը կամ կատարումը մերժելու հիմք է նաև հայցի ապահովման միջոցի դադարեցված կամ կասեցված լինելը այն պետության դատարանից, որտեղ տեղի է ունենում արբիտրաժը, կամ որի օրենքի համաձայն՝ հայցի ապահովման այդ միջոցը սահմանվել է, եթե այդ դատարանն ունի նման իրավասություն: Նշենք, որ ՀՀ օրենսդրությամբ նման իրավասություն դատարաններին վերապահված չէ, հետևաբար՝ այս հիմքը կիրառելի այն ժամանակ, երբ ճանաչման ու կատարման է ներկայացվել հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ օտրաերկրյա արբիտրաժային վճիռ:

կետի «ա» ենթակետին համապատասխան, հայցի ապահովման միջոցի կատարումը մերժելու հիմք է, եթե դատարանը չի որոշում վերաձևակերպել հայցի ապահովման միջոցն այն չափով, որ անհրաժեշտ է այն իր իրավասությանը և ընթացակարգերին համապատասխանեցնելու համար՝ հայցի ապահովման այդ միջոցը կատարելու նպատակով և առանց դրա բովանդակությունը փոփոխելու:

Օրենքի 36.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցի կատարումը կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ դատարանը համարում է, որ առկա է Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետում նշված հիմքերից որևէ մեկը¹¹⁴:

¹¹⁴ Այս հիմքերին մանրամասնորեն անդրադարձել ենք սույն ձեռնարկի 1-ին գլխի համապատասխան պարագրաֆներում:

ԱՐՔԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԱՐՔԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

§1. Արբիտրաժի կողմի միջնորդության հիման վրա հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման կայացումը

Ըստ Օրենքի 9-րդ հոդվածի, Մոդելային օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան, արբիտրաժային համաձայնության հետ անհամատեղելի չի համարվում և արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված իրավունքներից հրաժարում չէ արբիտրաժի կողմի՝ արբիտրաժից առաջ կամ դրա ընթացքում՝ ցանկացած պահի, հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելը և դատարանի՝ նման ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշում կայացնելը: Այս նորմին համապատասխան՝ ՔԴՕ-ի 128-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ արբիտրաժային համաձայնության կողմի դիմումի հիման վրա դատարանն արբիտրաժից առաջ կամ դրա ընթացքում՝ ցանկացած պահի, հայցի ապահովման միջոցները կիրառում է ՔԴՕ-ի 13-րդ գլխով սահմանված կանոնների

պահպանմամբ՝ հաշվի առնելով Օրենքով սահմանված առանձնահատկությունները:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ արբիտրաժի կողմը հայցի ապահովման միջոցներ կիրառելու համար դատարան կարող է դիմել ինչպես արբիտրաժից առաջ, այնպես էլ արբիտրաժի ընթացքում: Ընդ որում՝ արբիտրաժի ընթացքում կողմն ունի հայցի ապահովման միջոցների կիրառմանը հասնելու երկու ճանապարհ. կարող է նման միջնորդություն ներկայացնել արբիտրաժային տրիբունալին, իսկ այնուհետև դրա որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու նպատակով դիմել դատարան, կամ հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջանորդությամբ դիմել միանգամից դատարան: Հարկ է նկատի ունենալ, որ եթե առաջին դեպքում դատարանն արբիտրաժային տրիբունալի միջանկյալ վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումի քննության ընթացքում ըստ էության չի վերանայում արբիտրաժի վճիռը (մասնավորապես՝ չի գնահատում հայցի ապահովման միջոցի կիրառման հիմքերի առկայությունը, ներկայացված ապացույցների բավարարությունը ևն) և սահմանափակված է Օրենքի 36.2 հոդվածով նախատեսված հիմքերով, ապա երկրորդ դեպքում, երբ հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունն ուղղակիորեն ներկայացվել է դատարանին, վերջինս իրականացնում է միջնորդության ըստ էության քննություն¹⁵:

¹⁵ Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/2544/02/23 գործով 2023 թ. մայիսի 5-ի, թիվ ԵԴ2/18926/02/23 գործով 2023 թ. հուլիսի 31-ի, թիվ ԵԴ2/18678/02/23 գործով 2023 թ. օգոստոսի 10-ի

Պրակտիկայում պատահում են դեպքեր, երբ արբիտրաժի կողմի դիմումի հիման վրա արբիտրաժային տրիբունալն արդեն իսկ կայացրած է լինում հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում/միջանկյալ վճիռ, սակայն կողմը դիմում է դատարան ոչ թե այդ որոշման հարկադիր կատարման դիմումով, այլ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ: Մինչդեռ եթե արդեն իսկ կա կայացված հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշում/միջանկյալ վճիռ, ապա առավել նպատակահարմար է դատարան դիմել ոչ թե հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ, քանի որ այդ դեպքում դատարանն իրականացնելու է միջնորդության ըստ էության քննություն, այլ ներկայացնելով որոշման/միջանկյալ վճռի հարկադիր կատարման դիմում, որի դեպքում դատարանը գնահատելու է միայն Օրենքի 36.2 հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: Ինչ վերաբերում է դատարանին, ապա ո՛չ ՔԴՕ-ն, ո՛չ Օրենքը չեն նախատեսում կողմի ներկայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու կամ չքննարկելու հնարավորություն այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալն արդեն իսկ որոշում է կայացրել նման միջնորդության վերաբերյալ:

որոշումները: Դրանցում դատարանը համարել է, որ դիմումով չի ներկայացվել այնպիսի բավարար, արժանահավատ և ծանրակշիռ փաստական հանգամանք, ապացույց և հիմնավորում, որ հայցի ապահովում չկիրառելը կարող է անհնարին դարձնել հետագայում կայացվելիք արբիտրաժի վճռի կատարումը, կամ չկիրառելը կարող է ազդել հայցվորի շահերի վրա:

Դատական այս աջակցության նպատակը արբիտրաժային տրիբունալի՝ վեճի լուծման արդյունավետության բարձրացումն է: Որոշ դեպքերում արբիտրաժային տրիբունալը հնարավորություն չունի բավարարելու կողմի պահանջները՝ հայցի ապահովման միջոցների կիրառման հետ կապված: Նման խնդիրներ առաջանում են այն դեպքում, երբ, օրինակ, այդպիսի միջոցներ կիրառելն անհրաժեշտ է նախքան արբիտրաժային տրիբունալի կազմավորումը, կամ հայցի ապահովման միջոցն անհրաժեշտ է կիրառել այնպիսի երրորդ անձի նկատմամբ, որի վրա արբիտրաժային տրիբունալի իրավասությունը չի տարածվում: Ինչպես ասվում է Անգլիայի Լորդերի պալատի որոշումներից մեկում, այս հնարավորության նախատեսումը նպատակ ունի ոչ թե ներխուժելու արբիտրների իրավասության տիրույթ, այլ բարձրացնելու այն վերջնական որոշման կատարման հավանակությունը, որն արբիտրները կկայացնեն վեճի լուծման հետևանքով¹¹⁶:

Եթե արբիտրաժային համաձայնության կողմը արբիտրաժից առաջ դիմում է դատարան հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ, ապա կիրառելի է դառնում ՔԴՕ-ի 128-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ եթե հայցի ապահովման միջոցը կիրառվել է արբիտրաժի կազմավորումից կամ միանձնյա արբիտրի նշանակումից առաջ, ապա հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնող անձը պարտավոր է հայցի ապահովման միջոցը կիրառելու օրվանից երկամսյա ժամկետում դատարան

¹¹⁶ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 53, 5-րդ կետ:

ներկայացնել բավարար ապացույցներ այն մասին, որ կազմավորվել է արբիտրաժը, կամ նշանակվել է միանձնյա արբիտրը: Հակառակ դեպքում դատարանի կիրառած հայցի ապահովման միջոցը շահագրգիռ անձի դիմումով վերացվում է: Այս տրամաբանական և դատավարական օրենսդրության ու դատական պրակտիկային ամբողջությամբ համապատասխանող պայմանը (քանի որ չի կարելի հայցի ապահովման միջոցն անորոշ ժամանակով ուժի մեջ թողնել, ու պետք է դրա ճակատագիրը որոշվի առավելագույնը վեճի մասին ըստ էության որոշման մեջ) արբիտրաժի դեպքում կարող է լուրջ բարդությունների պատճառ դառնալ, եթե արբիտրի կամ արբիտրների նշանակման հարցում կողմերի միջև համաձայնություն չլինի, և այդ մասին դատարան դիմելու դեպքում ձգձգվի դատական գործընթացը, քանի որ ո՛չ Օրենքում և ո՛չ էլ ՔԴՕ-ում դատարանի չնշանակած արբիտր(ներ) նշանակելու դիմումին վերահասություն տալու և որոշում կայացնելու համար ոչ մի ժամկետ սահմանված չէ¹¹⁷:

Միջազգային արբիտրաժային պրակտիկայում այս առնչությամբ քննարկվում է այն հարցը, թե արդյոք կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ բացառել իրենց հարաբերությունների նկատմամբ Մոդելային օրենքի 9-րդ հոդվածի կիրառումը: Համաձայն Մոդելային օրենքի նախապատրաստական աշխատանքներն ամփոփող փաստաթղթերի՝ Մոդելային օրենքի հոդված 9-ը ո՛չ բացառում է նման համաձայնությունների հնարավորությունը, ո՛չ

¹¹⁷ Արդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 250-251:

թույլատրում, կարճ ասած՝ հողված 9-ը քննարկվող հարցը չի կարգավորում: Մոդելային օրենքի 9-րդ հոդվածն ուղղված է դատարաններին և նպատակ ունի շեշտադրելու, որ հայցի ապահովման միջոցի կիրառման համար դատարան դիմելն անհամատեղելի չէ արբիտրաժային համաձայնության հետ¹¹⁸: Հնդկական դատարանը գործերից մեկով համարել է, որ կողմերը բացառել են հնդկական դատարանի՝ հայցի ապահովման միջոցների կիրառման հնարավորությունը՝ Սինգապուրում գտնվող արբիտրաժային հաստատության միջոցով վեճի լուծման կարգ նախատեսելով և արբիտրաժային համաձայնությունից բխող վեճերը Սինգապուրում գործող դատարաններին հանձնելու մասին պայմանավորվելով¹¹⁹:

Օրենքի 17.7 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային վարույթի շրջանակում դատարանն ունի ՔԴՕ-ով սահմանված հայցի ապահովման միջոցներ կիրառելու նույն իրավասությունը, հետևաբար դատարանը հնարավորություն ունի կիրառելու ՔԴՕ-ի 129-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցի ապահովման բոլոր միջոցները: Առնվազն միջազգային արբիտրաժի տեսանկյունից հայցի ապահովման միջոցներ են համարվում՝ (ա) առկա վիճակի (status quo) անփոփոխ պահպանումը, (բ) ձեռնարկելը կամ չձեռնարկելն այնպիսի արարքներ, որոնք կարող են վնաս պատճառել, (գ) գույքի պահպանումը, (դ) ապացույցների պահպանումը, (ե) գույքի քննության/ստուգման հնարավորության ստեղծումը, (զ) վեճի առավել բարդացման/լրջացման կանխարգելումը, (է)

¹¹⁸ Նույն տեղում, էջ 55, 11-րդ կետ:

¹¹⁹ Նույն տեղում, 12-րդ կետ:

պայմանագրային պարտավորությունների կատարումը, (ը) վեճի առարկա պահանջների ապահովումը, (թ) ծախսերի ապահովումը, (ժ) գաղտնապահության պահանջների պահպանումը¹²⁰:

¹²⁰ Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 239:

§2. Դատարանի՝ արբիտրի նշանակումը

Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմերն ազատ են համաձայնեցնելու արբիտրի կամ արբիտրների նշանակման ընթացակարգը: Այս նորմից հետևում է, որ Օրենքը հնարավորություն է ընձեռում արբիտրաժային համաձայնության կողմերին փոխադարձ համաձայնությամբ որոշելու արբիտրաժային տրիբունալի կազմավորման ընթացակարգը: Այն, ըստ գերմանական դատարանի, կարող է որոշվել նաև արբիտրաժային կենտրոնի կանոնակարգին հղում անելու միջոցով¹²¹:

Կողմերի համաձայնությամբ քննարկվող ընթացակարգի որոշման հնարավորությունը նախատեսված է նաև Մոդելային օրենքով և լայնորեն կիրառվում է միջազգային արբիտրաժային պրակտիկայում: Այնուամենայնիվ, Հնդկաստանի բարձրագույն դատարանը գործերից մեկով համարել է, որ բացառիկ դեպքերում արբիտրների նշանակման՝ կողմերի համաձայնությամբ սահմանված ընթացակարգը կարող է շրջանցվել արբիտրաժի միջոցով վեճի լուծման օպերատիվության և արդյունավետության ապահովման համար: Հաշվի առնելով արբիտրաժային տրիբունալի ձևավորման հարցում կողմերի համաձայնությամբ նախատեսված ընթացակարգի կիրառման որոշ անհաջող փորձեր՝ դատարանն այս գործով կիրառել է արբիտրաժային տրիբունալի ձևավորման

¹²¹ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 59, 4-րդ կետ:

ընթացակարգ, որը տարբերվում է կողմերի համաձայնությամբ սահմանված ընթացակարգից¹²²:

Թեև տրամաբանական է թվում, որ վեճն արբիտրաժով լուծելու մասին իրենց համաձայնությունը տված կողմերը չպետք է խոչընդոտեն տրիբունալի կազմավորումը՝ թերանալով կատարել արբիտր նշանակելու իրենց ստանձնած պայմանագրային պարտավորությունը, սակայն այլ բան է վկայում փորձը: Քիչ չեն այն դեպքերը, երբ պատասխանող կողմը թերանում է իր արբիտրին տրիբունալի կազմում նշանակել, կողմերը չեն հաջողում փոխհամաձայնությամբ նշանակել միանձնյա արբիտրին, կամ կողմերի նշանակած արբիտրները համաձայնության չեն հասնում երրորդ՝ նախագահող արբիտրի նշանակման հարցում¹²³:

Նման իրավիճակներում փակուղու առաջ չկանգնելու և արբիտրաժի միջոցով վեճի լուծման հնարավորությունն ապահովելու համար էլ նախատեսվել են Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը: Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվում է այն ժամանակ, երբ կողմերը փոխադարձ համաձայնությամբ չեն սահմանել արբիտրների նշանակման ընթացակարգ, և կիրառվում է Օրենքով սահմանված ընթացակարգը, որի շրջանակում հնարավոր չի եղել ձևավորել արբիտրաժային տրիբունալը: Իսկ Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը կիրառվում է այն ժամանակ, երբ կողմերը փոխադարձ համաձայնությամբ սահմանել են արբիտրների նշանակման

¹²² Նույն տեղում, 7-րդ կետ:

¹²³ Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 136:

ընթացակարգ, որի շրջանակում, սակայն, հնարավոր չի եղել ձևավորել արբիտրաժային տրիբունալը:

Կարևոր և հակասական հարց է այն, թե արդյոք կարելի է առարկել Օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված դիմումին այն հիմքով, որ արբիտրաժային համաձայնությունը, որին հղում է անում կողմը, գոյություն չունի, անվավեր է կամ չի վերաբերում այդ վեճին: Դատարանները, մի կողմից, որոշ գործերով համարել են, որ այս դիմումի քննության ժամանակ դատավորները կարող են անդրադառնալ նմանօրինակ առարկություններին և գնահատել դրանց հիմքերի առկայությունը կամ բացակայությունը, իսկ մյուս կողմից՝ այլ գործերով այն դիրքորոշումն են արտահայտել, որ արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու կարգը բացառում է այս դիմումի քննության փուլում նշված առարկություններին անդրադառնալու դատարանի հնարավորությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված ապացույցներից ակնհայտորեն երևում է, որ արբիտրաժային համաձայնությունը գոյություն չունի, անվավեր է կամ չի վերաբերում այդ վեճին¹²⁴: Օրինակ՝ քենիական դատարանը գործերից մեկով մերժել է արբիտր նշանակելու դիմումը այն հիմնավորմամբ, որ վերջնական որոշում կայացնելու՝ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված ժամկետը լրացել է, ուստի արբիտրաժային տրիբունալն այլևս իրավասու չի լինի որոշում կայացնելու այդ վեճով¹²⁵: Մենք ևս կարծում ենք, որ արբիտր նշանակելու դիմումին վերոնշյալ

¹²⁴ Նույն տեղում, էջ 61, 15-րդ կետ:

¹²⁵ Նույն տեղում, 16-րդ կետ:

հիմքով ներկայացված առարկություններին դատարանը կարող է անդրադառնալ և այդ հիմքով մերժել արբիտր նշանակելու դիմումը միայն այն դեպքում, երբ ներկայացված ապացույցներից ակնհայտորեն երևում է, որ արբիտրաժային համաձայնությունը, որին հղում է անում կողմը, գոյություն չունի, անվավեր է կամ չի վերաբերում այդ վեճին: Եթե դա ակնհայտ չէ ներկայացված ապացույցներից, ապա նման դեպքերում դատարանները չեն կարող անդրադառնալ այդ առարկություններին, քանի որ դրա համար ինչպես Օրենքով, այնպես էլ ՔԴՕ-ով նախատեսված է այլ ընթացակարգ, մասնավորապես՝ արբիտրաժային տրիբունալն իրավասու է որոշում կայացնելու իր իրավասության վերաբերյալ, իսկ որոշմանը համաձայն չլինելու դեպքում կողմը կարող է դիմել դատարան տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հայցով:

Խնդրահարույց է նաև այն հարցը, թե ինչպես պետք է որոշի դատարանը այն արբիտրին, որին պետք է նշանակի կողմերի միջև առաջացած վեճը լուծելու համար: Եթե կողմերն արբիտրաժային համաձայնությամբ ընտրել են մշտապես գործող արբիտրաժային հաստատություն, որը պետք է կազմակերպի արբիտրաժի իրականացումը, ապա այս խնդիրը շատ բարդություններ չի առաջացնում (քանի որ դատարանը կարող է ընտրություն կատարել այդ հաստատության արբիտրների ցանկից): Իրավիճակն առավել բարդանում է, երբ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է ad hoc արբիտրաժի միջոցով վեճի լուծման կարգ: Այս հարցին գործերից մեկով անդրադարձել է Նայրոբիի բարձր դատարանը՝ համարելով, որ կողմերն արբիտր նշանակելու պահանջով՝

դատարան դիմելիս պետք է նաև առաջարկություններ ներկայացնեն կոնկրետ արբիտր նշանակելու վերաբերյալ¹²⁶:

Իսկ ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ կողմերի համաձայնությամբ նախատեսված է արբիտրաժային տրիբունալի ձևավորման ընթացակարգ, սակայն սահմանված չէ այն ժամկետը, որի ընթացքում արբիտր նշանակելու իրավասությամբ օժտված սուբյեկտները պետք է կատարեն իրենց գործառույթը: Այս հարցին անդրադառնալով՝ գերմանական դատարանն այն դիրքորոշումն է արտահայտել, որ նման դեպքերում պետք է կիրառվի Մոդելային օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով (ամբողջությամբ համապատասխանում է Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասին) սահմանված ժամկետը, և դատարանը, ղեկավարվելով նույն հոդվածի 4-րդ մասով (ամբողջությամբ համապատասխանում է Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասին), պետք է նշանակի արբիտր¹²⁷: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ կողմերը փոխադարձ համաձայնությամբ նախատեսել են արբիտրաժային տրիբունալի ձևավորման ընթացակարգ, սակայն չեն սահմանել այն ժամկետը, որի ընթացքում արբիտր նշանակելու իրավասությամբ օժտված սուբյեկտները պետք է կատարեն իրենց գործառույթը, անհրաժեշտ է ղեկավարվել Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետով:

Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ դատարանն արբիտր նշանակելիս պարտավոր է հաշվի առնել նրա որակավորման վերաբերյալ կողմերի համաձայնության մեջ

¹²⁶ Նույն տեղում, էջ 60, 9-րդ կետ:

¹²⁷ Նույն տեղում, էջ 61-62, 18-րդ կետ:

առկա պահանջները և այն հանգամանքները, որոնք կարող են ապահովել անկախ և անաչառ արբիտրի նշանակումը: Փորձը ցույց է տալիս, որ արբիտրների նշանակման և տրիբունալի կազմավորման հարցում առաջացած դժվարությունների պատճառը ոչ բոլոր դեպքերում է կողմի կամ կողմերի թերացումը՝ իրենց պայմանագրային պարտավորությունների կատարումը, այլ դա կարող է հետևանքը լինել արբիտրաժային համաձայնագրում արբիտրների առանձնահատկությունների կապակցությամբ ներառված բացառիկ բարդ և դժվար բավարարվող պայմանների: Օրինակ՝ արբիտրաժային համաձայնությունում կարող է նախատեսված լինել պայման, որ միանձնյա արբիտրը պետք է լինի, ասենք, նավթարդյունաբերության ոլորտում առնվազն 25 տարվա փորձ ունեցող իրավաբան, տիրապետի իտալերենին և Սաուդյան Արաբիայի իրավունքին: Նման պայմանները, որոնք կարող են ողջամիտ համարվել համաձայնագիրը կնքելիս, արբիտրի նշանակման պահին կարող են լուրջ բարդությունների առիթ դառնալ և դժվարացնել կողմերի համաձայնությամբ արբիտրի ընտրությունը¹²⁸:

Եթե արբիտրաժային համաձայնությունում ներառված է պայման՝ արբիտրի քաղաքացիության կապակցությամբ, թվում է, թե դատարանը հողվածում օգտագործված «դատարանը պարտավոր է հաշվի առնել» նախադասությունը կարող է մեկնաբանել որպես ոչ պարտադիր պայման, որին դատարանը օրենքով պարտավոր չէ ենթարկվել: Նման եզրակացությունը

¹²⁸ Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 138-139:

(հնարավոր լինելու դեպքում անգամ) Օրենքի շատ նեղ իմաստով մեկնաբանության արդյունք է և խրախուսելի չէ, քանի որ լիովին հակասում է արբիտրաժի առանցքային սկզբունքներից կարևորագույնին, այն է՝ արբիտրաժի՝ կողմերի իրավունքը թելադրելու ամբողջ գործընթացի պայմանները (բացառությամբ օրենքով սահմանված արգելքների), ընդ որում՝ սահմանելու այն պայմանները, որ պետք է լրացնի գործը քննող արբիտրը¹²⁹:

Այս առնչությամբ հետաքրքրական է Անգլիայի վճռաբեկ դատարանի որոշումը գործերից մեկով, որտեղ վիճարկվում էր կողմերի միջև առկա վեճի լուծման համար արբիտրի նշանակումը: Համաձայն կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնագրի (արբիտրաժի մասին պայմանագրային վերապահման)՝ վեճը պետք է լուծվեր միանձնյա արբիտրի միջոցով, որ պետք է լիներ իսլամական «Իսմայիլի» աղանդի անդամ:

Հաշվանին որպես արբիտր առաջարկել էր Էնթոնի Քոլմանին, որն այդ աղանդին չէր պատկանում, և եթե Ջիվրաջը չառարկեր, կդառնար միանձնյա արբիտր: Ջիվրաջն առարկել էր վերոնշյալ նշանակմանը, և Անգլիայի առաջին իրավասության դատարանը բավարարել էր Ջիվրաջի առարկությունը: Վերաքննիչ դատարանը բեկանել էր այդ որոշումը՝ արբիտրի նշանակման մասին պայմանը համարելով խտրական, հետևաբար նաև հակաօրինական: Վճռաբեկ դատարանը բեկանել էր Վերաքննիչի որոշումը՝ ի թիվս այլ հիմնավորումների՝ եզրակացնելով, որ արբիտրաժի դեպքում առաջնահերթությունը

¹²⁹ Նույն տեղում, էջ 142:

պետք է տրվի արբիտրաժային համաձայնագրում ներառված պայմանին¹³⁰:

Իսկ ի՞նչ պահանջներով պետք է ղեկավարվի դատարանը արբիտր նշանակելիս, եթե կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, արբիտրի որակավորմանը ներկայացվող պահանջներ չեն նախատեսել: Օրենքն այս հարցի պատասխանը չի տալիս, այլ միայն 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանում է այն պահանջները, որոնք պարտադիր են ինչպես կողմերի, այնպես էլ դատարանի համար¹³¹: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում ընդունված է, որ այն դեպքում, երբ կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, արբիտրի որակավորմանը ներկայացվող պահանջներ չեն նախատեսել, դատարանն արբիտր նշանակելիս պետք է ոչ միայն ղեկավարվի անկախ և անաչառ արբիտրաժային տրիբունալի ձևավորման անհրաժեշտությամբ, այլև հաշվի առնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են վեճի լուծման նկատմամբ կիրառման ենթակա իրավունքը, վեճի բնույթը և առաջարկվող արբիտրների առկայությունը¹³²:

¹³⁰ Նույն տեղում:

¹³¹ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արբիտր կարող է լինել 25 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ: Արբիտր չի կարող լինել դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված, հանցագործություն կատարելու համար դատապարտված անձը, ինչպես նաև այն անձը, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում»: Առավել մանրամասն տե՛ս՝ Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 144-148:

¹³² Նույն տեղում:

Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը դատարանին պարտավորեցնում է միջազգային արբիտրաժի դեպքում միանձնյա կամ երրորդ արբիտր նշանակելիս հաշվի առնել նաև կողմերի երկրների քաղաքացի չհանդիսացող անձին որպես արբիտր նշանակելու նպատակահարմարությունը: Ինչպես նկատում ենք, այս նորմը դատարանին պարտավորեցնում է ոչ թե արբիտր նշանակել կողմերի երկրների քաղաքացի չհանդիսացող անձին, այլ հաշվի առնել այդպիսի անձի նշանակման նպատակահարմարությունը: Օրինակ՝ Քվեբեկի գերագույն դատարանը, գործերից մեկում հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամերիկյան և քվեբեկյան կողմերի միջև իրականացվող արբիտրաժի նկատմամբ կիրառման ենթակա է Քվեբեկի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, համարել է, որ դատարանի նշանակելիք արբիտրը պետք է լինի Քվեբեկից¹³³:

Չնայած Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասում օգտագործվում է «միջազգային արբիտրաժ» հասկացությունը, այնուամենայնիվ ՀՀ օրենսդրությամբ դրա բովանդակությունը չի բացահայտվում, թե որպիսի պայմաններում դրա կիրառման հետ կապված կարող են խնդիրներ առաջանալ: «Միջազգային արբիտրաժ» հասկացության բովանդակությունը բացահայտվում է Մոդելային օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ արբիտրաժը միջազգային է, եթե.

- արբիտրաժային համաձայնության կնքման պահին դրա կողմերի ձեռնարկատիրական գործունեության վայրերը գտնվել են տարբեր պետություններում,

¹³³ Նույն տեղում, 23-րդ կետ:

- նշված վայրերից մեկը գտնվում է այն պետության սահմաններից դուրս, որտեղ արբիտրաժային համաձայնության կողմերն ունեն իրենց ձեռնարկատիրական գործունեության վայրերը.

- արբիտրաժայի վայրը, որը նախատեսված է արբիտրաժային համաձայնությամբ կամ բխում է դրանից,

- այն վայրը, որտեղ առևտրային հարաբերությունների բովանդակությունը կազմող գործողությունների մեծ մասը պետք է կատարվի, կամ այն վայրը, որը վեճի հետ առավել սերտորեն է կապված,

- կողմերն ուղղակիորեն համաձայնել են, որ արբիտրաժային համաձայնության առարկան վերաբերում է մի քանի երկրի:

Նույն հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ 1-ին հոդվածի 3-րդ մասի իմաստով, եթե.

- կողմն ունի ձեռնարկատիրական գործունեության մի քանի վայր, ապա ձեռնարկատիրական գործունեության վայր պետք է համարվի այն, որն առավել սերտորեն է կապված արբիտրաժային համաձայնության հետ,

- եթե կողմը չունի ձեռնարկատիրական գործունեության վայր, ապա հիմք է ընդունվում նրա բնակության վայրը:

Կարծում ենք, որ միջազգային արբիտրաժի դեպքում կողմերի երկրների քաղաքացի չհանդիսացող անձին որպես արբիտր նշանակելու նպատակահարմարությունը գնահատելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև վեճի լուծման նկատմամբ կիրառման ենթակա իրավունքը, կողմերի և արբիտրի լեզուն և այլ հանգամանքներ:

§3. Դատարանի՝ արբիտրին հայտնած բացարկի վերաբերյալ որոշման կայացումը

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, երբ առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ երբ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում: Արբիտրի բացարկման ընթացակարգը նախատեսված է Օրենքի 13-րդ հոդվածով: Մասնավորապես, Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե արբիտրաժային տրիբունալը մերժում է արբիտրի բացարկի դիմումը, ապա բացարկ հայտնած կողմը մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով:

Այսպիսով, համաձայն Օրենքի, արբիտրին բացարկ կարող է ներկայացվել հետևյալ երեք դեպքերում.

- Առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության վերաբերյալ:
- Առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկախության վերաբերյալ:
- Արբիտրը չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում:

Կարող ենք նկատել, որ Օրենքն առանձնացնում է արբիտրին ներկայացվող երկու ինքնուրույն պահանջներ՝ անկողմնակալություն և անկախություն: Չնայած այս երկու կատեգորիաները սերտորեն փոխկապակցված են,

այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք ունեն բովանդակային տարբերություններ: Նշենք նաև, որ կան պետություններ, որոնց ազգային օրենսդրություններում որպես արբիտրին ներկայացվող պահանջ նախատեսված է միայն անկախությունը (օրինակ՝ Շվեդիա, Շվեյցարիա), և կան պետություններ, որտեղ որպես արբիտրին ներկայացվող պահանջ սահմանված է միայն անկողմնակալությունը (օրինակ՝ Անգլիա)¹³⁴:

Տեսական գրականության մեջ արբիտրի կախվածությունը կողմից բնութագրվում է որպես մի իրավիճակ, որտեղ արբիտրն օբյեկտիվորեն կապված է կողմի հետ, մասնավորապես՝ երբ արբիտրը ծառայողական կապ ունի կողմի հետ, կապված է կորպորատիվ հարաբերություններով, նրա նյութական վիճակը կախված է կողմից, նրա շահերը համընկնում են կողմի շահերի հետ: Կողմնակալությունն արբիտրի սուբյեկտիվ վերաբերմունքն է կողմի կամ նրա ներկայացուցչի նկատմամբ, որը պայմանավորված չէ արբիտրի կախյալ վիճակով: Այս տարբերություններով պայմանավորված՝ արբիտրը կարող է լինել անկախ, սակայն կողմնակալ, և հակառակը: Արբիտրի անկախության գնահատումը, ի տարբերություն վերջինիս անկողմնակալության գնահատման, առավել հեշտ է, քանի որ արտահայտվում է օբյեկտիվ կապերով: Կողմնակալությունը՝ որպես սուբյեկտիվ երևույթ, կարող է ակնհայտորեն արտահայտված չլինել և երևալ, օրինակ, արբիտրի հանրային ելույթներից, սոցիալական ցանցերում

¹³⁴ «Библиотека журнала “Третейский суд”. Международный коммерческий арбитраж», учебник, выпуск 9, 2-е издание, Ответственный редактор Т. А. Лунаева, ст. 334.

ձևավորված կապերից ևն: Կարևոր է տարբերակել արբիտրի վերաբերմունքը կողմի կամ ներկայացուցչի անձի՝ մի կողմից, և մյուս կողմից՝ վերջինիս դիրքորոշման նկատմամբ: Օրինակ՝ արբիտրը կարող է բացասական վերաբերմունք ունենալ անձի դիրքորոշման նկատմամբ, սակայն լրիվ չեզոք լինել նրա՝ որպես անձի հետ հարաբերություններում¹³⁵:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է այն հիմքերի ոչ սպառիչ ցանկը, որոնք կարող են վկայել արբիտրի կողմնակալության կամ կախվածության մասին, և որոնց առկայության դեպքում նրան կարող է բացարկ ներկայացվել: Այդ հիմքերն են.

- Արբիտրը կանխակալ վերաբերմունք ունի արբիտրաժի կողմի կամ մասնակցի (կողմի ներկայացուցչի, արբիտրաժային վարույթում որպես վկա, փորձագետ, մասնագետ ներգրավված անձանց) նկատմամբ:

- Արբիտրը նախկինում ներգրավված է եղել արբիտրաժի կողմերի մասնակցությամբ նույն առարկայի մասին, սակայն տարբեր փաստական հիմքերով գործի վեճի քննությանը:

- Արբիտրին փոխկապակցված անձն¹³⁶ արբիտրաժի կողմ կամ մասնակից է կամ եղել է:

- Արբիտրը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ ինքն անձամբ կամ իրեն փոխկապակցված անձը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:

¹³⁵ Նույն տեղում, էջ 335:

¹³⁶ «Փոխկապակցված անձ» հասկացությունը սահմանված է Օրենքի 12-րդ հոդվածի 2.1 կետով:

Օրենքը հնարավորություն է տալիս արբիտրաժային հաստատություններին, վերագրյալ հիմքերից բացի, իրենց ներքին կանոններով սահմանելու արբիտրին բացարկ հայտնելու այլ հիմքեր: Ելնելով արբիտրաժային վարույթում բարեխղճության ապահովման և իրավունքների չարաշահման բացառման անհրաժեշտությունից՝ Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ կողմը կարող է բացարկ հայտնել իր նշանակած կամ իր մասնակցությամբ նշանակված արբիտրին միայն այնպիսի հիմքերով, որոնք իրեն հայտնի են դարձել նշանակումից հետո:

Արբիտրի անկախությունն ու անկողմնակալությունը ստուգելու համար չկան համընդհանուր ընդունելի չափանիշներ: Փորձը ցույց է տալիս, որ տարբեր երկրների դատարաններ կիրառել են ստուգման տարբեր չափանիշներ՝ ելնելով հատկապես տվյալ երկրի սոցիալական հարաբերությունների մշակույթից և հասարակության ընկալումներից: Օրինակ՝ անգլիական դատարանների կիրառած չափանիշն այսպես է արտահայտված Լորդերի պալատի (Վճռաբեկ դատարան) գործերից մեկով կայացված վճռում. «Ստուգման չափանիշն այն է, թե արդյոք արդարամիտ և տեղեկացված դիտորդը փաստերի քննարկման արդյունքում կհասնի այն եզրակացության, որ առկա է իրական հավանականություն, որ տրիբունալը եղել է կողմնակալ»: Նույն հարցի կապակցությամբ ամերիկյան դատարանը ստուգման թեստ կամ չափանիշ չի առաջարկում, այլ եզրակացնում է, որ արբիտրաժային վճիռը կարող է չեղարկվել, եթե «ցանկացած ողջամիտ մարդու կարծիքով արբիտրներից

մեկը կողմնակալություն է ցուցաբերել վեճի կողմերից մեկի նկատմամբ»¹³⁷:

Արբիտրների անկախության և անկողմնակալության հարցի պարզաբանման համար կարևոր դերակատարություն ունի Իրավաբանների միջազգային ասոցիացիայի մշակած «Միջազգային արբիտրաժում շահերի բախման իրավիճակների մասին ուղեցույց»-ը, որտեղ նկարագրված են շահերի բախման իրավիճակներ, որոնք ըստ լրջության աստիճանի բաժանվում են երեք խմբի՝ կարմիր, նարնջագույն և կանաչ: Կարմիր խմբում ընդգրկված իրավիճակները բաժանվում են երկու ենթախմբի: Առաջին ենթախմբում նկարագրված են այնպիսի իրավիճակներ, որոնց առկայության դեպքում անձը չի կարող պաշտոնավարել որպես արբիտր, իսկ երկրորդում՝ այնպիսիք, որոնց առկայության դեպքում անձը կողմերի համաձայնությամբ կարող է պաշտոնավարել որպես արբիտր: Առաջին ենթախմբում ընդգրկված իրավիճակներն են.

- Արբիտրը և արբիտրաժի կողմը նույնանում են, կամ արբիտրը արբիտրաժի կողմի ներկայացուցիչն է կամ աշխատողը:

- Արբիտրը արբիտրաժի կողմի մենեջերն է, տնօրենը կամ տնօրենների խորհրդի անդամը, կամ արբիտրը վերահսկում է կողմերից մեկին կամ այնպիսի անձի, որ ուղղակի նյութական շահագրգռվածություն ունի վեճի ելքով:

¹³⁷ Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 153-154:

- Արբիտրը ֆինանսական կամ անձնական լուրջ հետաքրքրություն ունի կողմերից մեկի նկատմամբ կամ գործի ելքում:

- Արբիտրը այդ պահին կա՛մ կանոնավոր կերպով խորհրդատվական ծառայություններ է մատուցում կողմին կամ նրան փոխկապակցված անձին, և արբիտրը կամ նրա ընկերությունը կամ գործատուն էական եկամուտ է ստանում այդ ծառայություններից:

Երկրորդ ենթախմբում ընգրկված իրավիճակներից են .

- Արբիտրը կողմին կամ նրան փոխկապակցված անձին վեճի առնչությամբ իրավաբանական խորհրդատվություն է մատուցել կամ մասնագիտական կարծիք է հայտնել:

- Արբիտրին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են կողմի կամ նրան փոխկապակցված անձի բաժնետոմսերը:

- Արբիտրի մոտ ազգականը լուրջ տնտեսական շահ ունի վեճի ելքով:

- Արբիտրը այդ պահին կամ կանոնավոր կերպով խորհրդատվական ծառայություն է մատուցում արբիտրաժի կողմին կամ նրան փոխկապակցված անձին, սակայն այդ ամենի դիմաց էական եկամուտ չի ստանում:

- Արբիտրը այն նույն իրավաբանական գրասենյակի իրավաբան է, որի աշխատակից է նաև արբիտրաժի կողմի փաստաբանը:

- Արբիտրի իրավաբանական գրասենյակը կամ գործատուն կարևոր առևտրային հարաբերությունների մեջ է կողմի կամ նրան փոխկապակցված անձի հետ:

Նարնջագույն խմբում նկարագրված են այնպիսի իրավիճակներ, որոնք կարող են անկողմնակալության կամ անկախության մասին կասկած հարուցել, և արբիտրը պարտավոր է բացահայտել դրանք: Այս հանգամանքներում արբիտրը շարունակում է պաշտոնավարել, եթե սահմանված ժամկետում կողմ(եր)ը առարկություններ չի/չեն ներկայացնում: Նարնջագույն խմբում ընգրկված իրավիճակներից են.

- Արբիտրը վերջին երեք տարիների ընթացքում որպես փաստաբան հանդես է եկել կողմի կամ նրան փոխկապակցված անձի դեմ գործում, որը որևէ կապ չունի արբիտրաժում քննվող գործի հետ:

- Արբիտրին վերջին երեք տարիների ընթացքում երկու կամ ավելի անգամ արբիտր է ընտրել կողմը կամ նրան փոխկապակցված անձը:

- Արբիտրները միևնույն իրավաբանական գրասենյակի իրավաբաններ են:

- Արբիտրի և կողմի փաստաբանի միջև առկա են մոտ ընկերական հարաբերություններ:

- Արբիտրի և գործով մասնակցող փաստաբանի միջև առկա են թշնամական հարաբերություններ:

Կանաչ խմբում նկարագրված են այնպիսի իրավիճակներ, որոնք չեն կարող կասկած առաջացնել արբիտրի անկախության կամ անկողմնակալության վերաբերյալ, և արբիտրը պարտավոր չէ բացահայտել դրանք: Այդ իրավիճակներից են.

- Արբիտրը նախկինում մասնագիտական կարծիք է հայտնել այնպիսի իրավական հարցի վերաբերյալ, որը

քննարկման առարկա է նաև արբիտրաժի միջոցով լուծվող վեճի շրջանակում:

- Արբիտրը և կողմի փաստաբանը նախկինում՝ այլ գործի շրջանակում, եղել են նշանակված արբիտրներ:

- Արբիտրը մյուս արբիտրի կամ կողմի փաստաբանի հետ դասավանդում է միևնույն ֆակլուտետում կամ դպրոցում կամ նրանց հետ պաշտոնավարում է որևէ մասնագիտական ասոցիացիայում կամ սոցիալական կամ բարեգործական կազմակերպությունում:

- Արբիտրը սոցիալական հարթակի միջոցով կապված է կողմի կամ նրան փոխակապակցված անձի հետ¹³⁸:

Քանի որ չկա համընդհանուր ընդունելի թեստ, չափանիշ կամ ստանդարտ, տարբեր երկրների դատական փորձի ուսումնասիրության հիման վրա հետևյալ ցանկն է առաջարկվել որպես ուղեցույց՝ ստուգելու այն հանգամանքները, որոնք կարող են արբիտրի անկախության կամ անկողմնակալության կապակցությամբ կասկած հարուցել.

- Ոչ ոք չի կարող որպես արբիտր հանդես գալ այն գործում, որի կողմերից մեկն ինքն է:

- Ոչ ոք չի կարող որպես արբիտր հանդես գալ այն գործում, որի ելքում ունի տնտեսական/նյութական ուղղակի շահախնդրություն:

- Կողմերից մեկի մոտ աշխատող անձը չի կարող որպես արբիտր հանդես գալ այն արբիտրաժում, որի կողմերից մեկն իր գործատուն է:

¹³⁸ IBA Guidelines on Conflicts of Interest in International Arbitration, pp. 14-19.

- Անձը, որ նախապես ինչ-որ կերպ մասնակցություն է ունեցել արբիտրաժի առարկա գործին, իրավունք չունի որպես արբիտր հանդես գալու նույն գործով ընթացող արբիտրաժում՝ բացառությամբ բացահայտման և կողմերի համաձայնության դեպքի:

- Որպես արբիտր աշխատող անձը կարող է ենթարկվել բացարկման, եթե արբիտրաժի ընթացքում հանդիպել կամ այլ կերպ հարաբերվել է կողմերից մեկի հետ,

- Կողմերից մեկի հետ անձնական (օրինակ՝ ընկերական) կամ ազգակցական կապ ունեցող անձը չի կարող հանդես գալ որպես արբիտր այդ կողմի մասնակցությամբ ընթացող արբիտրաժում:

- Արբիտրաժի կողմերից մեկի հետ բիզնես հարաբերության մեջ գտնվող անձը չի կարող որպես արբիտր հանդես գալ այդ կողմի մասնակցությամբ անցկացվող արբիտրաժում: Անձը, կախված իր ունեցած բիզնես հարաբերության տեսակից կամ մակարդակից, որպես արբիտր առաջարկվելու դեպքում, պարտավոր է բացահայտել տվյալ բիզնես հարաբերության տեսակն ու մակարդակը և կարող է նշանակումը ընդունել կողմերի համաձայնության դեպքում:

- Այն դեպքում, երբ որպես արբիտր առաջարկված անձը փաստաբանի կամ ներկայացուցչի կարգավիճակով ներկայացրել է կողմերից մեկին մեկ այլ գործում, պարտավոր է բացահայտել այն և նշանակումն ընդունել միայն կողմերի համաձայնության դեպքում:

- Եթե որպես արբիտր առաջարկված անձը անդամակցում է մի իրավաբանական գրասենյակի, որ մեկ այլ գործով ներկայացրել կամ ներկայացնում է արբիտրաժի

կողմերից մեկին, պարտավոր է բացահայտել տվյալ հարաբերության առկայությունը և միայն կողմերի համաձայնության դեպքում ընդունել իր նշանակումը որպես արբիտր:

- Այն դեպքում, երբ որպես արբիտր առաջարկված անձը՝ որպես փաստաբան կամ ներկայացուցիչ, ներկայացնում է երրորդ անձի՝ արբիտրաժի կողմերից մեկի դեմ արժարժված գործում, կարող է ընդունել իր նշանակումը այդ հարաբերությունը բացահայտելուց հետո և միայն կողմերի համաձայնության դեպքում³⁹:

Հարկ է ուշադրություն դարձնել, որ, Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քանի դեռ կողմի ներկայացրած բացարկի դիմումի վերաբերյալ որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել: Եթե արբիտրի բացարկի կամ արբիտրաժի իրավասության մասին որոշում ընդունելու դիմումի քննության ընթացքում պարզվում է, որ արբիտրաժը կայացրել է վեճն ըստ էության լուծող վճիռ, ապա դատարանը, ղեկավարվելով ՔԴՕ-ի 334-րդ հոդվածի 3-րդ մասով, դիմումը թողնում է առանց քննության՝ արբիտրաժում վարույթն ավարտելու հիմքով: Այս դեպքում բացարկի դիմում ներկայացրած կողմը չի զրկվում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու կամ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումի քննության

³⁹ Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ հրատարակչություն, Երևան, 2021, էջ 154-155:

ընթացքում իր դիմումի հիմքում դրված հանգամանքները վկայակոչելու իրավունքից: Այս դեպքում լավագույն տարբերակը կլինի վկայակոչել Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետը և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը. դրանք նախատեսում են, որ արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվում և դրա հարկադիր կատարումը մերժվում է, եթե արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի համաձայնությանը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ օրենքին¹⁴⁰:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 162-163:

§4. Դատարանի՝ արբիտրի լիազորությունների դադարեցման որոշման կայացումը

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ արբիտրը իրավաբանորեն (*de jure*) կամ փաստացի (*de facto*) ի վիճակի չէ կատարելու կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են ինքնաբացարկ հայտնելու միջոցով, կամ երբ կողմերը համաձայնում են նրա լիազորությունների դադարեցմանը: Այլ դեպքերում, երբ առկա են տարածայնություններ այդ հիմքերից որևէ մեկի վերաբերյալ, արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Այս նորմով նախատեսված է արբիտրի լիազորությունների դադարեցման երեք հիմք.

- Արբիտրը իրավաբանորեն (*de jure*) ի վիճակի չէ կատարելու իր գործառույթները:
- Արբիտրը փաստացի (*de facto*) ի վիճակի չէ կատարելու իր գործառույթները:
- Արբիտրը այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները առանց անհարկի ձգձգման:

Ընդ որում՝ նշված հիմքերի առկայության դեպքում արբիտրի լիազորությունները դադարում են ինքնաբացարկ հայտնելու միջոցով, կամ եթե նրա լիազորությունների դադարեցման մասին կողմերը համաձայնություն ունեն: Արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել

դատարան, եթե առկա են տարածայնություններ վերոգրյալ հիմքերից որևէ մեկի վերաբերյալ:

Կարևոր նշանակություն ունի, մի կողմից, Օրենքի 13-րդ հոդվածով, իսկ մյուս կողմից՝ 14-րդ հոդվածով սահմանված կարգով արբիտրի լիազորությունների դադարեցման հիմքերի տարբերակումը: Նշված տարբերությունն ընդգծել է Դելիի բարձր դատարանը, որն իր վարույթում գտնվող երկու գործերով մերժել է արբիտրի լիազորությունների դադարեցման դիմումը՝ համարելով, որ դրանով վկայակոչված հիմքը՝ արբիտրի փոխկապակցվածության վերաբերյալ հիմնավոր կասկածը, նախատեսված չէ Մոդելային օրենքի 14-րդ հոդվածով¹⁴¹ (համապատասխանում է Օրենքի 14-րդ հոդվածին):

Այսպիսով, արբիտրի լիազորությունների դադարեցման հիմք կարող է լինել նրա իրավական կամ փաստացի անկարողությունը մասնակցելու գործի քննությանը: Իրավական անկարողության տակ պետք է հասկանալ այն հանգամանքները, որոնք առաջացել են արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո, և որոնք թույլ չեն տալիս արբիտրին կատարել իր պարտականությունները, ինչպես նաև հանգեցնում են նրան, որ արբիտրը չի համապատասխանում իրեն ներկայացվող պահանջներին: Օրինակ՝ նման հանգամանքներ կարող են լինել արբիտրի գործունակության կամ պահանջված որակավորման կորուստը, արբիտրի՝ իր կարգավիճակի հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելը: Ինչ վերաբերում է գործի քննությանը մասնակցելու փաստացի անկարողությանը, ապա այդպիսի

¹⁴¹ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 70, 2-րդ կետ:

պատճառներ կարող են լինել երկարատև հիվանդությունը, փոխադրման անկարողությունը, ծանրաբեռնվածությունը ևն¹⁴²: Հոնկոնգի դատարանը գործերից մեկով դադարեցրել է արբիտրի լիազորությունները, քանի որ նա ձերբակալվել էր և գտնվում էր կալանքի տակ օտարերկրյա պետությունում: Գերմանական դատարանը մեկ այլ գործով համարել է, որ արբիտրի հիվանդությունը Մոդելային օրենքի 14-րդ հոդվածի իմաստով առաջացրել է արբիտրի գործառույթների կատարման անկարողություն¹⁴³:

Օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով՝ արբիտրի լիազորությունների դադարեցման հիմք է նաև այն, որ արբիտրը այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները առանց անհարկի ձգձգման: Համաձայն Մոդելային օրենքի նախապատրաստական աշխատանքներն ամփոփող փաստաթղթերի՝ գնահատելու համար այն հարցը, թե արդյոք արբիտրները կատարել են իրենց պարտականությունը՝ առանց անհարկի ձգձգման կատարել են իրենց գործառույթները, անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հանգամանքներին.

- Ի՞նչ գործողություն էր ակնկալվում կամ պահանջվում արբիտրից արբիտրաժային համաձայնագրով կամ արբիտրաժի նկատմամբ կիրառվող ընթացակարգով:
- Արդյո՞ք արբիտրը որևէ քայլ չի ձեռնարկել այդ գործողության կատարման համար:

¹⁴² «Библиотека журнала “Третейский суд”. Международный коммерческий арбитраж», учебник, выпуск 9, 2-е издание, Ответственный редактор Т. А. Лунаева, ст. 352.

¹⁴³ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 71, 6-րդ կետ:

- Արդյո՞ք ձգձգումն այնպիսին է, որ անհարկի համարվի՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ տեխնիկական դժվարությունները և գործի բարդությունը:

- Եթե արբիտրը այս առնչությամբ ինչ-որ գործողություն է կատարել, ապա արդյո՞ք նրա վարքագիծն ակնհայտորեն ցածր է այն չափանիշից, որը կարելի էր ողջամտորեն ակնկալել:

Նշված փաստաթղթերի համաձայն՝ ակնկալիքների մակարդակի վրա ազդող գործոններից են արբիտրի արդյունավետ և արագ գործելու կարողությունը, ինչպես նաև արբիտրաժային համաձայնագրով՝ արբիտրից պահանջվող որակավորումները¹⁴⁴:

Այս հիմքով՝ արբիտրի լիազորությունների դադարեցման համար նրա՝ կատարման ենթակա գործողությունների ժամկետները պետք է ոչ թե պարզապես խախտված լինեն, այլ խախտված լինեն էականորեն, ընդ որում՝ առանց որևէ հարգելի պատճառի: Արբիտրի՝ իր գործառույթների կատարման ձգձգումը պետք է էականորեն խախտի կողմերի իրավունքները և խանգարի նրանց իրենց իրավունքները իրականացանել¹⁴⁵:

Որոշ գործերով՝ դատարաններն իրավական դիրքորոշում են արտահայտել առ այն, որ քննարկվող հիմքով արբիտրի լիազորությունները պետք է դադարեն, եթե նա խախտել է արբիտրաժային վճիռ կայացնելու՝ կողմերի համաձայնությամբ

¹⁴⁴ Նույն տեղում, 7-րդ կետ:

¹⁴⁵ «Библиотека журнала “Третейский суд”. Международный коммерческий арбитраж», учебник, выпуск 9, 2-е издание, Ответственный редактор Т. А. Лунаева, ст. 352.

նախատեսված ժամկետը¹⁴⁶: Կարծում ենք, որ եթե կողմերը արբիտրաժի ընթացքում համաձայնության չեն հասել այս հիմքով արբիտրի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ, և կողմը չի դիմել դատարան արբիտրի լիազորությունները դադարեցնելու հարցով, ապա կողմը այլևս չի կարող արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման դիմումի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում վկայակոչել արբիտրաժային վճիռ կայացնելու՝ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետը պահպանված չլինելը՝ որպես արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման հիմք:

Արբիտրի լիազորությունների դադարման՝ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմք է նաև արբիտրի մահը (ներառյալ դատարանի վճռով մահացած ճանաչվելը) կամ դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը: Հատկանշական է, որ Մոդելային օրենքի 14-րդ հոդվածում նման կոնկրետ նախատեսում արված չէ:

¹⁴⁶ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 72, 9-րդ կետ:

§5. Դատարանի՝ արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցի վերաբերյալ որոշման կայացումը

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալն իրավասու է, իսկ արբիտրաժային համաձայնությունը վիճարկելու դեպքում պարտավոր է առաջնահերթ քննել և որոշում կայացնել իր իրավասության, ներառյալ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ: Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալի իրավասության բացակայության մասին կողմի կատարած հայտարարության մասին արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել որոշում՝ կա՛մ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ, կա՛մ անդրադառնալ դրան վեճն ըստ էության լուծող որոշման մեջ: Եթե արբիտրաժային տրիբունալն իր իրավասության մասին՝ որպես նախնական բնույթ ունեցող հարցի, կայացնում է որոշում, ապա կողմերից յուրաքանչյուրն այդ որոշմանը տեղյակ պահվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հայցով:

Տեսական գրականության մեջ առանձնացվում է արբիտրաժային տրիբունալի իրավասության երկու տեսակ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ իրավասությունը վերաբերում է արբիտրաժի միջոցով վեճի լուծման՝ օրենքով նախատեսված հնարավորությանը, այսինքն՝ այն հարցին, թե արդյոք օրենքով թույլատրվում է տվյալ վեճը լուծել արբիտրաժի միջոցով (վեճի

արբիտրոնակություն¹⁴⁷): Սուբյեկտիվ իրավասությունը վերաբերում է արբիտրների՝ կոնկրետ վեճի լուծման համար լիազորված լինելու հարցին¹⁴⁸: Հետևաբար արբիտրաժային տրիբունալն իր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է քննարկել հետևյալ երկու հարցերը.

- Արդյո՞ք արբիտրաժում քննվող վեճի լուծումն արբիտրաժի միջոցով նախատեսված է կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնագրով:

- Արդյո՞ք այդ վեճի լուծումն արբիտրաժի միջոցով թույլատրված է օրենքով:

Եթե արբիտրը կամ տրիբունալը քննարկումից հետո վերոնշյալ երկու հարցերին տալիս է դրական պատասխան, հաստատում է իր իրավասությունը և սկսում կամ շարունակում իր վարույթում գտնվող վեճի քննարկումը: Թեև տրամաբանական է և կողմերի ժամանակն ու ֆինանսները չվատնելու տեսակետից՝ արդար, որ վերոնշյալ հարցերի պատասխանը բացասական լինելու դեպքում արբիտրը, անմիջապես կայացնելով «նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ» որոշում, դադարեցնի արբիտրաժի գործընթացը, սակայն Օրենքը դա անհրաժեշտ չի համարում՝ թույլ տալով արբիտրին «անդրադառնալ դրան վեճն ըստ էության լուծող որոշման մեջ»¹⁴⁹:

¹⁴⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս սույն ձեռնարկի էջ 35-37:

¹⁴⁸ «Библиотека журнала “Третейский суд”. Международный коммерческий арбитраж», учебник, выпуск 9, 2-е издание, Ответственный редактор Т. А. Лунаева, ст. 168.

¹⁴⁹ Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 170-171:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ արբիտրաժային համաձայնության առկայությունը և վավերականությունը արբիտրաժային տրիբունալի իրավասությանը վերաբերող հարցեր են: Արդյոք արբիտրաժային տրիբունալի իրավասությունը, բացի արբիտրաժային համաձայնության առկայության, վավերականության և դրա կիրառման շրջանակներից, կարող է ներառել նաև այլ հարցեր, թե ոչ, կախված է նրանից, թե ինչպես ենք մեկնաբանում Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «ներառյալ» բառը: Կանադայի Բրիտանական Կոլումբիա նահանգի գերագույն դատարանը, գործերից մեկում ղեկավարվելով Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, քննել էր արբիտրաժային տրիբունալի որոշումը, որով տրիբունալը, մերժելով կողմի առարկությունները, համարել էր, որ իրավասու է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում ընդունելու: Այնուամենայնիվ, այս գործում քննարկման առարկա չէր դարձել այն հարցը, թե կարող է արդյոք կողմը, ղեկավարվելով Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, այս հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար դիմել դատարան: Կանադական դատարանը մեկ այլ գործով համարել է, որ, ղեկավարվելով Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, կարող է քննել արբիտրաժային տրիբունալի այն որոշումը, որով մերժվել են կողմի առարկություններն առ այն, որ արբիտրաժը պետք է իրականացվի Անգլիայում, այլ ոչ թե Կանադայում: Մեկ այլ գործով էլ Հնդկաստանի գերագույն դատարանը համարել է, որ այն հարցը, թե արդյոք արբիտրաժային տրիբունալը ձևավորվել է սահմանված ընթացակարգին համապատասխան,

Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է իրավասության հարց¹⁵⁰:

Օրենքը չի սահմանում, թե որ երկրի իրավունքով պետք է առաջնորդվի դատարանը Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ներկայացված հայցի վերաբերյալ որոշում կայացնելիս: Այնուամենայնիվ, Մոդելային օրենքն (ինչպես նաև Օրենքը) ուղղակիորեն նախատեսում է, թե դատարանը որ երկրի իրավունքով պետք է ղեկավարվի կողմի գործունակության, արբիտրաժային համաձայնության վավերության և վեճի արբիտրելիության վերաբերյալ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման և դրա չեղյալ ճանաչման վերաբերյալ վարույթներում որոշում կայացնելիս, իսկ Մոդելային օրենքի նախապատրաստական աշխատանքներն ամփոփող փաստաթղթերում նշված է, որ Մոդելային օրենքի 34-րդ և 36-րդ հոդվածներով սահմանված կոլիզիոն նորմերը արբիտրաժային տրիբունալները պետք է պահպանեն իրենց իրավասության վերաբերյալ որոշում կայացնելիս¹⁵¹:

Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե արբիտրաժային տրիբունալը կայացրել է որոշում՝ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ, առ այն, որ իրավասու է քննելու վեճը, կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան այդ հարցի մասին որոշում կայացնելու համար: Ի տարբերություն Մոդելային օրենքի՝ Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դիմելու դատարան արբիտրաժային տրիբունալի

¹⁵⁰ UNCITRAL, Digest of Case Law on the Model Law on International Commercial Arbitration, 2012, էջ 77, 8-րդ կետ:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 80, 17-րդ կետ:

իրավասության հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հայցով, եթե արբիտրաժային տրիբունալը իր իրավասության՝ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ կայացնում է որոշում: Այսինքն, ի տարբերություն Մոդելային օրենքի, որի համաձայն՝ կողմը կարող է դիմել դատարան, եթե տրիբունալը որոշել է, որ իրավասու է քննելու վեճը, Օրենքը նման հստակեցում չի անում և դատարան դիմելու նախադրյալ է համարում տրիբունալի՝ իր իրավասության՝ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ որոշում կայացնելը: Նման պայմաններում հարց է առաջանում. իսկ կարո՞ղ է արդյոք կողմը դիմել դատարան արբիտրաժային տրիբունալի իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու հայցով այն դեպքում, երբ տրիբունալը որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ որոշում է կայացրել իր իրավասության բացակայության մասին:

Համաձայն Մոդելային օրենքի նախապատրաստական աշխատանքներն ամփոփող փաստաթղթերի՝ արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության բացակայության վերաբերյալ որոշումը վերջնական է, քանի որ նպատակահարմար չէ նման որոշում կայացրած արբիտրներին պարտադրել շարունակել քննել գործը: Իրենց որոշումներում նման մոտեցում են որդեգրել նաև Հոնկոնգի, Սինգապուրի և Քենիայի դատարանները¹⁵²:

Այնուամենայնիվ, որոշ գործերով այս հարցի վերաբերյալ հակառակ դիրքորոշում է արտահայտվել: Այսպես, կանադական դատարանները համարել են, որ դատարանները Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կարող

¹⁵² Նույն տեղում, էջ 81, 21-րդ կետ:

են որոշում կայացնել արբիտրաժային տրիբունալի իրավասության վերաբերյալ նաև այն դեպքում, երբ տրիբունալը որոշում է կայացրել իր իրավասության բացակայության մասին: Նման մոտեցումը հիմնավորվել է նրանով, որ հակառակ իրավիճակը, մասնավորապես՝ այն դեպքը, երբ կողմը ստիպված պետք է դատական գործընթաց սկսի՝ տրիբունալի իրավասության վիճելի հարցի մասին դատական ակտ այդպես էլ չստանալով, անթույլատրելի է¹⁵³:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ մինչև դատարանի՝ արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցի լուծումը արբիտրաժային տրիբունալը կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել: Անդրադառնալով այս հարցին՝ Բերմուդյան կղզիների վերաքննիչ դատարանը համարել է, որ արբիտրաժային տրիբունալը պետք է սպասի մինչև դատարանի՝ տրիբունալի իրավասության հարցի մասին որոշում կայացնելը, հավելելով, որ այս մոտեցումը կիրառելի է, եթե դատարանն անմիջապես է ձեռնամուխ լինում հարցի լուծմանը¹⁵⁴:

ՔԴՕ-ի 334-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ եթե արբիտրի բացարկի կամ արբիտրաժի իրավասության մասին որոշում ընդունելու դիմումի քննության ընթացքում պարզվում է, որ արբիտրաժը կայացրել է վեճն ըստ էության լուծող վճիռ, ապա դիմումը թողնվում է առանց քննության՝ արբիտրաժում վարույթն ավարտելու հիմքով: Դիմումն առանց քննության թողնելու դեպքում արբիտրաժային վարույթի

¹⁵³ Նույն տեղում, 22-րդ կետ:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 82, 25-րդ կետ:

մասնակիցը, որը ներկայացրել է աջակցության դիմումը, արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու կամ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումի քննության ընթացքում չի զրկվում աջակցության դիմումի հիմքում դրված հանգամանքները վկայակոչելու իրավունքից:

§6. Դատական աջակցությունը ապացույցներ ձեռք բերելիս

Արբիտրաժային տրիբունալը վարույթին առնչվող ցանկացած փաստաթղթի կամ ապացույցի տրամադրումը պարտադրելու մեխանիզմ չունի: Որպեսզի իրավասության նման սահմանափակումը չխոչընդոտի արբիտրաժային տրիբունալին հետազոտել վեճի լուծման համար նշանակություն ունեցող ապացույցները, օրենքով հնարավորություն է վերապահվել դատարաններին աջակցելու արբիտրաժի ընթացքում ապացույցների ձեռքբերմանը¹⁵⁵:

Օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված է ապացույցներ ձեռք բերելիս դատական աջակցության եղանակների ոչ սպառիչ ցանկ, մասնավորապես՝ արբիտրաժային տրիբունալը կամ կողմը արբիտրաժային տրիբունալի համաձայնությամբ կարող է դիմել դատարան տվյալ անձի կողմից.

- արբիտրաժի մեկ կամ մեկից ավելի կողմերին կամ արբիտրաժային տրիբունալին վարույթին առնչվող ցանկացած փաստաթղթի կամ ապացույցի տրամադրումը պարտադրելու կամ

- լսումներին ցանկացած անձի՝ որպես վկայի, ներկայությունն ապահովելու,

- որևէ այլ կերպ ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու միջնորդությամբ:

Ի տարբերություն Օրենքի 27-րդ հոդվածի՝ Մոդելային օրենքի 27-րդ հոդվածը պարզապես նախատեսում է դատարանի՝

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 118, 1-ին կետ:

ապացույցների ձեռքբերմանը աջակցելու հնարավորությունը՝ առանց մանրամասնելու նման աջակցության եղանակները:

Այս առումով հարկ է անդրադառնալ նաև ՀՀ դատական պրակտիկային: Այսպես, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ/10803/02/23 գործով բավարարել է ապացույց ձեռք բերելու հարցում օժանդակելու վերաբերյալ միանձնյա արբիտրի դիմումը և ՀՀ ԱՆ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից պահանջել Դատարանին և արբիտրաժային տրիբունալին ներկայացնելու ծննդյան վկայականի (ծննդի մասին պետական վկայականի) պատճենը:

Օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով դատական աջակցության դիմում կարող են ներկայացնել և՛ արբիտրաժային տրիբունալը, և՛ արբիտրաժի կողմը՝ տրիբունալի համաձայնությամբ: Դելիի բարձր դատարանը գործերից մեկով մերժել է ներկայացված աջակցության դիմումը, քանի որ կողմը նման դիմում ներկայացնելու համար արբիտրաժային տրիբունալի համաձայնությունը ստացած չի եղել¹⁵⁶:

Ինչպես Օրենքը, այնպես էլ Մոդելային օրենքը չեն նախատեսում, թե ինչ ձևով պետք է արտահայտված լինի արբիտրաժային տրիբունալի համաձայնությունը այն դեպքում, երբ աջակցության դիմում է ներկայացնում կողմը: Հոնկոնգի դատարանը գործերից մեկով համարել է, որ արբիտրաժային տրիբունալի համաձայնությունը կարող է բխել նաև գործի հանգամանքներից: Դատարանը հավելել է, որ եթե կողմը միջնորդել է ապահովելու որևէ մեկի ներկայությունը

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 119, 4-րդ կետ:

արբիտրաժի ընթացքում, ապա պարտավոր է ստանալ արբիտրաժային տրիբունալի գրավոր համաձայնությունը¹⁵⁷: Այնուամենայնիվ, ՔԴՕ-ի 333-րդ հոդվածի 8-րդ մասը հիմք է տալիս եզրակացնելու, որ բոլոր դեպքերում ՀՀ դատարաններին համապատասխան դիմում ներկայացնելիս կողմը պարտավոր է կցել արբիտրաժային տրիբունալի գրավոր համաձայնությունը, մասնավորապես՝ նշված իրավանորմը նախատեսում է, որ արբիտրաժային վարույթին առնչվող փաստաթղթերը կամ ապացույցներն արբիտրաժին կամ արբիտրաժային վարույթի կողմերին տրամադրելուն պարտավորեցնելու, ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու վերաբերյալ արբիտրաժային վարույթի մասնակցի ներկայացրած դիմումին կցվում է նման դիմումով դատարան դիմելու համար արբիտրաժային դատարանի համաձայնությունը:

Կարևոր է նաև դատական աջակցության այս կառուցակարգը կիրառել այնպես, որ բացառվի արբիտրաժի կողմի՝ իրավունքի չարաշահման հնարավորությունը: Այսպես, կողմը գործերից մեկով պահանջել է դատարանից հարկադրել արբիտրաժի մյուս կողմին տրամադրել փաստաթղթեր. նման պահանջը արբիտրաժային տրիբունալը նախկինում մերժել էր: Այս իրավիճակում Սինգապուրի բարձր դատարանը մերժել է ներկայացված դիմումը՝ համարելով, որ կողմը չարաշահում է իր իրավունքը¹⁵⁸:

Օրենքի 27-րդ հոդվածի կիրառման ընթացքում առաջացող հարցերից մեկն էլ այն է, թե արդյոք դատարանը

¹⁵⁷ Նույն տեղում:

¹⁵⁸ Նույն տեղում, 5-րդ կետ:

կարող է գնահատել պահաջված ապացույցի անհրաժեշտությունը գործի լուծման համար և վերաբերելիությունը դրան: Անդրադառնալով այս հարցին՝ կանադական դատարանը համարել է, որ արբիտրաժին աջակցության շրջանակում դատարանը նման հարց քննարկել չի կարող, քանի որ ապացույց պահանջելու դիմումով՝ դատարան կարող է դիմել արբիտրաժային տրիբունալը կամ կողմը, եթե առկա է տրիբունալի համաձայնությունը, իսկ այս վարույթի շրջանակում դատարանի առաքելությունը պարզապես արբիտրաժային տրիբունալին աջակցելն է ապացույցների ձեռքբերման հարցում¹⁵⁹:

Այն երկրներում, որտեղ նախատեսված է ապացույցների նախնական ապահովման ինստիտուտը, ակտիվորեն քննարկվում է այն հարցը, թե կարող է արդյոք ապացույցի ձեռքբերման միջնորդություն ներկայացվել մինչև արբիտրաժը սկսվելը¹⁶⁰: Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ նշենք, որ ՔԴՕ-ի 65-րդ հոդվածի 1-ին մասը ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորություն է նախատեսում միայն դատավարության ընթացքում, իսկ նման միջնորդություն ներկայացնելու իրավունք է վերապահում գործին մասնակցող անձին, այլ կերպ ասած, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ ապացույցի նախնական ապահովման ինստիտուտ: Ավելին, ի տարբերություն Մոդելային օրենքի, որը դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակումներ չի նախատեսում, Օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ դիմումը

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 120, 6-րդ կետ:

¹⁶⁰ Նույն տեղում, 7-րդ կետ:

կարող է ներկայացվել արբիտրաժային վարույթի ցանկացած փուլում, իսկ, Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ պատասխանողի՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը ստանալու օրը:

ԳԼՈՒԽ 2. ԱՐՔԻՏՐԱԺԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

ՔԴՕ-ի 332-րդ հոդվածի 1-ին մասն ընդհանուր կերպով նախատեսում է, որ արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմում կարող է ներկայացնել արբիտրաժը¹⁶¹ կամ արբիտրաժային վարույթի մասնակիցը, իսկ կոնկրետ աջակցության դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ(ներ)ը սահմանվում է/են Օրենքով: Մասնավորապես՝ Օրենքի 9-րդ, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 14-րդ հոդվածի 1-ին մասով և 16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված աջակցության դիմում դատարանին կարող է ներկայացնել արբիտրաժի կողմը, 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված աջակցության դիմում՝ այն կողմը, որ բացարկ է հայտնել արբիտրին, իսկ 27-րդ հոդվածով նախատեսված դիմում՝ և՛ արբիտրաժային տրիբունալը, և՛ կողմը՝ արբիտրաժային տրիբունալի համաձայնությամբ:

Արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմումները, որպես ընդհանուր կանոն, ներկայացվում են արբիտրաժի գտնվելու վայրի դատարանին՝ բացառությամբ

¹⁶¹ Թեև այս հոդվածում որպես դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ նշված է արբիտրաժը, այնուամենայնիվ, ինչպես հիմնավորել ենք սույն աշխատանքի 3-րդ էջում, Օրենքի 2-րդ հոդվածից հետևում է, որ արբիտրաժը գործընթաց է, որի ընթացքում արբիտրաժային տրիբունալն իրականացնում է քաղաքացիական իրավունքների պաշտպանություն: Հետևաբար աջակցության դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտը ոչ թե արբիտրաժն է, այլ արբիտրաժային տրիբունալը:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցի մասին որոշում կայացնելու վերաբերյալ աջակցության դիմումի, որը ներկայացվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

Ինչ վերաբերում է ապացույցներ ձեռք բերելու համար ներկայացված դատական աջակցության դիմումին, ապա Օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված է, որ այն ներկայացվում է արբիտրաժի գտնվելու վայրի կամ իրավասու ցանկացած այլ դատարանի: Արբիտրաժի կողմին կամ կողմերին թույլատրված է նաև դիմել իրավասու ցանկացած այլ դատարան, քանի որ պարզ է, որ վարույթին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը կամ ապացույցները կարող են նաև գտնվել կամ տեղակայված լինել այլ վայրում կամ վայրերում¹⁶²:

ՔԴՕ-ի 332-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմումը դատարանին կարող է ներկայացվել մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ կարող էր իմանալ դիմում ներկայացնելու հիմք հանդիսացող հանգամանքների մասին, եթե այլ ժամկետ սահմանված չէ Օրենքով կամ արբիտրաժային համաձայնությամբ: Այլ ժամկետներ սահմանված են Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դիմումի ներկայացման համար (30-օրյա ժամկետ, որը հաշվարկվում է բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո) և Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով

¹⁶² Աիդա Ավանեսյան, Արբիտրաժ: Ներպետական և միջազգային, Էդիթ Պրինտ, Երևան, 2021, էջ 193:

նախատեսված դիմումի ներկայացման համար (30-օրյա ժամկետ, որը հաշվարկվում է արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության՝ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ կայացրած որոշման մասին տեղեկացում ստանալու պահից):

ՔԴՕ-ի 333-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով սահմանված են այն պահանջները, որոնք ընդհանուր են արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու բոլոր դիմումների համար: Նույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ մասերով նախատեսված են առանձնահատուկ պահանջներ՝ կախված խնդրարկվող դատական աջակցության ձևից:

Դիմումը քննվում է դատական նիստում, և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- Հայցի ապահովման միջոցներ կիրառելու, արբիտրաժային վարույթին առնչվող փաստաթղթերը կամ ապացույցները արբիտրաժին կամ արբիտրաժային վարույթի կողմերին տրամադրելուն պարտավորեցնելու, ապացույցներ ձեռք բերելու հարցում օժանդակելու դիմումները քննվում են առանց դատական նիստ հրավիրելու, և դրա վերաբերյալ որոշում է կայացվում ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը:

- Արբիտր նշանակելու դիմումը քննվում է առանց դատական նիստ հրավիրելու և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում:

Դատարանը դիմումի քննությամբ կայացնում է որոշում, որը պետք է բավարարի ՔԴՕ-ի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: ՔԴՕ 335-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

են դատարանի որոշման մեջ նշման ենթակա այն տվյալները, որոնք ընդհանուր են դատական աջակցության բոլոր ձևերի համար ներկայացված դիմումների քննությամբ կայացվելիք որոշումների համար: Միայն արբիտրի նշանակման մասին որոշում ընդունելու դիմումը բավարարող որոշման մեջ, ի հավելումն ՔԴՕ-ի 335-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տվյալների, պետք է տեղեկություն տրվի նշանակված արբիտրի վերաբերյալ:

Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար ՔԴՕ-ով սահմանված կարգով: Դիմումի քննությամբ կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ: Դատարանի՝ կատարում ենթադրող որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով տրվում է կատարողական թերթ:

**ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

ք. Երևան, Արշակունյաց 51, 47 տարածք

www.amca.am